

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ - ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

# ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ

N<sup>o</sup> 24-25

2020

ԵՐԵՎԱՆ 2020

Գլխավոր խմբագիր՝ Արմեն ՓԱՇԱՅԱՆ  
Գլխ. խմբագրի տեղակալ՝ Համլետ ԴԱՎԹՅԱՆ

Խմբագրական խորհուրդ՝

Արմեն ՓԱՇԱՅԱՆ - ԳԹԿ տնօրենի պաշտոնակատար  
Կարո ՆԱՍԻԲՅԱՆ - ԳԹԿ փոխտնօրեն  
Արսեն ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ - ԳԹԿ փոխտնօրեն  
Ալեքսան ԵՍԱՅԱՆ - ԳԹԿ թեստաբանության բաժնի պետ  
Էդվարդ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ - ԳԹԿ քննությունների կազմակերպման բաժնի  
պետ  
Արմեն ՂԱԶԱՆՉՅԱՆ – ԳԹԿ համակարգչային և վերլուծական  
աշխատանքների բաժնի պետ  
Լիլիթ ՍԱՖԱՐՅԱՆ - ԳԹԿ իրավաբանական բաժնի պետ  
Համլետ ԴԱՎԹՅԱՆ - ԳԹԿ հրատարակչական բաժնի պետ  
Աշոտ ՂԱԶԱՐՈՍՅԱՆ - ԳԹԿ հրատարակչական բաժնի գլխավոր  
մասնագետ

Խմբագրական կազմ՝

Լիանա ՎԱՐԴԱՆՅԱՆ  
Դավիթ ՂԱԶԱՐՅԱՆ

Խմբագրության հասցեն՝

Երևան, Այգեստան 9/4  
Հեռ. (+374 10) 55-32-65  
E-mail: gtk2005@web.am  
www.atc.am

# ՎԵՐԼՈՒԾՈՒ - ԹՅՈՒՆ



---

Վերլուծությունը կատարել է ԳԹԿ համակարգչային և վերլուծական  
աշխատանքների բաժինը

Արմեն ՂԱԶԱՆՉՅԱՆ  
բաժնի պետ

Շուշանիկ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ  
գլխավոր մասնագետ

Նարե ՍԱՐԳՍՅԱՆ  
առաջատար մասնագետ

Գոհար ՉԱԼՈՒՄՅԱՆ  
առաջատար մասնագետ

Մարիամ ԳՐԻԳՈՐՅԱՆ  
առաջին կարգի մասնագետ

## **2019 թ. միասնական քննությունների և բուհերի ընդունելության մրցույթի արդյունքների վերլուծություն**

### **Նախաբան**

Գնահատման և թեստավորման կենտրոնի իրականացրած սույն  
վերլուծությունը վերաբերում է 2019 թ. հունիս-հուլիս ամիսներին անցկաց-  
ված միասնական քննությունների և բուհերի ընդունելության մրցույթի արդ-  
յունքներին: Այն նախատեսված է հանրակրթության ոլորտի մասնագետների և կր-  
թության խնդիրներով հետաքրքրվող անհատների լայն շրջանակի համար:

2019 թ. միասնական քննությունների և բուհերի ընդունելության մրցույթի արդյունքների ամփոփիչ վերլուծությունն<sup>1</sup> իրականացվել է մի քանի ուղղություններով:

- Վերլուծվել են միասնական և կենտրոնացված քննությունների ընդհանուր արդյունքները և համեմատվել նախորդ տարիների քննությունների արդյունքների հետ:
- Հետազոտվել են առարկայական թեստերը և թեստային առաջադրանքներն ըստ կառուցվածքի և որակական բնութագրիչների: Թեստերը բարելավելու նպատակով վերլուծության այդ մասը տրամադրվել է առարկայական մասնագետներին:
- Վերլուծության են ենթարկվել միասնական քննությունների արդյունքներն ըստ ՀՀ վարչատարածքային միավորների, բնակավայրերի տիպերի (քաղաք, գյուղ), հանրակրթական ուսումնական հաստատությունների տեսակների և սեռերի:
- Անդրադարձ է կատարվել 2019 թ. բուհերի ընդունելության մրցույթին, ներկայացվել են տեղեկություններ բուհերի ամենապահանջված մասնագիտությունների վերաբերյալ:
- Առանձին անդրադարձ է կատարվել սահմանամերձ և բարձր լեռնային գյուղերից հայտագրված և ընդունված դիմորդների՝ միասնական քննությունների և բուհերի ընդունելության մրցույթի արդյունքներին:
  - Երևանի քաղաքապետին և մարզպետներին են տրամադրվել վիճակագրական տվյալներ միասնական քննությունների արդյունքների և բուհերի ընդունելության մրցույթի վերաբերյալ տվյալ վարչատարածքային միավորի կտրվածքով:
  - Վերլուծության առաջին մասը վերաբերում է միասնական քննություններին, երկրորդը՝ բուհերի ընդունելության մրցույթին:

<sup>1</sup> Վերլուծության մեջ ներառված չեն զուտ ներբուհական քննություններով ընդունելություն կազմակերպող բուհերին (Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա, Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ և այլն) վերաբերող տեղեկությունները: Միասնական և կենտրոնացված քննությունների, ինչպես նաև բուհերի ընդունելության մրցույթին մասնակցող դիմորդների հաշվառման բազաներում ներբուհական քննություններ պահանջող մասնագիտություններին վերաբերող տվյալներ կան միայն բուհի ընդունելության դիմում-հայտի մասնագիտությունների մասում զուտ ներբուհական քննություն պահանջող որևէ մասնագիտություն նշած և այլ մասնագիտությունների համար առնվազն մեկ առարկայից միասնական քննություն հայտագրած դիմորդների վերաբերյալ:

## I. ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԻԱՄՆԱԿԱՆ

#### ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ բուհերի ընդունելության քննություններն անցկացվում են երկու փուլով՝ հիմնական և լրացուցիչ: 2019 թ. հիմնական և լրացուցիչ փուլերի միասնական և ավարտական քննությունների ժամանակացույցը ներկայացված է սույն վերլուծության «Հավելվածներ» բաժնում (հավելված 1):

2019 թ. հունիսի 4-25-ը և հուլիսի 2-8-ը ՀՀ տարածքում տեղաբաշխված 33 և Արցախի Հանրապետության 6 քննական կենտրոններում միասնական քննություններ են անցկացվել (հավելված 2) «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա», «Ռուսաց լեզու», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն, իսպաներեն, իտալերեն, պարսկերեն), «Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն» առարկաներից, որոնց մասնակցելու համար հայտագրվել են ՀՀ, ԱՀ և արտերկրի 11046 դիմորդներ (ՀՀ-ում՝ 10220, ԱՀ-ում՝ 826): ՀՀ-ում հայտագրվածներից 10147-ը եղել են տեղացիներ, 55-ը՝ Վրաստանի, 14-ը՝ Ռուսաստանի, 2-ը՝ Ղազախստանի, 1-ը՝ Ուկրաինայի և 1-ը՝ Սիրիայի քաղաքացիներ:

Միասնական քննությունների հիմնական փուլին մասնակցելու համար հայտագրվել են ՀՀ և ԱՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 2019 թ. և նախորդ տարիների շրջանավարտները՝ 10391 դիմորդ:

Լրացուցիչ փուլին մասնակցելու համար հայտագրվել են նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների 2018-2019 ուսումնական տարվա շրջանավարտները, պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից 2017-2019 թթ. գորացրվածները, արտերկրի շրջանավարտները, միասնական քննությունների հիմնական փուլին հայտագրված և քննությանը հարգելի պատճառով չմասնակցած, ինչպես նաև հիվանդության պատճառով հիմնական փուլի միասնական քննությունն ընդհատած և լրացուցիչ փուլին մասնակցելու թույլտվություն ստացած դիմորդները: Այս փուլի քննություններին մասնակցության հայտ է ներկայացրել 911 դիմորդ (ՀՀ-ից՝ 786, արտերկրից՝ 73, ԱՀ-ից՝ 52), որոնցից 167-ը հայտագրված են եղել նաև հիմնական փուլում: Վերջինները հիմնական փուլում հարգելի պատճառներով քննության չեն ներկայացել և տվյալ քննության համար կրկին հայտագրվել են լրացուցիչ փուլում: Այդ փուլում հայտագրվածների մի մասը հիմնական փուլի քննություններին մասնակցելուց

հետո հայտագրվել է այլ առարկայի քննություն հանձնելու համար, մի մասն էլ հայտագրված չի եղել հիմնական փուլում: Այդ պատճառով երկու փուլերի դիմումների ընդհանուր թիվը (11302) մեծ է հայտագրված անձանց թվից (10391): Լրացուցիչ փուլում հայտագրվածներից 744-ը եղել են 2019 թ. միասնական քննություններին մասնակցելու համար առաջին անգամ հայտագրվածները:

Բոլոր քննություններն անցկացվել են առարկայական «Շտեմարանների» առաջադրանքների հիման վրա կազմված թեստերի 4-ական տարբերակներով, հիմնական փուլում՝ 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ, լրացուցիչ փուլում՝ 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ տարբերակներով: Թեստերի հեղինակներին հնարավորություն է տրվել որոշ առաջադրանքներում կատարելու բառերի կամ թվերի փոփոխություն և ներդնելու «Շտեմարանների» առաջադրանքների հիման վրա կազմված նոր առաջադրանքներ:

Օտար լեզվի քննության մասնակիցներն ընտրել են անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, իսպաներեն, իտալերեն կամ պարսկերեն լեզուներից որևէ մեկը:

2019 թ. միասնական քննությունների հիմնական և լրացուցիչ փուլերին մասնակցելու համար հայտագրված դիմորդներից 10769-ը (97.5%) եղել են 2018-2019 ուսումնական տարվա (9894-ը՝ ՀՀ-ից, 810-ը՝ Արցախից, 51-ը՝ Վրաստանից, 12-ը՝ Ռուսաստանից, 1-ը՝ Ուկրաինայից, 1-ը՝ Ղազախստանից), իսկ 277-ը (2.5%)՝ նախորդ տարիների (1996-2018 թթ.) շրջանավարտներ (253-ը՝ ՀՀ-ից, 16-ը՝ Արցախից, 2-ը՝ Ռուսաստանից, 4-ը՝ Վրաստանից, 1-ը՝ Ղազախստանից, 1-ը՝ Սիրիայից):

Միասնական քննությունների և բուհերի ընդունելության մրցույթի ընթացքը պարբերաբար լուսաբանվել է լրատվամիջոցներում (հավելված 3):

### *1.1 ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ 2019 թ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ*

Աղյուսակ 1-ում ներկայացված են 2019 թ. միասնական քննությունների հիմնական և լրացուցիչ փուլերին հայտագրված, քննության ներկայացած, բացակայած, հիվանդության պատճառով քննությունն ընդհատած և քննության անցկացման կարգը խախտելու պատճառով քննությունից հեռացված դիմորդների թվերը:

Սղյուսակ 1. Դիմորդների մասնակցությունը 2019 թ. պետական միասնական քննություններին

| Քննական առարկաները              | Հայտագրված դիմորդների թիվը |                |           | Քննությանը ներկայացած դիմորդների թիվը |                |           | Բացակա դիմորդների թիվը |                |           | Հիվանդության պատճառով քննությունն ընդհատած դիմորդների թիվը |                |           | Քննությունից հեռացված դիմորդների թիվը |                |           |
|---------------------------------|----------------------------|----------------|-----------|---------------------------------------|----------------|-----------|------------------------|----------------|-----------|--|----------------|-----------|---------------------------------------|----------------|-----------|
|                                 | Հիմնական վճար              | Լրացուցիչ վճար | Շեղումներ | Հիմնական վճար                         | Լրացուցիչ վճար | Շեղումներ | Հիմնական վճար          | Լրացուցիչ վճար | Շեղումներ | Հիմնական վճար  | Լրացուցիչ վճար | Շեղումներ | Հիմնական վճար                         | Լրացուցիչ վճար | Շեղումներ |
| Հայրց լեզու և հայ գրականություն | 5535                       | 343            | 5878      | 5370                                  | 331            | 5701      | 165                    | 11             | 176       |  |                |           |                                       | 1              | 1         |
| Մաթեմատիկա                      | 4687                       | 330            | 5017      | 4546                                  | 291            | 4837      | 138                    | 39             | 177       | 1  |                | 1         | 2                                     |                | 2         |
| Անգլերեն                        | 4709                       | 302            | 5011      | 4536                                  | 285            | 4821      | 168                    | 17             | 185       |  |                |           | 5                                     |                | 5         |
| Ֆիզիկա                          | 1447                       | 103            | 1550      | 1405                                  | 87             | 1492      | 40                     | 16             | 56        | 1  |                | 1         | 1                                     |                | 1         |
| Հայրց պատմություն               | 1449                       | 98             | 1517      | 1362                                  | 81             | 1443      | 53                     | 16             | 69        | 1  |                | 1         | 3                                     | 1              | 4         |
| Կենսաբանություն                 | 1233                       | 123            | 1356      | 1207                                  | 117            | 1324      | 24                     | 5              | 29        | 1  |                | 1         | 1                                     | 1              | 2         |
| Քիմիա                           | 1020                       | 125            | 1145      | 986                                   | 114            | 1100      | 31                     | 11             | 42        |  |                |           | 3                                     |                | 3         |
| Ռուսաց լեզու                    | 449                        | 59             | 508       | 401                                   | 55             | 456       | 47                     | 4              | 51        |  |                |           |                                       | 1              | 1         |
| Աշխարհագրություն                | 232                        | 20             | 252       | 229                                   | 15             | 244       | 2                      | 5              | 7         | 1  |                | 1         |                                       |                |           |
| Գերմաներեն                      | 121                        | 9              | 130       | 117                                   | 9              | 126       | 4                      |                | 4         |  |                |           |                                       |                |           |
| Ֆրանսերեն                       | 87                         | 4              | 91        | 84                                    | 4              | 88        | 3                      |                | 3         |  |                |           |                                       |                |           |
| Համաշխարհային պատմություն       | 45                         | 3              | 48        | 40                                    | 1              | 41        | 5                      | 2              | 7         |  |                |           |                                       |                |           |
| Պարսկերեն                       | 3                          | 2              | 5         | 3                                     | 2              | 5         |                        |                |           |  |                |           |                                       |                |           |
| Իսպաներեն                       | 4                          |                | 4         | 4                                     |                | 4         |                        |                |           |  |                |           |                                       |                |           |
| Իտալերեն                        | 1                          |                | 1         |                                       |                | 1         |                        |                |           |  |                |           |                                       |                |           |


Հայտագրվածների և քննությանը ներկայացածների թվերում ընդգրկված են նաև հիմնական փուլի քննություններին հայտագրված և այս կամ այն պատճառով չներկայացած այն դիմորդները, որոնք հայտագրվել և մասնակցել են լրացուցիչ փուլի քննություններին:

Միասնական քննությունների հիմնական և լրացուցիչ փուլերից բացակայածների ընդհանուր թիվը հիմնականում 5%-ից ցածր է եղել, բացառությամբ ռուսաց լեզվի և համաշխարհային պատմության քննությունների, որոնցից բացակայել է հայտագրված դիմորդների, համապատասխանաբար, 10 և 14.6 տոկոսը: Բոլոր քննությունների հանրագումարում բացակայել է դիմորդների 3.6%-ը, հիվանդության պատճառով քննությունն ընդհատել է 5 դիմորդ (հիմնական փուլում), 19 դիմորդ հեռացվել է քննությունից (15-ը՝ հիմնական, 4-ը՝ լրացուցիչ փուլում):



1.2 ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՅՏԱԳՐՎԱԾ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԹՎԵՐԸ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ

Դիագրամ 1. Միասնական քննություններին հայտագրվածների թվերը ըստ տարիների



2011 թ. դիմորդների ընդհանուր թիվը մոտ 7 անգամ պակաս է 2010 և 2012 թթ. դիմորդների թվից, քանի որ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունները, 12-ամյա հանրակրթական համակարգի անցմամբ պայմանավորված, 2010-2011 ուսումնական տարում շրջանավարտ չեն ունեցել:

Դիագրամ 1-ում ըստ տարիների ներկայացված են 2008-2019 թթ. միասնական քննություններին մասնակցության հայտ ներկայացրած դիմորդների թվերը: Դիագրամից երևում է, որ հայտագրվածների թվի նվազման միտում եղել է՝ սկսած 2009 թվականից: Ընդհանուր նվազման ֆոնին 2014-2016 թթ. այդ միտումն աստիճանաբար մեղմացել է: 12-ամյա հանրակրթական համակարգի անցմամբ պայմանավորված՝ 2017 և 2019 թթ. համեմատությամբ 2018 թ. հայտագրվածների թիվը պակաս է եղել գրեթե կրկնակի: 2019 թ. հայտագրվածների թիվը 650-ով ավելացել է 2017-ի համեմատությամբ:

Միասնական քննությունների մասնակիցների թվերը և միջին միավորներն ըստ տարիների ներկայացված են հավելված 4-ում:

## 2. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2019 Թ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Աղյուսակ 2-ում ներկայացված են 2019 թ. միասնական քննությունների մասնակիցների թվերը<sup>2</sup>, առավելագույն, նվազագույն և միջին<sup>3</sup> միավորները, ստանդարտ շեղումները<sup>4</sup>, ինչպես նաև դրական միավորի շեմը չհաղթահարածների և 20 միավոր հավաքածների թվերը և տոկոսները:

### 2.1 ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

**Աղյուսակ 2. 2019 թ. միասնական քննությունների ընդհանուր արդյունքները**

| Ֆինանսական առարկաները          | Հիմնական և լրացուցիչ փուլերը միասին |               |                                     |        |                       |        | Հիմնական փուլ     |               |                      |                    |                                     |        |                       |        | Լրացուցիչ փուլ    |               |                      |                    |                                     |        |                       |        |
|--------------------------------|-------------------------------------|---------------|-------------------------------------|--------|-----------------------|--------|-------------------|---------------|----------------------|--------------------|-------------------------------------|--------|-----------------------|--------|-------------------|---------------|----------------------|--------------------|-------------------------------------|--------|-----------------------|--------|
|                                | Մասնակիցների թիվը                   | Միջին միավորը | Դրական միավորի շեմը չհաղթահարածների |        | 20 միավոր հավաքածների |        | Մասնակիցների թիվը | Միջին միավորը | Առավելագույն միավորը | Նվազագույն միավորը | Դրական միավորի շեմը չհաղթահարածների |        | 20 միավոր հավաքածների |        | Մասնակիցների թիվը | Միջին միավորը | Առավելագույն միավորը | Նվազագույն միավորը | Դրական միավորի շեմը չհաղթահարածների |        | 20 միավոր հավաքածների |        |
|                                |                                     |               | թիվը                                | տոկոսը | թիվը                  | տոկոսը |                   |               |                      |                    | թիվը                                | տոկոսը | թիվը                  | տոկոսը |                   |               |                      |                    | թիվը                                | տոկոսը | թիվը                  | տոկոսը |
| Հայր լեզու և հայ գրականություն | 5701                                | 11.4          | 1161                                | 20.4   | 10                    | 0.2    | 5370              | 11.6          | 20                   | 1.75               | 1043                                | 19.4   | 9                     | 0.2    | 331               | 9.5           | 20                   | 2.25               | 118                                 | 35.6   | 1                     | 0.3    |
| Մաթեմատիկա                     | 4837                                | 12            | 547                                 | 11.3   | 33                    | 0.7    | 4546              | 12.2          | 20                   | 1                  | 449                                 | 9.9    | 32                    | 0.7    | 291               | 9.1           | 20                   | 0.75               | 98                                  | 33.7   | 1                     | 0.3    |
| Անգլերեն                       | 4821                                | 13.8          | 532                                 | 11     | 56                    | 1.2    | 4536              | 14            | 20                   | 2.5                | 446                                 | 9.8    | 55                    | 1.2    | 285               | 11            | 20                   | 2.25               | 86                                  | 30.2   | 1                     | 0.4    |
| Ֆրիզիկա                        | 1492                                | 11.5          | 370                                 | 24.8   | 24                    | 1.6    | 1405              | 11.8          | 20                   | 1                  | 315                                 | 22.4   | 24                    | 1.7    | 87                | 6.5           | 16.25                | 1.5                | 55                                  | 63.2   |                       |        |
| Հայրց պատմություն              | 1443                                | 11.5          | 326                                 | 22.6   | 22                    | 1.5    | 1362              | 11.7          | 20                   | 2                  | 291                                 | 21.4   | 22                    | 1.6    | 81                | 9.3           | 18.25                | 2                  | 35                                  | 43.2   |                       |        |
| Գենտաբանություն                | 1324                                | 13            | 236                                 | 17.8   | 13                    | 1      | 1207              | 13.4          | 20                   | 1.5                | 182                                 | 15.1   | 13                    | 1.1    | 117               | 9.1           | 18.5                 | 1.5                | 54                                  | 46.2   |                       |        |
| Քիմիա                          | 1100                                | 12.2          | 217                                 | 19.7   | 1                     | 0.1    | 986               | 12.4          | 20                   | 1.25               | 179                                 | 18.2   | 1                     | 0.1    | 114               | 10.1          | 19                   | 2                  | 38                                  | 33.3   |                       |        |
| Ռուսաց լեզու                   | 456                                 | 11.1          | 95                                  | 20.8   | 1                     | 0.2    | 401               | 11.3          | 20                   | 2.75               | 74                                  | 18.5   | 1                     | 0.2    | 55                | 9.2           | 16.5                 | 3                  | 21                                  | 38.2   |                       |        |
| Աշխարհագրություն               | 244                                 | 13.5          | 18                                  | 7.4    | 6                     | 2.5    | 229               | 13.7          | 20                   | 3.5                | 15                                  | 6.6    | 6                     | 2.6    | 15                | 10.3          | 17.75                | 5                  | 3                                   | 20.0   |                       |        |
| Գերմաներեն                     | 126                                 | 13.9          | 15                                  | 11.9   |                       |        | 117               | 13.8          | 19.75                | 3.25               | 13                                  | 11.1   |                       |        | 9                 | 14.3          | 19.75                | 5.25               | 2                                   | 22.2   |                       |        |
| Ֆրանսերեն                      | 88                                  | 15.1          | 7                                   | 8      | 2                     | 2.3    | 84                | 15.2          | 20                   | 5.5                | 7                                   | 8.3    | 2                     | 2.4    | 4                 | 13.3          | 18.25                | 9                  |                                     |        |                       |        |
| Հանաշխարհային պատմություն      | 41                                  | 13.6          | 5                                   | 12.2   | 2                     | 4.9    | 40                | 13.8          | 20                   | 2                  | 4                                   | 10     | 2                     | 5      | 1                 | 6.75          | 6.75                 | 6.75               | 1                                   | 100    |                       |        |
| Պարսկերեն                      | 5                                   | 12            |                                     |        |                       |        | 3                 | 10.3          | 11                   | 9.75               |                                     |        |                       |        | 2                 | 14.6          | 15.5                 | 13.75              |                                     |        |                       |        |
| Բաղարեն                        | 4                                   | 13.3          |                                     |        |                       |        | 4                 | 13.3          | 18.25                | 9.25               |                                     |        |                       |        |                   |               |                      |                    |                                     |        |                       |        |
| Բուսերեն                       | 1                                   | 18.5          |                                     |        |                       |        | 1                 | 18.5          | 18.5                 | 18.5               |                                     |        |                       |        |                   |               |                      |                    |                                     |        |                       |        |

<sup>2</sup> Մասնակիցների թվից կախված է միջին միավորի հուսալիությունը. մասնակիցների թվի մեծ լինելը նպաստում է ստանդարտ շեղման նվազմանը, որի արդյունքում միջին միավորը դառնում է հուսալի:  
<sup>3</sup> Միջին միավորը բնութագրում է քննություն հանձնողների պատրաստվածության միջին մակարդակը:  
<sup>4</sup> Ստանդարտ շեղումը միջին միավորի հուսալիության չափման միջոց է, որը ցույց է տալիս, թե ստացված արդյունքները որքանով են շեղված միջին միավորից: Ոչ մեծ ստանդարտ շեղումը վկայում է միջին միավորի շուրջը արդյունքների կուտակվածության մասին:

**2.2. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ**

Աղյուսակ 3-ում ներկայացված է 2019 թ. միասնական քննությունների արդյունքներին վերաբերող և դրական լուծում ստացած բողոք-դիմումների քանակը:

**Աղյուսակ 3. 2019 թ. միասնական քննությունների արդյունքներին վերաբերող բողոք-դիմումների քանակը**

| Քննական առարկաները                     | Բողոք-դիմումների ընդհանուր թիվը | Դրական լուծում ստացած բողոք-դիմումների |             |
|--|---------------------------------|--|-------------|
|  |                                 | թիվը                                   | տոկոսը      |
| <b>Հայոց լեզու և հայ գրականություն</b> | 190                             | 9                                      | 4.7         |
| <b>Քիմիա</b>                           | 101                             | 8                                      | 7.9         |
| <b>Կենսաբանություն</b>                 | 44                              | 10                                     | 22.7        |
| <b>Ֆիզիկա</b>                          | 43                              | 24                                     | 55.8        |
| <b>Մաթեմատիկա</b>                      | 36                              | 12                                     | 33.3        |
| <b>Անգլերեն</b>                        | 33                              | 16                                     | 48.5        |
| <b>Հայոց պատմություն</b>               | 10                              | 1                                      | 10          |
| <b>Ռուսաց լեզու</b>                    | 8                               | 6                                      | 75          |
| <b>Համաշխարհային պատմություն</b>       | 6                               |  |             |
| <b>Գերմաներեն</b>                      | 4                               | 1                                      | 25          |
| <b>Աշխարհագրություն</b>                | 1                               |  |             |
| <b>Ընդամենը</b>                        | <b>476</b>                      | <b>87</b>                              | <b>18.3</b> |

<sup>5</sup> Համաձայն «ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի», միասնական քննության բողոք-դիմումները բողոքարկման ժամկետի ավարտից հետո 24 ժամվա ընթացքում ներկայացվում են ԳԹԿ: Տեսակավորված բողոք-դիմումները ներկայացվում բողոքարկման հանձնաժողովին: Դրանք հանգամանորեն ուսումնասիրելուց հետո բողոքարկման հանձնաժողովի կողմից կարող է որոշում ընդունվել քննության արդյունքի պահպանման կամ փոփոխության վերաբերյալ: Դրական լուծում ստացած բողոք-դիմումների և բողոքարկման հանձնաժողովի կողմից կազմված արձանագրության հիման վրա միասնական քննությունների էլեկտրոնային բազայում կատարվում է համապատասխան փոփոխություն: Հիմնական փուլի բողոքարկման արդյունքները հրապարակվում են վերջին քննության բողոքարկման ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում, լրացուցիչ փուլինը՝ վերջին քննության ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում:

Աղյուսակից երևում է, որ քննությունների արդյունքների հետ անհամաձայնությանը վերաբերող բողոք-դիմումների մի մասին բողոքարկման հանձնաժողովի կողմից դրական լուծում է տրվել: Ներկայացված 476 դիմումներից դրական լուծում են ստացել 87-ը (18.3%-ը):

**3. 2019 թ. ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԻՆ  
ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԸՍՏ ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ  
ՄԻԱՎՈՐՆԵՐԻ, ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԻՊԵՐԻ,  
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԸՍՏ  
ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՍԵՌԵՐԻ**

*3.1. ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԸՍՏ ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ  
ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՅԼ  
ԵՐԿՐՆԵՐԻՑ ՄԱՄՆԱԿՑԱԾՆԵՐԻ*

Աղյուսակ 4-ում ներկայացված են ՀՀ վարչատարածքային միավորներից, ինչպես նաև այլ երկրներից 2019 թ. միասնական քննություններին մասնակցած դիմորդների թվերը և միջին միավորները: Կրկնակի շրջանակներում ներկայացած են արձանագրված ամենաբարձր միջին միավորներն ըստ առարկաների: Մգացված են տվյալ առարկայի քննության ընդհանուր միջին միավորից բարձր ցուցանիշների վանդակները: Եթե քննությանը մասնակցել է մեկ դիմորդ, նրա ցուցանիշը չի համեմատվել միջին միավորի հետ:



Աղյուսակ 4-ից երևում է, որ միասնական քննություններից ըստ ՀՀ վարչատարածքային միավորների արձանագրված ամենաբարձր միջին միավորներ են հավաքել առավելապես Սյունիքի մարզը ներկայացրած դիմորդները:

Ըստ քննական առարկաների դիտարկված ամենաբարձր ցուցանիշների մի մասը, մասնակիցների փոքր թվով պայմանավորված, վիճակագրորեն նշանակալի չեն:

**Աղյուսակ 5. ՀՀ-ից և այլ երկրներից միասնական քննություններին մասնակցած դիմորդների թվերը և միջին միավորները\***

| Քննական առարկաները        | Մասնակիցների ընդհանուր թիվը | Ընդհանուր միջին միավորը | ՀՀ                             |               | ԱՀ                |               | Վրաստան           |               | Ռուսաստան         |               | Ղազախստան         |               | Սլովիա            |               | Ուկրաինա          |               |
|---------------------------|-----------------------------|-------------------------|--------------------------------|---------------|-------------------|---------------|-------------------|---------------|-------------------|---------------|-------------------|---------------|-------------------|---------------|-------------------|---------------|
|                           |                             |                         | Մասնակիցների թիվը              | Միջին միավորը | Մասնակիցների թիվը | Միջին միավորը | Մասնակիցների թիվը | Միջին միավորը | Մասնակիցների թիվը | Միջին միավորը | Մասնակիցների թիվը | Միջին միավորը | Մասնակիցների թիվը | Միջին միավորը | Մասնակիցների թիվը | Միջին միավորը |
|                           |                             |                         | Հայոց լեզու և հայ գրականության | 5701          | 11.4              | 5171          | 11.6              | 507           | 10                | 16            | 7.9               | 6             | 6.7               | 1             | 8.5               |               |
| Սարևնատիկա                | 4837                        | 12                      | 4519                           | 12.1          | 285               | 11.1          | 28                | 8.8           | 3                 | 5.5           |                   |               | 1                 | 12.5          | 1                 | 7             |
| Անգլերեն                  | 4821                        | 13.8                    | 4565                           | 13.8          | 231               | 14.1          | 19                | 8.4           | 4                 | 8.3           | 1                 | 11.5          | 1                 | 16            |                   |               |
| Տիբեթական                 | 1492                        | 11.5                    | 1353                           | 11.7          | 124               | 9             | 15                | 6.1           |                   |               |                   |               |                   |               |                   |               |
| Հայոց պատմություն         | 1443                        | 11.5                    | 1284                           | 11.9          | 155               | 8.5           | 2                 | 4.8           | 2                 | 11.4          |                   |               |                   |               |                   |               |
| Կենտրոնական               | 1324                        | 13                      | 1208                           | 13.3          | 95                | 11.5          | 12                | 7.7           | 8                 | 5.9           | 1                 | 3.5           |                   |               |                   |               |
| Քիմիա                     | 1100                        | 12.2                    | 1019                           | 12.3          | 63                | 11.6          | 11                | 8.7           | 7                 | 6.4           |                   |               |                   |               |                   |               |
| Ռուսաց լեզու              | 456                         | 11.1                    | 325                            | 11.6          | 122               | 10            | 6                 | 7.5           | 3                 | 5.7           |                   |               |                   |               |                   |               |
| Աշխարհագրություն          | 244                         | 13.5                    | 220                            | 13.6          | 20                | 13.4          | 4                 | 7.8           |                   |               |                   |               |                   |               |                   |               |
| Գերմաներեն                | 126                         | 13.9                    | 126                            | 13.9          |                   |               |                   |               |                   |               |                   |               |                   |               |                   |               |
| Տրանսլեյցիոն              | 88                          | 15.1                    | 86                             | 15.1          | 2                 | 12.5          |                   |               |                   |               |                   |               |                   |               |                   |               |
| Համաշխարհային պատմություն | 41                          | 13.6                    | 30                             | 14.1          | 11                | 12.2          |                   |               |                   |               |                   |               |                   |               |                   |               |
| Պարսկերեն                 | 5                           | 12                      | 5                              | 12            |                   |               |                   |               |                   |               |                   |               |                   |               |                   |               |
| Իտալերեն                  | 4                           | 13.3                    | 4                              | 13.3          |                   |               |                   |               |                   |               |                   |               |                   |               |                   |               |
| Իսպաներեն                 | 1                           | 18.5                    | 1                              | 18.5          |                   |               |                   |               |                   |               |                   |               |                   |               |                   |               |

\*- Եթե քննությանը մասնակցել է 1 դիմորդ, ապա նրա ցուցանիշը չի համեմատվել միջին միավորի հետ:

### 3.2. ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԻՊԵՐԻ

Աղյուսակ 6-ում ներկայացված են 2019 թ. միասնական քննությունների միջին միավորներն ըստ ՀՀ բնակավայրերի տիպերի (քաղաքներ և գյուղեր), ինչպես նաև այդ քննությունների ընդհանուր միջին միավորները:

Քաղաքային բնակավայրերն ըստ բնակչության թվի տարբերակվել են խոշոր, միջին և փոքր քաղաքների: Վերջին երկու ենթատիպերի դիմորդների թիվը և միջին միավորներն ուսումնասիրվել են միասին վերցրած: Խոշոր քաղաքների սյունակը պարունակում է և՛ երեք խոշոր քաղաքների (Երևանի, Գյումրու և Վանաձորի) դիմորդների ընդհանուր թվերն ու միջին միավորները, և՛ միայն Երևանի դիմորդներինը:

Գյուղական բնակավայրերի ցուցանիշները ներկայացվել են ընդհանուր հաշվարկով, ինչպես նաև՝ սահմանամերձ<sup>6</sup>, բարձր լեռնային և բարձր լեռնային սահմանամերձ գյուղերի համար առանձին-առանձին:

Սյունակների մզացված վանդակներում ըստ քննական առարկաների ներկայացված են ընդհանուր միջին միավորը գերազանցող ցուցանիշները: Կրկնակի շրջանակների մեջ առնված ցուցանիշները ցույց են տալիս տվյալ առարկայի ամենաբարձր միջին միավորն ըստ բնակավայրերի տիպերի (ենթատիպերի):

<sup>6</sup> **Սահմանամերձ բնակավայրերի** ցանկը 2017 թ. միասնական և կենտրոնացված քննությունների, ինչպես նաև բուհերի ընդունելության մրցույթի դիմորդների հաշվառման էլեկտրոնային տվյալների բազաներում թարմացվել է համաձայն «ՀՀ սահմանամերձ համայնքների ցանկը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 17.11.1998 թ. N 713 որոշման 31.07.03 N 940-Ն, 14.04.04 N 492-Ն, 01.09.05 N 1490-Ն, 21.06.07 N727-Ն լրացումների:





ված ամենաբարձր միջին միավորների առումով առաջատարը եղել են միջին և փոքր քաղաքները: Գերմաներենից ամենաբարձր միջին միավորն արձանագրվել է խոշոր քաղաքների, համաշխարհային պատմությունից՝ սահմանամերձ գյուղերի, ֆիզիկայից և աշխարհագրությունից՝ բարձր լեռնային գյուղերի դիմորդների արդյունքներում:

Հետագոտվել են սահմանամերձ գյուղերից միասնական քննություններին 1-ից ավելի մասնակիցներ ունեցած և միջինում 18-20 միավորներ արձանագրած դպրոցների արդյունքները (աղյուսակ 7):

**Աղյուսակ 7. Միասնական քննություններից 18-20 միջին միավորներ արձանագրած սահմանամերձ գյուղերի դպրոցները**

| Վարչատարածքային միավորը  | Ուսումնական հաստատությունը | Շրջանավարտների թիվը | Քննության մասնակիցների թիվը | Միջին միավորը |
|--------------------------|----------------------------|---------------------|-----------------------------|---------------|
| <b>Գերմաներեն</b>        |                            |                     |                             |               |
| Սյունիք                  | Ագարակի միջնակարգ դպրոց    | 34                  | 2                           | 19.1          |
| <b>Անգլերեն</b>          |                            |                     |                             |               |
| Տավուշ                   | Պառավաբարի միջնակարգ դպրոց | 16                  | 2                           | 18.9          |
| <b>Հայոց պատմություն</b> |                            |                     |                             |               |
| Շիրակ                    | Իսահակյանի միջնակարգ դպրոց | 8                   | 2                           | 18.4          |

Բարձր լեռնային գյուղերի դպրոցներում չեն արձանագրվել 18-20 միջակայքի միջին միավորներ:

### 3.3. ՄԻԶԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Աղյուսակ 8-ում ներկայացված են միասնական քննությունների միջին միավորները ըստ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի (ավագ և միջնակարգ դպրոցներ, վարժարաններ, կրթահա-

մալիրներ և այլն՝ այդ հաստատությունների կազմակերպչաիրավական տեսակի (պետական և ոչ պետական) տարբերակմամբ: Աղյուսակում ըստ առարկաների արձանագրված ամենաբարձր միջին միավորների վանդակներն ընդգծված են կրկնակի շրջանակով: Մգացված են տվյալ առարկայի ընդհանուր միջին միավորից բարձր ցուցանիշների վանդակները: Այն դեպքում, երբ միջին միավորը ներկայացված է մեկ դիմորդով, նրա միավորը աղյուսակում որպես միջին միավոր հաշվի չի առնվել:

**Աղյուսակ 8. Միջին միավորները ըստ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների տեսակների\***

| Գնկավան առարկաները                               | Անկախ զարգացիչ                       |           | Միջնակարգ զարգացիչ |           | Վարձարաններ |           | Վերականգնողիչ |           | Սպորտակոմպլեքսներ |           | Այլ նուստատություններ |           | Ընդամենը |
|--|--------------------------------------|-----------|--------------------|-----------|-------------|-----------|---------------|-----------|-------------------|-----------|-----------------------|-----------|----------|
|  | միջին                                | մեծագույն | միջին              | մեծագույն | միջին       | մեծագույն | միջին         | մեծագույն | միջին             | մեծագույն | միջին                 | մեծագույն |          |
| Գնկավան առարկաները                               | Հարց լեզու և նույն ժամանակահատվածում | 2844      | 11.8               | 1749      | 11.2        | 413       | 12.1          | 28        | 11.9              | 12        | 11.4                  | 12        | 11.4     |
|  | Անգլերեն                             | 2757      | 14                 | 1128      | 13          | 491       | 14.6          | 35        | 15.6              | 15        | 13.8                  | 15        | 13.8     |
|  | Մաթեմատիկա                           | 2186      | 12                 | 1369      | 11.6        | 792       | 13.2          | 30        | 14.6              | 14        | 10.8                  | 14        | 10.8     |
|  | Վեճաբանություն                       | 771       | 13.5               | 308       | 12.2        | 77        | 13.4          | 14        | 15.9              | 1         | 7.5                   | 13        | 13       |
|  | Հարց պատմություն                     | 752       | 12.3               | 382       | 11          | 99        | 12            | 8         | 12.5              | 3         | 11.8                  | 11.5      | 11.5     |
|  | Ֆիզիկա                               | 679       | 12.6               | 224       | 11.5        | 70        | 11.5          | 12        | 14.4              | 1         | 7.25                  | 12.2      | 12.2     |
|  | Ֆիզիկա                               | 538       | 11.4               | 367       | 11.9        | 385       | 12.4          | 12        | 16.4              | 3         | 5.6                   | 11.5      | 11.5     |
|  | Մատուց լեզու                         | 173       | 11.9               | 98        | 11.5        | 32        | 12.3          | 1         | 10.25             |           |                       | 11.1      | 11.1     |
|  | Սոցիալական գիտություններ             | 100       | 13.9               | 96        | 13.5        | 16        | 13.6          |           |                   |           |                       | 13.5      | 13.5     |
|  | Ֆրանսերեն                            | 49        | 15.8               | 26        | 13.7        | 8         | 15.2          |           |                   |           |                       | 15.1      | 15.1     |
|  | Օգրամանրան                           | 45        | 14                 | 74        | 13.5        | 5         | 16.6          |           |                   |           |                       | 13.9      | 13.9     |
|  | Համալսարանային պատմություն           | 6         | 11.5               | 17        | 13.9        | 7         | 17            |           |                   |           |                       | 13.6      | 13.6     |
|  | Իսպաներեն                            | 3         | 11.6               |           |             |           |               |           |                   |           |                       | 13.3      | 13.3     |
|  | Պարսկերեն                            | 2         | 14.6               | 3         | 10.3        |           |               |           |                   |           |                       | 12        | 12       |
|  | Իտալերեն                             | 1         | 18.5               |           |             |           |               |           |                   |           |                       | 18.5      | 18.5     |
| <b>ԸՄՈՒՄԱՆ ԸՆԴՈՒՄԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՄՆԵՐԸ</b> |                                      |           |                    |           |             |           |               |           |                   |           |                       |           |          |
| Մաթեմատիկա                                       | 36                                   | 7.5       | 28                 | 13.6      |             |           |               |           | 7                 | 13.4      |                       |           | 12       |
| Ֆիզիկա   | 30                                   | 5.5       | 8                  | 15.9      |             |           |               |           |                   |           |                       |           | 11.5     |
| Մատուց լեզու                                     | 14                                   | 8.5       | 1                  | 13.5      |             |           |               |           |                   |           | 6                     | 8.9       | 11.1     |
| Հարց լեզու և նույն ժամանակահատվածում             | 12                                   | 7.6       | 21                 | 12        |             |           |               |           | 8                 | 12.1      |                       |           | 11.4     |
| Անգլերեն   | 11                                   | 12.2      | 32                 | 15.3      |             |           |               |           | 9                 | 12.9      |                       |           | 13.8     |
| Վեճաբանություն                                   | 3                                    | 13.3      | 8                  | 16.3      |             |           |               |           | 2                 | 16.9      |                       |           | 13       |
| Հարց պատմություն                                 | 3                                    | 10.8      | 7                  | 15.5      |             |           |               |           | 3                 | 9.8       |                       |           | 11.5     |
| Ֆիզիկա   | 2                                    | 11.5      | 9                  | 14.8      |             |           |               |           | 2                 | 12.3      |                       |           | 12.2     |
| Սոցիալական գիտություններ                         |                                      |           | 1                  | 10.25     |             |           |               |           | 3                 | 13.3      |                       |           | 13.5     |

\*- Եթե քննությանը մասնակցել է 1 դիմորդ, ապա նրա ցուցանիշը չի համեմատվել միջին միավորի հետ:

ների միջին միավորներին՝ նկատում ենք, որ ընդհանուր միջին միավորներից ցածր ցուցանիշներով առանձնացել են հատկապես միջնակարգ դպրոցները, բարձր ցուցանիշներով՝ կրթահամալիրները և վարժարանները:

Աղյուսակ 9-ում ներկայացված են միասնական քննությունների ընդհանուր միջին միավորներից 1-ից մինչև 7.8 միավորով բարձր միջին ցուցանիշներ արձանագրած կրթահամալիրները և վարժարանները: Նշված պետական հաստատությունների ցուցանիշներում ամենամեծ տարբերություններն արձանագրվել են առավելապես ֆիզիկայից և մաթեմատիկայից, ոչ պետականների դեպքում՝ հայոց պատմությունից և անգլերենից:

Պետական ավագ դպրոցների շրջանավարտների ամենաբարձր միջին միավորը եղել է ֆրանսերենից (15.8), ամենացածրը՝ ֆիզիկայից (11.4), ոչ պետականներինը, համապատասխանաբար, կենսաբանությունից (13.3) և ֆիզիկայից (5.5):

Միջնակարգ դպրոցների շրջանավարտներն ամենաբարձր միջին միավորը հավաքել են համաշխարհային պատմությունից (13.9), ամենացածրը՝ հայոց պատմությունից (11):

Աղյուսակ 9. Միասնական քննությունների բարձր արդյունքներով վարժարանները և կրթահամալիրները

| Կազմակերպության կոդը | Ուսումնական հաստատության անունը | Ուսումնական հաստատության անվանումը   |
|----------------------|---------------------------------|--|
| Պետական              | Վարժարան                        | Երևանի Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հաստիկ դպրոց                                  |
|                      |                                 | ՎՊՀ-ի հենակետային վարժարան   |
Աղյուսակ 18-ից երևում է, որ բուհ ընդունված շրջանավարտների տոկոսով առաջատար հանրակրթական ուսումնական հաստատությունը Վանաձորի մաթեմատիկայի և բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ հատուկ դպրոցն է, որի 30 շրջանավարտներից 28-ը (93.3%) ընդունվել են ՀՀ բուհեր:

Լավագույն տասնյակում բուհ ընդունվածների ամենամեծ թիվ ապահոված հաստատությունը եղել է ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոցը, որի 278 շրջանավարտներից ընդունվել են 229-ը (82.4%):

Բարձր պատրաստվածություն ունեցած շրջանավարտների մի մասը, որոնք ՀՀ բուհերի ընդունելության մրցույթի ցանկում ընդգրկված որևէ բուհ չեն ընդունվել, հնարավոր է, որ ընդունվել են այդ ցանկում չընդգրկված այլ բուհեր:

Աղյուսակ 19-ում ըստ ՀՀ վարչատարածքային միավորների ներկա-





**6.4 ՄԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԵՎ ԲԱՐՁՐ ԼԵՌՆԱՅԻՆ ԳՅՈՒՂԵՐԻՑ ԲՈՒՀ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԲԱՐՁՐ ՏՈԿՈՍՆԵՐՈՎ ԱՌԱՆՁՆԱՑԱԾ ԴՊՐՈՑՆԵՐԸ**

Սահմանամերձ և բարձր լեռնային գյուղերից 2019 թ. ՀՀ բուհերում հայտագրվել է 646 դիմորդ, որոնցից ընդունվել է 498-ը: Նրանք կազմել են այդ գյուղերից հայտագրվածների 77.1%-ը:

Աղյուսակ 21-ում և աղյուսակ 22-ում ըստ սահմանամերձ և բարձր լեռնային գյուղեր ունեցող վարչատարածքային միավորների ներկայացված են 2019 թ. բուհ ընդունված շրջանավարտների բարձր տոկոսով առանձնացած դպրոցները: Ուսումնասիրվել են 5 և ավելի շրջանավարտ ունեցած և ընդունվածների մեծ թիվ ապահոված դպրոցները:

**Աղյուսակ 20. 2019 թ. սահմանամերձ և բարձր լեռնային գյուղերից բուհերում հայտագրված և ընդունված դիմորդների թվերը**

| Բնակավայրի տիպը                    | Հայտագրվածների թիվը | Ընդունվածների |             |
|------------------------------------|---------------------|---------------|-------------|
|                                    |                     | թիվը          | տոկոսը      |
| Սահմանամերձ գյուղեր                | 390                 | 296           | 75.9        |
| Բարձր լեռնային գյուղեր             | 250                 | 199           | 79.6        |
| Բարձր լեռնային սահմանամերձ գյուղեր | 6                   | 3             | 50          |
| <b>Ընդամենը</b>                    | <b>646</b>          | <b>498</b>    | <b>77.1</b> |

**Աղյուսակ 21. 2019 թ. սահմանամերձ գյուղերի 5 և ավելի շրջանավարտ ունեցած և բուհ ընդունվածների՝ 50-ից բարձր տոկոսով առանձնացած դպրոցները**

| Մարզը            | Հանրակրթական ուսումնական հաստատությունը | Շրջանավարտ-ների թիվը | Բուհ ընդունվածների |        |   |                           |
|------------------|---|----------------------|--------------------|--------|---|---------------------------|
|                  |   |                      | թիվը               | տոկոսը | այդ թվում՝ 1-ին հայտով անվճար ընդունվածների |                           |
|                  |   |                      |                    |        | թիվը  | տոկոսը ընդունվածների թվից |
| <b>Արմավիր</b>   | Արաքսի միջնակարգ դպրոց                  | 7                    | 4                  | 57.1   | 1   | 25                        |
| <b>Շիրակ</b>     | Բայանդուրի միջնակարգ դպրոց              | 5                    | 3                  | 60     | 1   | 33.3                      |
|                  | Երազգավորսի միջնակարգ դպրոց             | 7                    | 4                  | 57.1   | 2   | 50                        |
|                  | Իսահակյանի միջնակարգ դպրոց              | 8                    | 4                  | 50     | 3   | 75                        |
| <b>Սյունիք</b>   | Ագարակի միջնակարգ դպրոց                 | 39                   | 23                 | 59     | 5   | 21.1                      |
|                  | Խնձորենկի միջնակարգ դպրոց               | 18                   | 9                  | 50     |   |                           |
|                  | Շաղաթի միջնակարգ դպրոց                  | 10                   | 5                  | 50     | 1   | 20                        |
|                  | Արծվանիկի միջնակարգ դպրոց               | 6                    | 3                  | 50     |   |                           |
| <b>Վայոց ձոր</b> | Մարտիրոսի միջնակարգ դպրոց               | 5                    | 4                  | 80     |   |                           |
| <b>Տավուշ</b>    | Կողբի թիվ 2 միջնակարգ դպրոց             | 10                   | 6                  | 60     | 1   | 16.7                      |
|                  | Ոսկևանի միջնակարգ դպրոց                 | 9                    | 5                  | 55.6   |   |                           |
|                  | Ագատամուտի միջնակարգ դպրոց              | 25                   | 13                 | 52     | 3   | 23.1                      |
|                  | Ներքին Կարմիրաղբյուրի միջն. դպրոց       | 6                    | 3                  | 50     |   |                           |

Աղյուսակ 21-ում ընդգրկված դպրոցներից բուհ ընդունված շրջանավարտների ամենաբարձր տոկոսն արձանագրվել է Վայոց ձորի մարզի Մարտիրոսի միջնակարգ դպրոցում (80%՝ 5 շրջանավարտից ընդունվել է 4-ը), իսկ ընդունվածների ամենամեծ թիվը՝ Սյունիքի մարզի Ագարակի միջնակարգ դպրոցում (39 շրջանավարտից 23-ը (59%))։ Առաջին հայտով անվճար ընդունվածների ամենամեծ թիվն ապահովել է Ագարակի միջնակարգ դպրոցը (5 դիմորդ)։

**Աղյուսակ 22. 2019 թ. բարձր լեռնային գյուղերի 5 և ավելի թվով շրջանավարտ ունեցած և բուհ ընդունվածների բարձր տոկոսով առանձնացած մի քանի դպրոցներ**

| Մարզը              | Հանրակրթական ուսումնական հաստատությունը | Շրջանավարտների թիվը | Բուհ ընդունվածների |        |                                 |                           |
|--------------------|---|---------------------|--------------------|--------|---------------------------------|---------------------------|
|                    |   |                     | թիվը               | տոկոսը | այդ թվում՝ անվճար ընդունվածների |                           |
|                    |   |                     |                    |        | թիվը                            | տոկոսը ընդունվածների թվից |
| <b>Արագածոտն</b>   | Լուսազյուղի միջնակարգ դպրոց             | 6                   | 3                  | 50     |                                 |                           |
| <b>Գեղարքունիք</b> | Սարուխանի թիվ 1 միջնակարգ դպրոց         | 16                  | 11                 | 68.8   | 5                               | 45.5                      |
|                    | Լճավանի միջնակարգ դպրոց                 | 8                   | 5                  | 62.5   |                                 |                           |
|                    | Վաղաշենի միջնակարգ դպրոց                | 29                  | 17                 | 58.6   | 1                               | 5.9                       |
| <b>Շիրակ</b>       | Հառիճի միջնակարգ դպրոց                  | 7                   | 4                  | 57.1   | 1                               | 25                        |
|                    | Մուսայելյանի միջնակարգ դպրոց            | 7                   | 4                  | 57.1   | 1                               | 25                        |


Աղյուսակում ներկայացված դպրոցներից բուհ ընդունված շրջանավարտների ամենաբարձր տոկոսն արձանագրվել է Գեղարքունիքի մարզի Սարուխանի թիվ 1 միջնակարգ դպրոցում (68.8%, 16 շրջանավարտից՝ 11-ը), իսկ ընդունվածների ամենամեծ թիվը՝ նույն մարզի Վաղաշենի միջնակարգ դպրոցում (29-ից 17-ը՝ 58.6%-ը): Առաջին հայտով և ուսուցման անվճար հիմունքներով ընդունված շրջանավարտներ են ունեցել Սարուխանի թիվ 1 և Վաղաշենի միջնակարգ դպրոցները, ինչպես նաև Շիրակի մարզի Հառիճի և Մուսայելյանի միջնակարգ դպրոցները, որոնցից առաջատարը եղել է Սարուխանի թիվ 1 միջնակարգ դպրոցը (5 դիմորդ):

**6.5 ՀԱՅՏԱԳՐՎԱԾ ԵՎ ԲՈՒՀ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԹՎԵՐԸ ԸՍՏ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՍԵՌԵՐԻ**

2019 թ. ՀՀ բուհերում հայտագրված 10367 դիմորդներից 4303-ը (41.5%) եղել են տղաներ, 6064-ը (58.5%)՝ աղջիկներ: Բուհ ընդունված 8513 դիմորդներից 3424-ը (40.2%) եղել են տղաներ, 5089-ը (59.8%)՝ աղջիկներ: Հայտագրված աղջիկներից ընդունվել է 83.9%-ը, տղաներից՝ 79.6%-ը:

Դիագրամ 8-ում ներկայացված է վերջին 5 տարիներին ՀՀ բուհերում հայտագրված դիմորդների տոկոսային հարաբերակցությունն ըստ սեռերի: Ինչպես երևում է դիագրամից, նկատելի փոփոխություն արձանագրվել է 2018 թվականին. նախորդ և հաջորդ տարիների համեմատությամբ տղաների տոկոսն ավելացել է 4.1-ով:

**Դիագրամ 8. 2015-2019 թթ. բուհերում հայտագրված տղաների և աղջիկների տոկոսային հարաբերակցությունը**



**6.6 ԱՄԵՆԱՊԱՀԱՆՋՎԱԾ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Աղյուսակ 23-ում ներկայացված են 2019 թ. դիմորդների շրջանում ՀՀ պետական բուհերի ամենապահանջված մասնագիտությունները:

| ԱՆՎՃԱՐ ՌԻՍՈՒՑՈՒՄ     |  |  |             |                               |
|----------------------|--|--|-------------|-------------------------------|
| Բուհը *              | Մասնագիտությունը                             | Դիմումների թիվը 1-ին հայտով            | Տեղերի թիվը | Մեկ տեղի համար դիմածների թիվը |
| ԵՊԲՀ                 | Բուժական գործ                                | 636                                    | 58          | 11                            |
| ԵՊՀ                  | Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա           | 417                                    | 33          | 13                            |
|                      | Իրավագիտություն                              | 290                                    | 2           | 145                           |
| ՀՊՏՀ                 | Ֆինանսներ (ըստ ոլորտի)                       | 201                                    | 11          | 18                            |
| ԵՊԲՀ                 | Ստոմատոլոգիա                                 | 189                                    | 6           | 32                            |
| ԵՊՀ                  | Միջազգային հարաբերություններ                 | 176                                    | 2           | 88                            |
| ՀՊՏՀ                 | Կառավարում (ըստ ոլորտի)                      | 173                                    | 10          | 17                            |
|                      | Տնտեսագիտություն                             | 164                                    | 13          | 13                            |
| ՃՇՀԱՀ                | Դիզայն                                       | 160                                    | 4           | 40                            |
| ԵՊԼՀ                 | Միջմշակութային հաղորդակցութ., անգլերեն լեզու | 159                                    | 5           | 32                            |
| ՎՃԱՐՈՎԻ ՌԻՍՈՒՑՈՒՄ ԱՏ |  |  |             |                               |
| Բուհը *              | Մասնագիտությունը                             | Դիմումների թիվը վճարովի բոլոր հայտերով | Տեղերի թիվը | Մեկ տեղի համար դիմածների թիվը |
| ՀՊՏՀ                 | Շուկայագիտություն (ըստ ոլորտի)               | 945                                    | 76          | 12                            |
|                      | Տնտեսագիտություն                             | 943                                    | 187         | 5                             |
| ԵՊՀ                  | Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա           | 913                                    | 180         | 5                             |
| ՀՊՏՀ                 | Կառավարում (ըստ ոլորտի)                      | 891                                    | 190         | 5                             |
| ԵՊԼՀ                 | Սերվիս                                       | 864                                    | 123         | 7                             |
| ԵՊԲՀ                 | Բուժական գործ                                | 838                                    | 270         | 3                             |
| ՀՊՏՀ                 | Հաշվապահ. հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)   | 825                                    | 191         | 4                             |
| ԵՊԲՀ                 | Ֆարմացիա                                     | 824                                    | 90          | 9                             |
| ԵՊԲՀ                 | Ստոմատոլոգիա                                 | 817                                    | 130         | 6                             |
| ԵՊՀ                  | Մշակութաբանություն                           | 787                                    | 40          | 20                            |

Աղյուսակ 23-ից հետևում է, որ ուսուցման անվճար հիմունքներով հայտագրվածների շրջանում ամենապահանջվածը եղել է ԵՊԲՀ-ի «Բուժա-

կան գործ» մասնագիտությունը, որի հայտագրվածների թիվը կազմել է 636 (մեկ տեղի համար հայտագրվել է 11 դիմորդ): Ուսուցման վճարովի հիմունքներով հայտագրվածների թվով (945 դիմորդ) առաջատարը եղել է ՀՊՏՀ-ի «Շուկայագիտություն» մասնագիտությունը (մեկ տեղի համար՝ 12 դիմորդ): Միաժամանակ, մեկ անվճար տեղի համար հայտագրվածների թվով առաջատար է եղել ԵՊՀ-ի «Իրավագիտություն» մասնագիտությունը (145 դիմորդ), իսկ վճարովի դեպքում՝ ԵՊԲՀ-ի «Բուժական գործ» մասնագիտությունը (270 դիմորդ):

Աղյուսակ 24-ում ներկայացված են 2014-2019 թթ. ԵՊՀ-ի, ՀՊՏՀ-ի և ԵՊԲՀ-ի մի քանի պահանջված մասնագիտությունների անցողիկ միավորները: Աղյուսակից երևում է, որ անվճար հիմունքներով ընդունելության անցողիկ միավորները նախորդ տարվա համեմատությամբ 2019 թ. հիմնականում նվազել են: Աճել են ՀՊՏՀ-ի «Կառավարում» և «Վիճակագրություն» մասնագիտությունների անցողիկ միավորները:

Դիտարկվածներից 2019 թ. նախորդ տարվա համեմատությամբ նվազել են ՀՊՏՀ-ի «Տնտեսագիտություն», «Ֆինանսներ» և «Կառավարում» մասնագիտությունների վճարովի հիմունքներով ուսուցման անցողիկ միավորները:

Աղյուսակ 24. Բարձր պահանջարկ ունեցող մի քանի մասնագիտությունների անցողիկ միավորները 2014-2019 թթ.\*

|         | ԵՊՀ           |              |       | ՀՊՏՀ              |        |                        |                 |  | ԵՊՀ                    |  |                   |
|---------|---------------|--------------|-------|-------------------|--------|------------------------|-----------------|--|------------------------|--|-------------------|
|         | Բուժական գործ | Ստոմատոլոգիա | Ֆարմա | Տեխնիկական բյուրո | Ֆինանս | Շախմատային (լուսնային) | Վիճակագրություն | Ինֆորմատիկա և կոմպյուտերային գիտություններ | Միջազգային ներդրումներ | Ինֆորմատիկա և կոմպյուտերային գիտություններ | Տեխնիկական բյուրո |
| 2014 թ. | անվճար        | 38           | 37.75 | 59                | 58.75  | 55.25                  | 56              | 38.5                                       |                        |  |                   |
|         | վճարովի       | 24           | 17.75 | 41.25             | 49     | 44.5                   | 43.75           | 26.5                                       | 48.75                  | 53   |                   |
| 2015 թ. | անվճար        | 39.75        | 37    | 54                | 57.5   | 59.25                  | 57.25           | 38.75                                      |                        |  |                   |
|         | վճարովի       | 20           | 15    | 40                | 49     | 45                     | 43.5            | 26   | 47.75                  | 52   |                   |
| 2016 թ. | անվճար        | 39.5         | 39.5  | 56                | 57     | 54.25                  | 56.25           | 38   |                        |  |                   |
|         | վճարովի       | 27.5         | 21.75 | 25                | 45     | 37.75                  | 34.25           | 25.5                                       | 45.75                  | 52   |                   |
| 2017 թ. | անվճար        | 39.5         | 33.75 | 54                | 59     | 56.25                  | 54.75           | 38.5                                       | 59.5                   | 60   |                   |
|         | վճարովի       | 27           | 18.5  | 24                | 40.25  | 34.75                  | 33.5            | 23.75                                      | 39.75                  | 46.5                                       |                   |
| 2018 թ. | անվճար        | 39           | 36.25 | 52.25             | 53.75  | 50.5                   | 54.75           | 39   | 59.25                  | 60   |                   |
|         | վճարովի       | 16.75        | 21    | 25.25             | 26.25  | 26.5                   | 24.25           | 15.75                                      | 26.25                  | 31.25                                      |                   |
| 2019 թ. | անվճար        | 38.25        | 36.25 | 51                | 46.5   | 52.75                  | 54.25           | 38.5                                       | 58.5                   | 59.5                                       |                   |
|         | վճարովի       | 27.75        | 24.5  | 24                | 23.5   | 25                     | 30.75           | 29.75                                      | 40.25                  | 47.5                                       |                   |

\* Անցողիկ միավորների վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունները զետեղված են Գնահատման և թեստավորման կենտրոնի <http://www.atc.am/> կայքում:

## ԱՍՓՈՓՈՒՄ

Ամփոփելով վերլուծությունը՝ նշենք, որ միասնական քննություն հանձնողների թիվը 2019 թ. ավելացել է 2017 թ. համեմատությամբ՝ 10396-ից հասնելով 11046-ի: Ավարտվել է դիմորդների թվի՝ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում 12-ամյա կրթության համակարգին անցնելով պայմանավորված թռիչքային վայրէջքների շրջանը (2011 և 2018 թթ.):

➤ **Միասնական քննություններ:** 2019 թ. միասնական քննություններին մասնակցելու համար հայտագրված 11046 դիմորդների կողմից հիմնական փուլում ներկայացվել է 10391 հայտ, լրացուցիչ փուլում՝ 911-ը: Հաշվի առնելով լրացուցիչ փուլում հայտագրվածների մի մասի՝ հիմնական փուլում ևս հայտագրված լինելու հանգամանքը՝ հիմնական և լրացուցիչ փուլերի հայտերի ընդհանուր թիվը կազմել է 11302:

Դիմորդներից 10220-ը հայտագրվել են ՀՀ-ում, 826-ը՝ Արցախում: ՀՀ-ում հայտագրվածներից 10147-ը եղել են տեղացիներ, 55-ը՝ Վրաստանից, 14-ը՝ Ռուսաստանից, 2-ը՝ Ղազախստանից, 1-ը՝ Ուկրաինայից և 1-ը՝ Սիրիայից:

2018-2019 ուսումնական տարվա շրջանավարտներ են եղել հայտագրված դիմորդներից 10769-ը (9894-ը ՀՀ-ից, 810-ը՝ Արցախից և 65-ը այլ երկրներից):

Միասնական քննություններից բացակայությունները հիմնականում չեն գերազանցել մասնակիցների թվի 5%-ը: Հիվանդության պատճառով քննությունն ընդհատել է 5 դիմորդ, 19 դիմորդ քննության անցկացման կարգի խախտման պատճառով հեռացվել է քննությունից:

Միասնական քննությունների ընդհանուր միջին միավորներն արձանագրվել են 11.1-ից (ռուսաց լեզու) մինչև 15.1 (ֆրանսերեն) սահմաններում:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսումնասիրվող առարկաների քննություններից նախորդ տարվա համեմատությամբ միջին միավորների աճ է արձանագրվել մաթեմատիկայից, ֆիզիկայից, աշխարհագրությունից, ռուսաց լեզվից, ֆրանսերենից և համաշխարհային պատմությունից (0.2-1.5 միավորով): Մյուս քննությունների միջին միավորները նվազել են 0.2-1 միավորով:

Հիմնական փուլում մաթեմատիկայի, անգլերենի, աշխարհագրության, ֆրանսերենի և համաշխարհային պատմության քննություններից դրա-



կան միավորի շեմը չհաղթահարած դիմորդների թիվը եղել է մասնակիցների թվի 10%-ից պակաս: 10%-ից բարձր ցուցանիշով աչքի են ընկել հատկապես ֆիզիկայի և հայոց պատմության քննությունները (22.4 և 21.4%): Շեմը չհաղթահարածների տոկոսը շատ բարձր է եղել լրացուցիչ փուլում (20-63.2%)՝ կապված այդ փուլի դիմորդների պատրաստվածության ցածր մակարդակի հետ:

Միասնական քննություններից առավելագույն՝ 20 միավոր հավաքածների թիվը հիմնական փուլում եղել է 0.1-ից (քիմիա) մինչև 5 (համաշխարհային պատմություն) տոկոսի սահմաններում: Ամենամեծաքանակ առավելագույն միավորներն արձանագրվել են անգլերենից (թվով 55՝ 1.2%-ը):

Լրացուցիչ փուլում մեկական 20 միավոր է արձանագրվել միայն հայոց լեզվից և հայ գրականությունից, մաթեմատիկայից և անգլերենից:

Միասնական քննությունների արդյունքների բողոքարկման 476 դիմումներից դրական լուծում է ստացել 87-ը (18.3%-ը): Համեմատության համար նշենք, որ 2017 թ. դրական լուծում է ստացել դիմումների 31.3%-ը:

Միասնական քննություններից ըստ ՀՀ վարչատարածքային միավորների արձանագրված ամենաբարձր միջին միավորների թվով առաջատարը եղել է Սյունիքի մարզը (7 քննությունից), իսկ բնակավայրերի տիպերից՝ միջին և փոքր քաղաքները (8 քննությունից):

Ըստ ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների տեսակների կատարված վերլուծությունից երևում է, որ 2019 թ. միասնական քննություններից բարձր միջին միավորներ են ունեցել առավելապես կրթահամալիրների և վարժարանների շրջանավարտները: Այս դիտարկմամբ կրթության որակի բարձրացման ուղղությամբ աշխատանք կատարելու անհրաժեշտություն կա հատկապես միջնակարգ դպրոցներում:

Միասնական քննությունների թեստերի գերակշիռ մասը եղել է միջին բարդության և մեծ հուսալիության:

➤ **Կենտրոնացված քննություններ:** Կենտրոնացված քննությունների միջին միավորները եղել են 10.9-ից (ռուսաց լեզու) մինչև 15 (իտալերեն) սահմաններում: «Գերմաներեն», «Ֆրանսերեն», «Իսպաներեն» և «Իտալերեն» առարկաների բանավոր քննություններից բոլոր մասնակիցները հավաքել են դրական միավորներ: Միաժամանակ, այդ քննություններից 20 միավոր չի արձանագրվել: 20 միավոր չի արձանագրվել նաև «Ստեղծագործական աշխատանքի» կենտրոնացված քննությունից: Մյուս քննություններից դրական միավորի շեմը չհաղթահարածների և 20 միավորներ հավաքածների ամենամեծ թիվն արձանագրվել է «Հայոց լեզու և գրականություն»

առարկայի բանավոր քննությունից (համապատասխանաբար՝ 16 (8.3%) և 8 (4.2%)):

«Հայոց լեզվի և գրականության», «Բանավոր հաղորդակցման միջոցների», «Ստեղծագործական աշխատանքի» և «Ռուսաց լեզվի» կենտրոնացված քննությունների միջին միավորները նախորդ տարվա համեմատությամբ 2019-ին նվազել են 1.4-3.4 միավորով, իսկ «Անգլերենի», «Գերմաներենի», «Ֆրանսերենի» և «Իսպաներենի» քննություններինը՝ աճել 0.5-2.6-ով:

➤ **Բուհերի ընդունելության մրցույթը:** 2019 թ. ՀՀ բուհերի ընդունելության մրցույթի համար նախատեսված է եղել անվճար հիմունքներով ուսուցման 1799 տեղ, վճարովի հիմունքներով՝ 16088:

Բուհերի ընդունելության մրցույթին մասնակցելու համար հայտագրվել է 10367 դիմորդ (առաջին փուլում՝ 10100, երկրորդում՝ 267): Հայտագրված դիմորդներից 10203-ը դիմել են պետական, 164-ը՝ ոչ պետական բուհեր: ՀՀ բուհեր ընդունվել է 8513 դիմորդ (հայտագրվածների 82.1%-ը): Նրանցից 1221-ն ընդունվել է անվճար հիմունքներով (14.3%), 7242-ը՝ վճարովի (85.1%), 50-ը (0.6%)՝ արտոնություններով:

Ուսուցման անվճար հիմունքներով ընդունվածները, վճարովի հիմունքներով ընդունվածներից 6988-ը և արտոնություններով ընդունվածներից 46-ն ընդունվել են մրցույթի 1-ին փուլում: 2-րդ փուլում վճարովի հիմունքներով ընդունվել է 254-ը, արտոնություններով՝ 4-ը:

Մրցույթին մասնակցելով միայն ավարտական կամ տարեկան գնահատականներով՝ վճարովի հիմունքներով ընդունվել է 325 դիմորդ (մրցույթի 1-ին փուլում՝ 288 (88.6%), 2-րդ փուլում՝ 37 (11.4%)):

ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններից 2019 թ. բուհեր ընդունված դիմորդների ավարտական փաստաթղթերի միջին միավորների միջին թվաքանականը ըստ ՀՀ վարչատարածքային միավորների եղել է 14.4-ից (Երևան) մինչև 16 (Վայոց ձոր) սահմաններում:

Ըստ բնակավայրերի տիպերի այն տատանվել է 14.6-ից (խոշոր քաղաքներ) մինչև 15.7 (փոքր քաղաքներ), ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տեսակների՝ 12.7-ից (մասնագիտացված ուսումնական հաստատություններ) մինչև 16.7 (կրթահամալիրներ) սահմաններում: Միայն ուսումնարաններից և քոլեջներից բուհեր ընդունվածների ցուցանիշներն են եղել շատ ցածր (համապատասխանաբար՝ 8 և 8.1):

Ավարտական փաստաթղթի ամենացածր միջին միավորով (12.7) դիմորդներն ընդունվել են ՀԱԱՀ և «Եվրասիա» միջազգային

համալսարան, ամենաբարձրով (16.1)՝ ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղ: Երևանում ամենացածր և ամենաբարձր ցուցանիշ են ունեցել ՀԱԱՀ (12.7) և ԵՊԲՀ (16.1) ընդունվածները:

2019 թ. 10 և ավելի շրջանավարտներ ունեցած ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններից բուհ ընդունվածների բարձր տոկոս ապահովվածների լավագույն տասնյակում տեղ են գտել 74.1-93.3% արձանագրածները, որոնցից առաջատարը եղել է Վանաձորի մաթեմատիկայի և բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ հատուկ դպրոցը: Իսկ այդ տասնյակից բուհ ընդունվածների ամենամեծ թիվն ապահովել է ՀԱՊՀ Երևանի ավագ դպրոցը, որի 278 շրջանավարտներից ընդունվել են 229-ը (82.4%):

Սահմանամերձ գյուղերում 5 և ավելի շրջանավարտ ունեցած և բուհ ընդունված շրջանավարտների բարձր տոկոսով առանձնացած դպրոցներից աչքի են ընկել Վայոց ձորի մարզի Մարտիրոսի միջնակարգ դպրոցը (80%), իսկ բարձր լեռնային գյուղերում՝ Գեղարքունիքի մարզի Սարուխանի թիվ 1 միջնակարգ դպրոցը (68.8%):

2019 թ. դիմորդների նախընտրած մասնագիտություններից, ըստ ուսուցման անվճար հիմունքներով հայտագրվածների թվի, ամենապահանջվածը եղել է ԵՊԲՀ-ի «Բուժական գործ» մասնագիտությունը, վճարովի հիմունքներով՝ ՀՊՏՀ-ի «Շուկայագիտություն» և «Տնտեսագիտություն» մասնագիտությունները:

Հաշվի առնելով, որ ամենապահանջված մասնագիտություններն առավելապես ուսուցանվում են ԵՊՀ-ում, ՀՊՏՀ-ում և ԵՊԲՀ-ում՝ դիտարկվել են դրանց 2014-2019 թթ. անցողիկ միավորներն ըստ ուսուցման անվճար և վճարովի ձևեր: Վերլուծության մեջ ներկայացվել են ԵՊՀ-ի «Իրավագիտություն», «Միջազգային հարաբերություններ», «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», ՀՊՏՀ-ի «Տնտեսագիտություն», «Ֆինանսներ», «Կառավարում», «Շուկայագիտություն», «Վիճակագրություն» և ԵՊԲՀ-ի «Բուժական գործ», «Ստոմատոլոգիա», «Ֆարմացիա» մասնագիտությունները: Անվճար հիմունքներով ընդունելության անցողիկ միավորները նախորդ տարիներին ակնհայտ աճման կամ նվազման միտում հիմնականում չեն ունեցել, սակայն 2018 թ. համեմատությամբ 2019-ին հիմնականում նվազել են:

Դիտարկված մասնագիտությունների մեծ մասի վճարովի հիմունքներով ուսուցման անցողիկ միավորների նվազման միտումն ակնհայտ է հատկապես 2016 թվականից սկսած: 2019 թ. 2017 թ. համեմատությամբ (հաշվի առնելով 2018 թ. դիմորդների թվի սակավությունը՝ համեմատվել է 2017 թ. համապատասխան ցուցանիշների հետ) նվազել են ՀՊՏՀ-ի «Ֆինանսներ» և «Կառավարում» մասնագիտությունների վճարովի հիմունքներով ուսուցման անցողիկ միավորները:

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. 2019 թ. պետական միասնական և կենտրոնացված քննությունների, ինչպես նաև բուհերի ընդունելության մրցույթի դիմորդների հաշվառման էլեկտրոնային տվյալների բազաներ
2. ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգ
3. 2018 թ. պետական միասնական քննությունների արդյունքների և բուհերի ընդունելության մրցույթի վերլուծություն
4. ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների առկա ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ և ինտեգրված կրթական ծրագրերով 2019/2020 ուսումնական տարվա ընդունելության քննությունների, տեղերի և ուսման վարձաչափերի ցանկ

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՅԸ

| ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ  | ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ<br>(ԺԱՄ) | ՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐԸ    |                   |
|--|------------------------|------------------|-------------------|
|  |                        | ՀԻՄՆԱԿԱՆ<br>ՓՈՒԼ | ԼԴՆՅՈՒՑԻՉ<br>ՓՈՒԼ |
| Համաշխարհային պատմություն Կենսաբանություն Աշխարհագրություն | 3                      | 04.06.2019 թ.    | 06.07.2019 թ.     |
| Հայոց լեզու և հայ  | 3                      | 07.06.2019 թ.    | 03.07.2019 թ.     |
| Ֆիզիկա   | 3                      | 11.06.2019 թ.    | 04.07.2019 թ.     |
| Օտար լեզու   | 2.5                    | 14.06.2019 թ.    | 05.07.2019 թ.     |
| Մաթեմատիկա   | 3                      | 18.06.2019 թ.    | 07.07.2019 թ.     |
| Հայոց պատմություն Քիմիա                                    | 3                      | 21.06.2019 թ.    | 08.07.2019 թ.     |
| Ռուսաց լեզու   | 2.5                    | 25.06.2019 թ.    | 02.07.2019 թ.     |

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Գնահատման և թեստավորման կենտրոնում քննությունների դիմում-հայտերի ընդունումն սկսվում է տվյալ տարվա փետրվարի 1-ից և ավարտվում մարտի 15-ին (համաձայն «ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի»)<sup>10</sup>: Մուտքագրված տվյալների համապատասխանությունը հաստատելու, ճշգրտում, փոփոխություն կատարելու և քննության մասնակիցների ցուցակը վերահաստատելու նպատակով ԳԹԿ-ից դպրոցներ ուղարկված տվյալները և նոր դիմում-հայտերը ապրիլի 10-15-ը ուղարկվում են ԳԹԿ: Բուհերում դիմորդ-

<sup>10</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75964>

ների հայտագրումը կատարվում է տվյալ տարվա մայիսի 5-ից մինչև հունիսի 1-ը: Դիմորդները կենտրոնացված և ներբուհական քննություններին, ինչպես նաև մասնագիտությունների մրցույթին մասնակցելու համար ընդունելության դիմում-հայտը և փաստաթղթերը հանձնում են այն բուհում, որի մասնագիտությունն ընդունելության դիմում-հայտում հայտագրել են առաջինը: ՀՀ երկաթաքաղցիների և օտարերկրացիների, օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատությունները տվյալ ուսումնական տարում ավարտած ՀՀ քաղաքացիների, նույն տարվա գարնանային գորակոչից գորացրված կամ մինչև հուլիսի 31-ը գորացրվող դիմորդների, նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տվյալ տարվա շրջանավարտների փաստաթղթերն ընդունվում են հունիսի 25-ից մինչև հուլիսի 2-ը:

Միասնական քննությունները կազմակերպվում և անցկացվում են միասնական քննական կենտրոններում, որոնց ցանկը մինչև տվյալ տարվա մայիսի 1-ը հաստատում է ԳԹԿ-ի տնօրենը:

*ՀԱՎԵԼՎԱԾՅ. ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՒՄԸ*

Համաձայն Գնահատման և թեստավորման կենտրոնի գործունեության պլանի՝ ԳԹԿ-ն տվյալ տարվա հունվարի 20-ից ԶԼՄ-ներում պարբերաբար հրապարակում է հայտարարություններ, որոնցում նշվում են միասնական քննությունների դիմում-հայտերի ընդունումն սկսելու և ավարտելու ժամկետները, դիմում-հայտերն ընդունող հանրակրթական ուսումնական հաստատությունները: ԳԹԿ պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում տեղադրվում և պարբերաբար թարմացվում են միասնական քննություններին և բուհերի ընդունելության մրցույթին վերաբերող տեղեկությունները:

ԳԹԿ համակարգչային և վերլուծական բաժինը միասնական քննություններին մասնակցելու դիմում-հայտ լրացրած դիմորդների տվյալները էլեկտրոնային եղանակով ստանալու նպատակով հանրակրթական ուսումնական հաստատությունների համակարգչային օպերատորների համար կազմակերպում է վերապատրաստման դասընթացներ:

Միասնական քննությունների կազմակերպման գործընթացը (ուղեցույցների մշակում և տրամադրում, միասնական քննությունների և բուհերի ընդունելության հայտագրում, թեստերի տպագրություն) լուսաբանվում է ԶԼՄ-ներով: Քննությունների անցկացման ողջ գործընթացը (քննության ըն-

թացք, բողոքարկում, տվյալների տրամադրում, մեկնաբանում) բաց է լինում լրատվամիջոցների համար: Պարբերաբար կազմակերպվում են հարցազրույցներ և ասուլիսներ:

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԵՐԸ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ

| Տարեթիվը | Հայոց լեզու և հայ գրականություն |               | Մաթեմատիկա      |               | Անգլերեն        |               | Ռուսաց լեզու    |               | Գերմաներեն      |               | Ֆրանսերեն       |               | Ֆիզիկա          |               |
|----------|---------------------------------|---------------|-----------------|---------------|-----------------|---------------|-----------------|---------------|-----------------|---------------|-----------------|---------------|-----------------|---------------|
|          | Մատակցների թիվը                 | Միջին մրավորը | Մատակցների թիվը | Միջին մրավորը | Մատակցների թիվը | Միջին մրավորը | Մատակցների թիվը | Միջին մրավորը | Մատակցների թիվը | Միջին մրավորը | Մատակցների թիվը | Միջին մրավորը | Մատակցների թիվը | Միջին մրավորը |
| 2019     | 5701                            | 11.4          | 4837            | 12            | 4821            | 13.8          | 456             | 11.1          | 126             | 13.9          | 88              | 15.1          | 1492            | 11.5          |
| 2018     | 2715                            | 12.2          | 2553            | 11.5          | 2183            | 14            | 264             | 9.6           | 81              | 14.9          | 51              | 14.9          | 983             | 11            |
| 2017     | 5307                            | 12.9          | 4586            | 11.3          | 4158            | 14.4          | 544             | 10.2          | 119             | 15.6          | 126             | 15.6          | 1683            | 11.5          |
| 2016     | 6336                            | 13.7          | 5400            | 11.6          | 4833            | 14.1          | 652             | 9.8           | 192             | 15.3          | 173             | 15.9          | 1947            | 11.4          |
| 2015     | 6991                            | 13.7          | 5567            | 11.8          | 5243            | 14.2          | 781             | 10            | 230             | 14.9          | 194             | 15.3          | 1957            | 10.9          |
| 2014     | 7602                            | 13.2          | 6062            | 11.6          | 5441            | 13.9          | 910             | 10.6          | 284             | 14            | 230             | 15.8          | 2208            | 11.4          |
| 2013     | 8931                            | 13.1          | 6912            | 11.8          | 6361            | 15.4          | 1212            | 11            | 362             | 15.6          | 293             | 16.2          | 2489            | 11.5          |
| 2012     | 11671                           | 13.9          | 8831            | 11.6          | 7982            | 13.2          | 1242            | 10.3          | 525             | 14.4          | 438             | 14.3          | 3328            | 12.1          |
| 2011     | 1326                            | 11.4          | 1077            | 6.1           | 776             | 9.5           | 202             | 10.9          | 78              | 9.5           | 38              | 11.2          | 474             | 5.3           |
| 2010     | 11152                           | 11.4          | 9218            | 9.9           | 7712            | 13.3          | 989             | 11.2          | 528             | 13.9          | 432             | 14.6          | 4066            | 10.3          |
| 2009     | 12378                           | 11.4          | 9955            | 10.8          | 8066            | 13.9          | 1218            | 12.3          | 531             | 14.5          | 435             | 16.5          | 4677            | 10.1          |
| 2008     | 13814                           | 13            | 9859            | 14.9          | 7848            | 14.9          | 1529            | 16            | 575             | 14.7          | 514             | 16.6          |                 |               |
| 2007     | 14862                           | 15.1          |                 |               |                 |               |                 |               |                 |               |                 |               |                 |               |

| Տարեթիվը | Հայոց պատմություն |               | Կենսաբանություն |               | Քիմիա           |               | Համաշխարհային պատմություն |               | Աշխարհագրություն |               | Իսպաներեն       |               | Իտալերեն        |               | Պարսկերեն       |               |
|----------|-------------------|---------------|-----------------|---------------|-----------------|---------------|---------------------------|---------------|------------------|---------------|-----------------|---------------|-----------------|---------------|-----------------|---------------|
|          | Մատակցների թիվը   | Միջին մրավորը | Մատակցների թիվը | Միջին մրավորը | Մատակցների թիվը | Միջին մրավորը | Մատակցների թիվը           | Միջին մրավորը | Մատակցների թիվը  | Միջին մրավորը | Մատակցների թիվը | Միջին մրավորը | Մատակցների թիվը | Միջին մրավորը | Մատակցների թիվը | Միջին մրավորը |
| 2019     | 1443              | 11.5          | 1324            | 13            | 1100            | 12.2          | 41                        | 13.6          | 244              | 13.5          | 4               | 13.3          | 1               | 18.5          | 5               | 12            |
| 2018     | 726               | 12.3          | 685             | 13.5          | 584             | 12.4          | 41                        | 12.2          | 148              | 13.1          | 2               | 13.25         |                 |               | 1               | 13.75         |
| 2017     | 1331              | 12.1          | 1265            | 13.4          | 1098            | 12.7          | 90                        | 14.7          | 282              | 12.1          | 6               | 14.3          | 2               | 17.1          |                 |               |
| 2016     | 1440              | 13.3          | 1449            | 12.9          | 1183            | 12.9          | 134                       | 14.4          | 356              | 13.5          | 10              | 16.2          | 3               | 15.1          |                 |               |
| 2015     | 1673              | 13            | 1527            | 12.6          | 1194            | 12.6          | 133                       | 13.3          | 332              | 13.8          | 13              | 12.4          | 1               | 18.75         |                 |               |
| 2014     | 1906              | 12.9          | 1466            | 10.9          | 1143            | 12.4          | 141                       | 12.6          | 317              | 13.4          | 15              | 16.5          | 2               | 18.6          | 1               | 7             |
| 2013     | 2354              | 13.4          | 1788            | 14.1          | 1368            | 12.6          | 224                       | 11.5          | 346              | 14.4          | 19              | 18.8          | 5               | 14.8          | 1               | 19.25         |
| 2012     | 3126              | 10            | 1960            | 11.4          | 1537            | 10.8          | 384                       | 12.2          | 387              | 12.3          | 24              | 17.9          | 4               | 15.4          | 5               | 16.4          |
| 2011     | 524               | 10.5          | 360             | 10.3          | 251             | 9.1           | 107                       | 10.6          | 52               | 10.9          | 5               | 15.2          | 1               | 19.75         |                 |               |
| 2010     | 3313              | 11.3          | 1774            | 10.9          | 1336            | 12            | 543                       | 13.1          | 325              | 11.5          | 18              | 14.8          | 4               | 16.8          | 2               | 14.8          |
| 2009     | 3394              | 13.3          | 1799            | 11.7          | 1314            | 12            | 552                       | 12            | 394              | 13            | 18              | 16.9          | 10              | 15.7          | 2               | 16.9          |
| 2008     |                   |               |                 |               |                 |               |                           |               |                  |               | 23              | 18.9          | 4               | 18.7          |                 |               |
| 2007     |                   |               |                 |               |                 |               |                           |               |                  |               |                 |               |                 |               |                 |               |

ԳԹԿ համակարգչային և վերլուծական  
աշխատանքների բաժնի գլխավոր մասնագետ

## **2018-2019 ուսումնական տարվա 12-րդ դասարանում սովորողների պետական ավարտական քննությունների արդյունքների վիճակագրական վերլուծություն**

### **1. Ընդհանուր տեղեկություններ**

Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատությունների 12-րդ դասարաններում «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն» և «Մաթեմատիկա» առարկաներից անցկացվում են պետական ավարտական քննություններ՝ դեկտեմբերի 24-28-ը և/կամ հունիսի 1-24-ը: Դեկտեմբեր ամսին սովորողը պետական ավարտական քննություն(ներ) է հանձնում միայն այն առարկա(ներ)ից, որը(որոնք) չի ընտրել և չի ուսումնասիրելու 2-րդ կիսամյակում: Միասնական քննությանը մասնակցող սովորողը դեկտեմբերին պետական ավարտական քննություն(ներ) կարող է հանձնել միայն այն առարկա(ներ)ից, որը(որոնք) չի հանձնելու միասնական քննությունների համակարգով: Սովորողն ինքն է ընտրում, թե որ քննություն(ներ)ը հանձնի դեկտեմբերին, որը(որոնք)՝ հունիսին:

2018 թվականի դեկտեմբերին (1-ին փուլ) կամ 2019 թվականի հունիսին (2-րդ փուլ) անցկացված պետական ավարտական քննություններին մասնակցելու համար ուսումնական հաստատությունների տնօրենները դեկտեմբերի 1-ից մինչև 10-ը (1-ին փուլ) կամ փետրվարի 1-ից մինչև մարտի 15-ը



(2-րդ փուլ) ներառյալ քննություններ հանձնողների դիմում-հայտերը է-լեկտրոնային եղանակով փոխանցում են Գնահատման և թեստավորման կենտրոն (այսուհետև՝ ԳԹԿ):

Քննական առարկաների թեստերը կազմվում են ԳԹԿ-ի կողմից: Առաջադրանքների նյութն ընտրվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից երաշխավորված և հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածվող դասագրքերից և ձեռնարկներից, ինչպես նաև շտեմարաններից:

Քննությունների կազմակերպումը, անցկացումը, ինչպես նաև գրավոր աշխատանքների ստուգումն իրականացնում են ուսումնական հաստատությունները:

2018-2019 ուսումնական տարվա գրավոր պետական ավարտական քննություններն անցկացվել են ստորև ներկայացված ժամանակացույցով.

*Աղյուսակ 1*

| Քննական առարկան                 | Քննության օրը |               |
|---------------------------------|---------------|---------------|
|                                 | 1-ին փուլ     | 2-րդ փուլ     |
| Հայոց լեզու և հայ գրականություն | 24.12.2018 թ. | 05.06.2019 թ. |
| Մաթեմատիկա                      | 25.12.2018 թ. | 19.06.2019 թ. |
| Հայոց պատմություն               | 27.12.2018 թ. | 12.06.2019 թ. |

### Սանդղակավորումը

Թեստերի առաջադրանքների կատարումը գնահատվել է առավելագույնը 50 միավորով: Գնահատման 50 միավորանոց սանդղակից 20 միավորանոց սանդղակին անցումը կատարվել է համաձայն ստորև բերված աղյուսակի, որտեղ դրական (8 և

ավելի) միավորները համապատասխանում են 14 և ավելի առաջադրանքների ճիշտ կատարմանը:

Աղյուսակ 2

| Նախնական միավորը (0-50) | Միավորը 20 միավորանոց համակարգում | Նախնական միավորը (0-50) | Միավորը 20 միավորանոց համակարգում |
|-------------------------|-----------------------------------|-------------------------|-----------------------------------|
| 49-50                   | 20                                | 19-20-21                | 10                                |
| 46-47-48                | 19                                | 16-17-18                | 9                                 |
| 43-44-45                | 18                                | 14-15                   | 8                                 |
| 40-41-42                | 17                                | 12-13                   | 7                                 |
| 37-38-39                | 16                                | 10-11                   | 6                                 |
| 34-35-36                | 15                                | 8-9                     | 5                                 |
| 31-32-33                | 14                                | 6-7                     | 4                                 |
| 28-29-30                | 13                                | 4-5                     | 3                                 |
| 25-26-27                | 12                                | 2-3                     | 2                                 |
| 22-23-24                | 11                                | 0-1                     | 1                                 |

**1. 2018-2019 ՈՒՍՏԱՐՎԱ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ**

**1.1. Շրջանավարտների մասնակցությունը պետական ավարտական քննություններին**

Պետական ավարտական քննությունների վերլուծությունը կատարվել է ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 99 տոկոսի կողմից մուտքագրված շրջանավարտների գնահատականների արդյունքների հիման վրա: Հայտագրված շրջանավարտների գնահատականները չմուտքագրած կամ թերի մուտքագրած ուսումնական հաստատությունները կազմել են ընդհանուր ու-

սումնական հաստատությունների մոտավորապես մեկ տոկոսը: Այդ հաստատությունների շրջանավարտների արդյունքները չեն վերլուծվել:

Ստորև ներկայացված է երեք առարկաների քննություններին շրջանավարտների մասնակցության աղյուսակը: Հարկ է նշել, որ 1-ին փուլում հայտագրված, սակայն քննությանը չմասնակցած, ինչպես նաև անբավարար գնահատական ստացած շրջանավարտները մասնակցել են 2-րդ փուլի քննություններին:


Աղյուսակ 3

| Քննական առարկան                        | Հայտագրված շրջանավարտների թիվը | 1-ին փուլ (դեկտեմբեր)    |        | 2-րդ փուլ (հունիս) |        | Չմասնակցած շրջանավարտների թիվը | Անբավարար գնահատական ստացած շրջանավարտների թիվը |
|--|--------------------------------|--------------------------|--------|--------------------|--------|--------------------------------|---|
|  |                                | Մասնակցած շրջանավարտների |        |                    |        |                                |   |
|  |                                | թիվը                     | տոկոսը | թիվը               | տոկոսը |                                |   |
| <u>Հայոց լեզու և հայ գրականություն</u> | 13702                          | 3463                     | 25.3   | 10178              | 74.3   | 26                             | 31  |
| <u>Հայոց պատմություն</u>               | 17316                          | 8714                     | 50.3   | 8551               | 49.4   | 26                             | 32  |
| <u>Մաթեմատիկա</u>                      | 14321                          | 6039                     | 42.2   | 8210               | 57.3   | 23                             | 35  |


## 1.2. Պետական ավարտական քննությունների միավորների բաշխման հիստոգրամները

Ստորև ներկայացված են պետական ավարտական քննությունների 1-ին և 2-րդ փուլերի միավորների բաշխման հիստոգրամները: Յուրաքանչյուր հիստոգրամի վերնի ձախ անկյունում նշված են առարկայի միջին միավորը (Mean), ստանդարտ շեղումը (St.Dev) և մասնակիցների թիվը (N):


Հայոց լեզու և հայ գրականություն (1-ին փուլ)




Հայոց լեզու և հայ գրականություն (2-րդ փուլ)




Հայոց պատմություն (1-ին փուլ)




Հայոց պատմություն (2-րդ փուլ)



Մաթեմատիկա (1-ին փուլ)



Մաթեմատիկա (2-րդ փուլ)



Միավորների բաշխման հիստոգրամներում տեսնում ենք, որ միավորների բաշխման կորերը շեղված են դեպի բարձր միավորները, ինչն ավելի մանրամասն ներկայացված է վերլուծության հաջորդ բաժիններում:

### 1.3. 12-րդ դասարանի պետական ավարտական քննությունների երկու փուլերի արդյունքների վերաբերյալ վիճակագրական տվյալներ

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են յուրաքանչ-յուր առարկայից պետական ավարտական քննությունների երկու փուլերի մասնակիցների թվերը, միջին միավորները, ստանդարտ սխալները և ստանդարտ շեղումները:

Աղյուսակ 1

| <u>Առարկան</u>                         | <u>Փուլը</u> | <u>Մասնակիցների թիվը</u> | <u>Միջին միավորը</u> | <u>Ստանդարտ սխալը</u> | <u>Ստանդարտ շեղումը</u> |
|--|--------------|--------------------------|----------------------|-----------------------|-------------------------|
| <b>Հայոց լեզու և հայ գրականություն</b> | 1-ին         | 3463                     | 13.53                | 0.057                 | 3.34                    |
|  | 2-րդ         | 10178                    | 13.28                | 0.033                 | 3.34                    |
| <b>Հայոց պատմություն</b>               | 1-ին         | 8714                     | 13.71                | 0.034                 | 3.19                    |
|  | 2-րդ         | 8551                     | 12.61                | 0.034                 | 3.14                    |
| <b>Մաթեմատիկա</b>                      | 1-ին         | 6039                     | 13.27                | 0.043                 | 3.35                    |
|  | 2-րդ         | 8210                     | 12.68                | 0.038                 | 3.45                    |

Աղյուսակ 4-ում տեսնում ենք, որ «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից մասնակիցների մեծ մասը նախընտրել է ավարտական քննությունը հանձնել 2-րդ փուլում: Երեք առարկաներից էլ 1-ին փուլի մասնակիցների միջին միավորները բարձր են 2-րդ փուլի մասնակիցների միջին միավորներից, սակայն, ի տարբերություն մյուս երկու առարկաների, «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից մասնակիցների միջին միավորների տարբերությունը նշանակալի չէ: Գնահատման ստանդարտ սխալները և ստանդարտ շեղումները նորմայի սահմաններում են:

Պետական ավարտական քննությունների երկու փուլերի մասնակիցների արդյունքները միասին ներկայացված են աղյուսակ 5-ում:


Աղյուսակ 2

| Առարկան                         | Մասնակիցների թիվը | Միջին միավորը | Ստանդարտ շեղումը |
|---------------------------------|-------------------|---------------|------------------|
| Հայոց լեզու և հայ գրականություն | 13641             | 13.34         | 3.344            |
| Հայոց պատմություն               | 17265             | 13.17         | 3.215            |
| Մաթեմատիկա                      | 14249             | 12.93         | 3.421            |

**1.4. 12-րդ դասարանի պետական ավարտական քննությունների մասնակիցների առաջադիմության խմբերն ըստ առարկաների**

Հետևյալ դիագրամում պատկերված են պետական ավարտական քննությունների երկու փուլերի մասնակիցների արդյունքներն ըստ առաջադիմության՝ անբավարար, ցածր, միջին և բարձր միավորների խմբերի: Այդ խմբերը կազմվել են համապատասխանաբար 1-7, 8-13, 14-17 և 18-20 միավորներ հավաքած մասնակիցների տոկոսային թվի հիման վրա:

Դիագրամ 1




Ինչպես արդեն նկատել ենք նախորդ ենթաբաժնում՝ շրջանավարտները պետական ավարտական քննությունների 1-ին փուլում ցուցաբերել են ավելի բարձր արդյունքներ. «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից՝ ոչ նշանակալի, «Հայոց պատմություն» և «Մաթեմատիկա» առարկաներից՝ նշանակալի: Առաջադիմության խմբերով վերլուծությունում տեսնում ենք, որ այդ տարբերություններն ակնառու են հատկապես 8-13 և 18-20 միավորներ ստացած շրջանավարտների խմբերում:

## 2. 2013-2019 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ 12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Ստորև բերված դիագրամում ներկայացված է 2013-2019 թվականներին պետական ավարտական քննությունների մասնակիցների թվերի համեմատությունը՝ «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն» և «Մաթեմատիկա» առարկաներից:

Դիագրամ 2





### 3. 12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՄԱՍԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

#### 3.1. 2019 թվականի պետական ավարտական քննությունների և միասնական քննությունների ավարտական մասի արդյունքների համեմատությունը

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են վիճակագրական տվյալներ 2019 թվականի պետական ավարտական քննությունների և միասնական քննությունների ավարտական մասի արդյունքների վերաբերյալ:

Այս բաժնի մեկնաբանությունը և քննությունների արդյունքների համեմատությունները պահանջում են որոշակի զգուշություն և սահմանափակումներ, քանի որ դրանք տարբեր քննություններից և տարբեր թեստերից են, թեև երկու դեպքում էլ միավորները միջնակարգ կրթության ատեստատում գրանցելու համար համապատասխանեցվել են 20 միավորանոց սանդղակին:

Աղյուսակ 3

| <u>Առարկան</u>                  | <u>Քննությունը</u>      | <u>Մասնակիցների թիվը</u> | <u>Միջին միավորը</u> | <u>Մասնագրտ սխալը</u> | <u>Մասնագրտ շեղումը</u> |
|---------------------------------|-------------------------|--------------------------|----------------------|-----------------------|-------------------------|
| Հայոց լեզու և հայ գրականություն | Ավարտական               | 13641                    | 13.34                | 0.029                 | 3.34                    |
|                                 | Միասնական ավարտական մաս | 5370                     | 13.64                | 0.046                 | 3.39                    |
| Հայոց պատմություն               | Ավարտական               | 17265                    | 13.17                | 0.024                 | 3.21                    |
|                                 | Միասնական ավարտական մաս | 1362                     | 13.81                | 0.107                 | 3.95                    |
| Մաթեմատիկա                      | Ավարտական               | 14249                    | 12.93                | 0.029                 | 3.42                    |
|                                 | Միասնական ավարտական մաս | 4546                     | 15.97                | 0.043                 | 2.87                    |


Աղյուսակ 6-ում տեսնում ենք, որ միասնական քննություն հանձնող շրջանավարտների ավարտական մասի միջին միավորները բարձր են եղել պետական ավարտական քննություն հանձ-

նող շրջանավարտների միջին միավորներից: Ամենամեծ տարբերությունը՝ 3.04 միավոր, գրանցվել է «Մաթեմատիկա» առարկայից:

### 3.2. Պետական ավարտական քննությունների և միասնական քննությունների ավարտական մասի մասնակիցների առաջադիմության խմբերն ըստ առարկաների

Դիագրամ 3-ում «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն» և «Մաթեմատիկա» առարկաներից ներկայացված են 2019 թվականի պետական ավարտական քննությունների և միասնական քննությունների ավարտական մասից մասնակիցների ստացած միավորների տոկոսային թվերն ըստ առաջադիմության չորս խմբերի:

Դիագրամ 3



Վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ պետական ավարտական քննությունների և միասնական քննությունների ավարտական մասի միավորների ընդհանուր բաշխվածությունը տարբեր է հատկապես «Հայոց պատմություն» և «Մաթեմատիկա» առարկաներից: Ինչպես տեսնում ենք դիագրամում, պետական ավարտական քննությունների մասնակիցների 52.1 տոկոսը հայոց

պատմությունից և 55.1 տոկոսը մաթեմատիկայից ստացել են 8-13 գնահատականներ: Միասնական քննությունների ավարտական մասի մասնակիցների 8-13 գնահատականներ ստացածների խումբը կազմել է, համապատասխանաբար, 42.4 տոկոս և 13.8 տոկոս: Եվ հակառակը. նշված առարկաներից միասնական քննությունների ավարտական մասից 18-ից բարձր միավոր հավաքած մասնակիցների խումբը մոտ երկու անգամ մեծ է պետական ավարտական քննությունների մասնակիցների համապատասխան խմբից: «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից պետական ավարտական քննություններից և միասնական քննությունների ավարտական մասից մասնակիցների ստացած միավորների խմբերի տոկոսային թվերի տարբերությունները նշանակալի չեն:

**4. 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ 12-Դ  
ԴԱՍԱՐԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ  
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ  
ՄԱՍԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ  
ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ**


Աղյուսակ 7-ում ներկայացված են 12-րդ դասարանի պետական ավարտական և միասնական քննությունների ավարտական մասի արդյունքներն ըստ վարչատարածքային միավորների: Մգացված են այն միջին միավորները, որոնք տվյալ առարկայի ընդհանուր միջին միավորից բարձր են:

*Աղյուսակ 4*

| Վարչատարածքային միավորը  | Մասնակիցների թիվը | Միջին միավորը<br>(ստանդարտ շեղումը) |                                   | Նվազագույն միավոր | Առավելագույն միավորը |
|--|-------------------|-------------------------------------|-----------------------------------|-------------------|----------------------|
|  |                   | Ավարտական քննություն                | Միասնական քննության ավարտական մաս |                   |                      |
| <b><u>Հայոց լեզու և հայ գրականություն</u> (միջին միավորը՝ 13.34 և 13.64)</b> |                   |                                     |                                   |                   |                      |
| Երևան  | 4076              | 13.65 (3.25)                        | 13.74 (3.37)                      | 2                 | 20                   |
| Շիրակ  | 1206              | 13.71 (3.38)                        | 13.95 (3.32)                      | 7                 | 20                   |
| Լոռի   | 1134              | 13.35 (3.36)                        | 13.49 (3.33)                      | 7                 | 20                   |
| Արագածոտն  | 811               | 13.04 (3.28)                        | 12.99 (3.31)                      | 1                 | 20                   |
| Սյունիք  | 684               | 13.32 (3.14)                        | 13.75 (3.62)                      | 8                 | 20                   |
| Արարատ   | 1064              | 12.61 (3.41)                        | 14.25 (3.17)                      | 4                 | 20                   |
| Գեղարքունիք  | 1276              | 13.08 (3.35)                        | 13.96 (3.29)                      | 6                 | 20                   |
| Արմավիր  | 1251              | 13.00 (3.37)                        | 13.00 (3.26)                      | 8                 | 20                   |
| Տավուշ   | 725               | 12.69 (3.46)                        | 13.27 (3.56)                      | 5                 | 20                   |
| Վայոց ձոր  | 304               | 14.06 (3.32)                        | 12.99 (3.11)                      | 8                 | 20                   |
| Վոտաչք   | 1110              | 13.68 (3.37)                        | 14.73 (3.29)                      | 4                 | 20                   |

| <u>Հայոց պատմություն</u> (միջին միավորը՝ 13.17 և 13.81) |      |                     |                     |   |    |
|---|------|---------------------|---------------------|---|----|
| Երևան   | 5251 | <b>13.45</b> (3.11) | <b>14.54</b> (3.90) | 1 | 20 |
| Շիրակ   | 1543 | <b>13.60</b> (3.21) | <b>13.84</b> (3.88) | 8 | 20 |
| Լոռի  | 1400 | <b>13.44</b> (3.24) | <b>14.07</b> (3.63) | 8 | 20 |
| Արագածոտն   | 1005 | 12.75 (3.13)        | 12.42 (3.98)        | 8 | 20 |
| Սյունիք   | 914  | 12.92 (3.35)        | 13.63 (4.22)        | 8 | 20 |
| Արարատ  | 1335 | 12.43 (3.28)        | <b>14.03</b> (3.96) | 5 | 20 |
| Գեղարքունիք   | 1494 | 12.65 (3.23)        | <b>14.19</b> (3.78) | 3 | 20 |
| Արմավիր   | 1528 | 13.03 (3.31)        | 13.03 (3.70)        | 8 | 20 |
| Տավուշ  | 927  | 12.50 (3.09)        | <b>13.96</b> (3.92) | 5 | 20 |
| Վայոց ձոր   | 388  | <b>14.34</b> (3.10) | 13.37 (4.35)        | 8 | 20 |
| Կոտայք  | 1480 | <b>13.33</b> (3.14) | <b>15.12</b> (3.81) | 8 | 20 |
| <u>Մաթեմատիկա</u> (միջին միավորը՝ 12.93 և 15.97)        |      |                     |                     |   |    |
| Երևան   | 4151 | <b>13.63</b> (3.58) | <b>16.34</b> (2.57) | 1 | 20 |
| Շիրակ   | 1291 | <b>13.13</b> (3.38) | <b>16.21</b> (2.68) | 6 | 20 |
| Լոռի  | 1173 | 12.92 (3.06)        | 15.57 (3.23)        | 7 | 20 |
| Արագածոտն   | 838  | 12.59 (3.22)        | 15.65 (2.55)        | 8 | 20 |
| Սյունիք   | 720  | 12.66 (3.39)        | <b>16.57</b> (2.72) | 8 | 20 |
| Արարատ  | 1158 | 11.81 (3.24)        | <b>16.04</b> (2.24) | 7 | 20 |
| Գեղարքունիք   | 1333 | 12.75 (3.29)        | 15.39 (3.18)        | 6 | 20 |
| Արմավիր   | 1321 | 12.64 (3.43)        | 15.11 (3.48)        | 8 | 20 |
| Տավուշ  | 772  | 12.26 (3.22)        | 15.15 (3.36)        | 3 | 20 |
| Վայոց ձոր   | 302  | <b>13.22</b> (3.23) | <b>16.09</b> (2.45) | 8 | 20 |
| Կոտայք  | 1190 | 12.61 (3.36)        | <b>16.52</b> (2.41) | 4 | 20 |

Շրջանավարտների միջին միավորների համեմատություններն ըստ վարչատարածքային միավորների ավելի ակնառու են դիտարկում 4-ում:



Ըստ վարչատարածքային միավորների վերլուծության, երեք առարկաներից էլ ամենաբարձր միջին միավորները գրանցել են մայրաքաղաքի, ինչպես նաև Վայոց ձորի և Շիրակի մարզերի շրջանավարտները, ամենացածր միջին միավորները գրանցել են Տավուշի և Արարատի մարզերի շրջանավարտները:

## 5. 2019 թ. 12-րդ ԴԱՍԱՐԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՍԵՌԵՐԻ


Աղյուսակ 5-ում ըստ սեռերի ներկայացված է նշված առարկաներից մասնակիցների թիվը, միջին միավորը և ստանդարտ շեղումը:

Աղյուսակ 5

| <u>Առարկան</u>                         | <u>Տղաներ</u> |                      |                         | <u>Աղջիկներ</u> |                      |                         |
|--|---------------|----------------------|-------------------------|-----------------|----------------------|-------------------------|
|  | <u>Թիվը</u>   | <u>Միջին միավորը</u> | <u>Ստանդարտ շեղումը</u> | <u>Թիվը</u>     | <u>Միջին միավորը</u> | <u>Ստանդարտ շեղումը</u> |
| <u>Հայոց լեզու և հայ գրականություն</u> | 7637          | 12.61                | 3.287                   | 6004            | 14.28                | 3.176                   |
| <u>Հայոց պատմություն</u>               | 8360          | 12.40                | 3.177                   | 8905            | 13.89                | 13.82                   |
| <u>Մաթեմատիկա</u>                      | 6270          | 11.95                | 3.327                   | 7979            | 13.70                | 3.296                   |

Աղյուսակ 5-ում ներկայացված տվյալները վկայում են, որ գրեթե բոլոր առարկաներից աղջիկները ցուցաբերել են ավելի բարձր առաջադիմություն, քան տղաները: Դա ավելի պարզ է երևում դիագրամ 4-ում, որտեղ ներկայացված են տղաների և աղջիկների միջին միավորների համեմատություններն ըստ առարկաների:


Դիագրամ 4




Ըստ սեռերի համեմատության մեջ տեսնում ենք, որ բոլոր առարկաներից աղջիկները տղաներից 1.5-1.7 միավորով ավելի բարձր առաջադիմություն են ցուցաբերել:

Ստորև ներկայացված հիստոգրամներում տեսնում ենք տղաների և աղջիկների միավորների բաշխվածության տարբերությունները:


**Հայոց լեզու և հայ գրականություն**



**Հայոց պատմություն**



**Մաթեմատիկա**





Ինչպես նշվել է 3.2 ենթաբաժնում՝ պետական ավարտական քննությունների մասնակիցների մեծ մասը ստացել է 8-13 գնահատական, հիստոգրամներում տեսնում ենք, որ այդ խմբում մեծամասնություն են կազմում տղաները:


## **6. ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԵՐԻ**

Աղյուսակ 6-ում ներկայացված են երեք առարկաներից պետական ավարտական քննությունների արդյունքների վերաբերյալ վիճակագրական տվյալներ՝ ըստ ուսումնական հաստատությունների տիպերի: Մգացված են այն միջին միավորները, որոնք տվյալ առարկայի ընդհանուր միջին միավորից բարձր են:

| Ուսումնական հաստատության տիպը                                 | Մասնակիցների ընդհանուր թիվը | Միջին միավորը | Մտանդարտ շեղումը | Նվազագույն միավոր | Առավելագույն միավորը | Անբավարար գնահատական ստացած մասնակիցների թիվը |
|---|-----------------------------|---------------|------------------|-------------------|----------------------|---|
| <b>Հայոց լեզու և հայ գրականություն (միջին միավորը՝ 13.34)</b> |                             |               |                  |                   |                      |   |
| Ավագ դպրոց  | 5151                        | <b>13.63</b>  | 3.43             | 2                 | 20                   | 17  |
| Միջնակարգ դպրոց   | 6604                        | 12.89         | 3.278            | 1                 | 20                   | 12  |
| Հենակետային վարժարան  | 972                         | <b>13.76</b>  | 2.967            | 8                 | 20                   | -   |
| Հատուկ դպրոց  | 31                          | 10.45         | 2.755            | 8                 | 18                   | -   |
| Վարժարան  | 368                         | <b>15.06</b>  | 2.942            | 8                 | 20                   | -   |
| Կրթահամալիր   | 157                         | <b>14.96</b>  | 2.72             | 7                 | 20                   | 1   |
| Միջն. մասնագիտ. ուս. հաստատ.                                  | 105                         | <b>13.55</b>  | 2.879            | 8                 | 20                   | -   |
| Ոչ պետական ուս. հաստ.   | 253                         | <b>14.74</b>  | 3.305            | 7                 | 20                   | 1   |
| <b>Հայոց պատմություն (միջին միավորը՝ 13.17)</b>               |                             |               |                  |                   |                      |   |
| Ավագ դպրոց  | 7025                        | <b>13.35</b>  | 3.256            | 1                 | 20                   | 21  |
| Միջնակարգ դպրոց   | 7928                        | 12.80         | 3.164            | 3                 | 20                   | 7   |
| Հենակետային վարժարան  | 1211                        | <b>13.33</b>  | 3.022            | 1                 | 20                   | 4   |
| Հատուկ դպրոց  | 34                          | 11.79         | 2.783            | 8                 | 19                   | -   |
| Վարժարան  | 464                         | <b>15.28</b>  | 2.715            | 8                 | 20                   | -   |
| Կրթահամալիր   | 183                         | <b>14.56</b>  | 2.71             | 8                 | 20                   | -   |
| Միջն. մասնագիտ. ուս. հաստատ.                                  | 111                         | 11.68         | 2.908            | 8                 | 20                   | -   |
| Ոչ պետական ուս. հաստ.   | 309                         | <b>14.54</b>  | 3.109            | 8                 | 20                   | -   |
| <b>Մաթեմատիկա (միջին միավորը՝ 12.93)</b>                      |                             |               |                  |                   |                      |   |
| Ավագ դպրոց  | 5772                        | <b>13.25</b>  | 3.51             | 1                 | 20                   | 25  |
| Միջնակարգ դպրոց   | 6937                        | 12.32         | 3.167            | 3                 | 20                   | 7   |
| Հենակետային վարժարան  | 682                         | <b>13.83</b>  | 3.184            | 8                 | 20                   | -   |
| Հատուկ դպրոց  | 31                          | 11.39         | 2.86             | 8                 | 19                   | -   |
| Վարժարան  | 288                         | <b>16.23</b>  | 2.987            | 8                 | 20                   | --  |
| Կրթահամալիր   | 159                         | <b>16.01</b>  | 3.924            | 8                 | 20                   | -   |
| Միջն. մասնագիտ. ուս. հաստատ.                                  | 100                         | 11.46         | 3.023            | 8                 | 20                   | -   |
| Ոչ պետական ուս. հաստ.   | 280                         | <b>14.84</b>  | 3.443            | 6                 | 20                   | 3   |

Միջին միավորներն ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի ավելի տեսանելի ներկայացված են դիագրամ 5-ում:

Դիագրամ 5



Վերլուծությունից պարզվել է, որ երեք առարկաներից էլ ամենաբարձր արդյունքները ցուցաբերել են կրթահամալիրների, վարժարանների և ոչ պետական դպրոցների աշակերտները, նշանակալիորեն ցածր արդյունքներ են ցուցաբերել հատուկ դպրոցների և միջնակարգ մասնագիտացված ուսումնական հաստատությունների աշակերտները:

## 12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԻՊԵՐԻ

Աղյուսակ 10-ում ներկայացված են «Հայոց լեզու և հայ գրականություն», «Մաթեմատիկա» և «Հայոց պատմություն» առարկաներից ավարտական քննությունների մասնակիցների թիվը, տոկոսը, միջին միավորը և ստանդարտ շեղումն ըստ բնակավայրերի տիպերի: Մզացված են այն միջին միավորները, որոնք մեծ կամ հավասար են համապատասխան առարկայի ընդհանուր միջին միավորին:

*Աղյուսակ 7*

| Բնակավայրի տիպը                            | Հայոց լեզու և հայ գրականություն |        |                          | Հայոց պատմություն |        |                         | Մաթեմատիկա   |        |                          |
|--|---------------------------------|--------|--------------------------|-------------------|--------|-------------------------|--------------|--------|--------------------------|
|  | Մասնակիցների                    |        | Միջին միավորը (ստ. շեղ.) | Մասնակիցների      |        | Միջին միավոր (ստ. շեղ.) | Մասնակիցների |        | Միջին միավորը (ստ. շեղ.) |
|  | թիվը                            | տոկոսը |                          | թիվը              | տոկոսը |                         | թիվը         | տոկոսը |                          |
| <b>Խոշոր քաղաքներ</b>                      | 5100                            | 37.4 % | <b>13.73</b> (3.6)       | 6578              | 38.1 % | <b>13.56</b> (3.1)      | 5182         | 36.4 % | <b>13.60</b> (3.5)       |
| <b>Միջին քաղաքներ</b>                      | 1263                            | 9.3 %  | <b>13.94</b> (3.4)       | 1773              | 10.3 % | <b>13.30</b> (3.4)      | 1380         | 9.7 %  | <b>13.05</b> (3.6)       |
| <b>Փոքր քաղաքներ</b>                       | 1254                            | 9.2 %  | <b>13.53</b> (3.6)       | 1703              | 9.9 %  | <b>13.48</b> (3.2)      | 1353         | 9.5 %  | <b>13.17</b> (3.4)       |
| <b>Գյուղեր</b>                             | 4574                            | 33.5 % | 12.92 (3.3)              | 5504              | 31.9 % | 12.85 (3.2)             | 4800         | 33.7 % | 12.34 (3.2)              |
| <b>Մանհանտներձ և հեռավոր գյուղեր</b>       | 720                             | 5.3 %  | 12.52 (3.3)              | 881               | 5.1 %  | 12.33 (3.1)             | 777          | 5.5 %  | 11.95 (3.1)              |
| <b>Բարձրլեռնային գյուղեր</b>               | 690                             | 5.1 %  | 12.82 (3.4)              | 784               | 4.5 %  | 12.11 (3.2)             | 718          | 5.0 %  | 12.41 (3.2)              |
| <b>Մանհանտներձ և բարձրլեռնային գյուղեր</b> | 40                              | 0.3 %  | 11.65 (3.2)              | 42                | 0.2 %  | 12.81 (2.7)             | 39           | 0.3 %  | 11.51 (2.4)              |
| <b>Ընդհանուր</b>                           | 13641                           | 100 %  | <b>13.34</b> (3.3)       | 17265             | 100 %  | <b>13.17</b> (3.2)      | 14249        | 100 %  | <b>12.93</b> (3.4)       |

Վերլուծության արդյունքում պարզ է դարձել, որ քաղաքային բնակավայրերի շրջանավարտները երեք առարկաներից էլ ցուցաբերել են ընդհանուր միջին միավորից բարձր արդյունքներ, գյուղական բնակավայրերի շրջանավարտները՝ ցածր արդյունքներ:

---

Ալինա ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԳԹԿ համակարգչային և վերլուծական աշխատանքների բաժնի  
գլխավոր մասնագետ

## **2018-2019 ուսումնական տարվա 9-րդ դասարանում սովորողների ավարտական քննությունների արդյունքների վիճակագրական վերլուծություն**

### **1. Ընդհանուր տեղեկություններ**

9-րդ դասարանի (հանրակրթական հիմնական ծրագրերի 2-րդ աստիճանի ավարտական դասարան) բոլոր ուսումնական առարկաներից տարեկան 4-10 միավոր և ավարտական քննություններից 8-20 միավոր գնահատված աշակերտը ստանում է հիմնական կրթության վկայական:

2019 թվականին Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատությունների 9-րդ դասարաններում անցկացվել են և՛ կենտրոնացված ավարտական քննություն՝ «Հայոց լեզու» առարկայից, և՛ ավարտական քննություններ՝ համաձայն հետևյալ ժամանակացույցի.

| Քննությունը   | Քննության տեսակը     | Քննության օրը                             |
|---|----------------------|---|
| <b>Հայոց լեզու</b>  | Կենտրոնացված, գրավոր | 26.05.2019 թ.                             |
| <b>Հայ գրականություն</b>  | Բանավոր              | 03.06.2019 թ.                             |
| <b>Մաթեմատիկա</b>   | Գրավոր               | 06.06.2019 թ.                             |
| <b>Օտար լեզու</b><br>(«Ռուսաց լեզու», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն» և այլ լեզուներ, սովորողի ընտրությամբ) | Բանավոր              | 10.06.2019 թ.                             |
| <b>Բնագիտական առարկաներ</b><br>(«Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն», սովորողի ընտրությամբ)   | Գրավոր               | 13.06.2019 թ.                             |
| <b>Հայոց պատմություն</b>  | Բանավոր              | 17.06.2019 թ.                             |
| <b>Ռուսաց լեզու (ռուսական դաս.)</b>   | Բանավոր              | Քննաշրջանի ընթացքում                      |
| <b>Ֆիզկուլտուրա</b>   |                      | Քննություններն սկսելուց առնվազն 5 օր առաջ |

Գրավոր քննությունների տևողությունը եղել է 120 րոպե: Քննական թեստերի առաջադրանքները կազմվել են Գնահատման և թեստավորման կենտրոնի (այսուհետև՝ ԳԹԿ) կողմից, առաջադրանքներն ընտրվել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից երաշխավորված և հանրակրթական ուսումնական հաստատությունում գործածվող դասագրքերից կամ ձեռնարկներից: Ինչպես նշվեց, այս տարի «Հայոց լեզու» առարկայից քննությունն անցկացվել է կենտրոնացված ձևով, թեստերում եղել են և՛ սովորական թեստային առաջադրանքներ, և՛ ազատ շարադրանք: Նախորդ երկու տարիներին աշակերտները գրել են փոխադրություն: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են վերջին երեք տարիների վիճակագրական տվյալներ «Հայոց լեզու» առարկայից:

|                | Մասնակիցների թիվը | Դրական միավորի շեմը չհաղթահարած աշակերտների |        | 18-20 միավոր ստացած աշակերտների |        | Միջին միավորները |
|----------------|-------------------|---|--------|---------------------------------|--------|------------------|
|                |                   | թիվը  | տոկոսը | թիվը                            | տոկոսը |                  |
| <b>2019 թ.</b> | 31119             | 1665  | 5.4 %  | 700                             | 2.2 %  | 12.17            |
| <b>2018 թ.</b> | 29186             | 331   | 1.1 %  | 4097                            | 14.1 % | 12.69            |
| <b>2017 թ.</b> | 29084             | 352   | 1.2 %  | 4200                            | 14.4 % | 12.81            |

2019 թվականի կենտրոնացված և ավարտական քննություններն անցկացվել են երկու փուլերով: Առաջին փուլին մասնակցել են ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 9-րդ դասարանի աշակերտները, որոնց դիմում-հայտերը և ցուցակ-հայտերը հաստատության տնօրենը լրացրել և ԳԹԿ է փոխանցել փետրվարի 1-ից մինչև մարտի 10 ընկած ժամանակահատվածում: Երկրորդ փուլին մասնակցել են նախորդ քննությանը հիվանդության պատճառով չներկայացած կամ դրական միավորների շեմը չհաղթահարած աշակերտները:

Ավարտական քննությունների ավարտից հետո սովորողների ամփոփիչ գնահատականը, քննությունների գնահատականները հանրակրթական ուսումնական հաստատությունների օպերատորների կողմից առցանց համակարգով մուտքագրվել են ԳԹԿ տվյալների բազա:

Ավարտական քննությունների ամփոփիչ գնահատականը որոշվում է թեստի առաջադրանքներից աշակերտի վաստակած բոլոր միավորների գումարով, որը կազմել է 35 միավոր ավարտական քննության և 40 միավոր կենտրոնացված ավարտական քննության դեպքում: Գնահատման 35 միավորանոց սանդղակից 20 միավորանոց սանդղակին անցումը կատարվել է համաձայն ստորև բերված աղյուսակի, որտեղ 20 միավորանոց համակարգում դրական միավորի շեմ է համարվում 8-ը:

| Միավորը<br>20 միավորանոց<br>համակարգում | Նախնական<br>միավորը<br>(0-35) | Նախնական<br>միավորը<br>(0-40) |
|---|-------------------------------|-------------------------------|
| 1                                       | 0                             | 0-1                           |
| 2                                       | 1                             | 2                             |
| 3                                       | 2                             | 3                             |
| 4                                       | 3                             | 4                             |
| 5                                       | 4                             | 5                             |
| 6                                       | 5-6                           | 6                             |
| 7                                       | 7-8                           | 7-8                           |
| <b>8</b>                                | <b>9-10</b>                   | <b>9-10</b>                   |
| 9                                       | 11-12                         | 11-13                         |
| 10                                      | 13-14                         | 14-16                         |
| 11                                      | 15-17                         | 17-19                         |
| 12                                      | 18-20                         | 20-22                         |
| 13                                      | 21-23                         | 23-25                         |
| 14                                      | 24-26                         | 26-28                         |
| 15                                      | 27-28                         | 29-31                         |
| 16                                      | 29-30                         | 32-34                         |
| 17                                      | <b>31-32</b>                  | <b>35-36</b>                  |
| 18                                      | <b>33</b>                     | 37-38                         |
| 19                                      | <b>34</b>                     | 39                            |
| 20                                      | 35                            | 40                            |

## 2. 2019 թ. 9-րդ դասարանի ավարտական քննությունների արդյունքները


### 2.1. Միավորների բաշխման հիստոգրամները

Միավորների բաշխման հիստոգրամը սյուների հաջորդականություն է, որոնցից յուրաքանչյուրը կառուցվում է համապատասխան միավորի (կամ միավորների խմբի) հիման վրա: Մյան բարձ-




ընթացումը համապատասխանում է միավորի հաճախությանը (տվյալ միավորը հավաքած աշակերտների թվին):


*Հիստոգրամ 1*




Գերմաներեն (բանավոր)




Ֆրանսերեն (բանավոր)




Աշխարհագրություն (գրավոր)




Կենսաբանություն (գրավոր)



Ֆիզիկա (գրավոր)



Քիմիա (գրավոր)



Յուրաքանչյուր հիստոգրամի վերևի ձախ անկյունում նշված են առարկայի միջին միավորը<sup>11</sup> (Mean), ստանդարտ շեղումը<sup>12</sup> (St.Dev) և մասնակիցների թիվը (N):

Բաշխման հիստոգրամներից երևում է, որ ի տարբերություն կենտրոնացված ավարտական քննության, որտեղ միավորների բաշխումը համաչափ է, ավարտական քննության գրեթե բոլոր առարկաներից (բացառությամբ բնագիտական առարկաների) 8 միավոր ստացածների թիվը զգալիորեն բարձր է այլ միավորներ ստա-

<sup>1</sup> Միջին միավորը բնորոշում է քննություն հանձնողների գիտելիքների միջին մակարդակը:

<sup>2</sup> Ստանդարտ շեղումը միջին միավորի հուսալիության չափման միջոց է:

ցածների թվից, ակնհայտ է, որ ցածր միավորներն արհեստականորեն բարձրացվել են դպրոցների կողմից: Երկու տեսակի քննությունների դեպքում էլ միավորների բաշխման կորերը շեղված են դեպի բարձր միավորները:

## 2.2. Վիճակագրական տվյալներ ավարտական քննությունների արդյունքների վերաբերյալ

Աղյուսակ 4-ում յուրաքանչյուր առարկայի համար ներկայացված են 9-րդ դասարանի ավարտական քննությունների արդյունքների վերաբերյալ վիճակագրական տվյալներ՝ մասնակիցների թիվը, միջին միավորը, ստանդարտ սխալը և ստանդարտ շեղումը:

Աղյուսակ 4

| Առարկան                | Մասնակիցների թիվը | Միջին միավորը | Ստանդարտ շեղումը | Ստանդարտ սխալը |
|------------------------|-------------------|---------------|------------------|----------------|
| Հայոց լեզու (գ.)       | 31119             | 12.17         | 2.873            | 0.016          |
| Հայ գրականություն (բ.) | 31077             | 13.30         | 4.177            | 0.024          |
| Հայոց պատմություն (բ.) | 30354             | 12.58         | 4.104            | 0.024          |
| Մաթեմատիկա (գ.)        | 31442             | 12.04         | 3.215            | 0.018          |
| Աշխարհագրություն (գ.)  | 12009             | 12.69         | 2.895            | 0.028          |
| Կենսաբանություն (գ.)   | 12144             | 13.42         | 3.094            | 0.029          |
| Քիմիա (գ.)             | 1819              | 13.62         | 3.546            | 0.085          |
| Ֆիզիկա (գ.)            | 5424              | 13.31         | 3.191            | 0.045          |
| Ռուսաց լեզու (բ.)      | 19824             | 13.11         | 4.232            | 0.030          |
| Անգլերեն (բ.)          | 9876              | 15.28         | 3.975            | 0.040          |
| Գերմաներեն (բ.)        | 860               | 13.38         | 4.334            | 0.148          |
| Ֆրանսերեն (բ.)         | 570               | 14.30         | 4.114            | 0.172          |

Որքան փոքր է ստանդարտ շեղումը, այնքան միջին միավորը հուսալի է: Այսինքն՝ որքան միավորները համախմբված են միջին միավորի շուրջը, այնքան լավ է այդ միջին միավորը բնորոշում


տվյալ բազմությունը:

Ինչպես նախորդ տարիներին, այս տարի նույնպես ամենաբարձր միջին միավորը գրանցվել է «Անգլերեն» առարկայից (15.28), իսկ ամենացածրը՝ «Մաթեմատիկա» առարկայից (12.04):

### 2.3. Մասնակիցների առաջադիմության խմբերն ըստ առարկաների

Հետևյալ դիագրամում պատկերված են 2019 թվականի 9-րդ դասարանի ավարտական քննություններից աշակերտների արդյունքներն ըստ առաջադիմության՝ անբավարար, ցածր, միջին և բարձր միավորների խմբերի: Այդ խմբերը կազմվել են համապատասխանաբար 1-7, 8-13, 14-17 և 18-20 միավորներ ստացած մասնակիցների տոկոսային թվի հիման վրա:

Դիագրամ 1




Ի տարբերություն նախորդ տարիների, այս տարի «Հայոց լեզու» առարկայից ավարտական քննությունն անցկացվել է կենտրոնացված ձևով, դիագրամում տեսնում ենք, որ այդ քննությունից

բարձր՝ 18-20 միավորներ հավաքել է աշակերտների 2.2 տոկոսը, մինչդեռ ավարտական քննություններին, հատկապես «Անգլերեն» առարկայից, գրանցվել է մինչև 41.1 տոկոս բարձր միավորներ: Ավարտական քննություններից անբավարար գնահատականներ ստացել է աշակերտների 0-0.5 տոկոսը, կենտրոնացված քննությունից՝ 5.4 տոկոսը: Կենտրոնացված ավարտական և ավարտական քննություններ հանձնած աշակերտների ցածր միավորներ հավաքած խմբերը նշանակալիորեն տարբերվել են «Անգլերեն» և «Ֆրանսերեն» առարկաներից:

### **3. 2013-2019 թվականների 9-րդ դասարանի ավարտական քննությունների մասնակիցների թվերի համեմատություն**

Դիագրամ 2-ում ներկայացված են 2013-2019 թվականներին «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Մաթեմատիկա» առարկաներից, օտար լեզուներից, ինչպես նաև բնագիտական առարկաներից ավարտական քննությունների մասնակիցների թվերի համեմատությունները:




Դիագրամում տեսնում ենք, որ 2013-2015 թվականներին մասնակիցների թիվը նվազել է: 2014-2015 թվականին մասնակիցների թվի կտրուկ նվազումը, այնուհետև 2015-2016 թվականին կտրուկ աճը պայմանավորված է հանրակրթական հիմնական ծրագրերի փոփոխությամբ՝ 11-ամյա կրթությունից 12-ամյայի անցումով: Հանրակրթական հիմնական ծրագրերի փոփոխության մասին մանրամասն ներկայացված է 2014-2015 ուսումնական տարվա 9-րդ դասարանի ավարտական քննությունների արդյունքների վիճակագրական վերլուծության մեջ<sup>13</sup>: 2016-2019 թվականներին նկատվել է մասնակիցների թվի աճ:

<sup>3</sup> [2014-2015 ուսումնական տարվա 9-րդ դասարանի ավարտական քննությունների արդյունքների վիճակագրական վերլուծություն, էջ 7:](#)

#### 4. Ավարտական քննություններին 9-րդ դասարանի աշակերտների ընտրությունը օտար լեզուներից և բնագիտական առարկաներից

Ստորև բերված դիագրամներում ներկայացված է աշակերտների ընտրությունը բնագիտական առարկաներից և օտար լեզուներից՝ տոկոսային թվերով:


Դիագրամ 3



Բնագիտական առարկաների ընտրության դեպքում, ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս շրջանավարտները նախապատվությունը տվել են «Կենսաբանություն» և «Աշխարհագրություն» առարկաներին, այնուհետև «Ֆիզիկա» առարկային, իսկ «Քիմիա» առարկան ընտրել է մասնակիցների ընդամենը 5.8 տոկոսը: Օտար լեզուներից մասնակիցների մոտ 63.7 տոկոսը նախընտրել է «Ռուսաց լեզու» առարկան:

Մասնակիցների միջին միավորները բնագիտական առարկաներից և օտար լեզուներից ներկայացված են դիագրամ 4-ում:

Դիագրամ 4



Վերլուծության արդյունքում տեսնում ենք, որ բնագիտական առարկաների միջին միավորները (12.7-13.6) նշանակալիորեն չեն տարբերվում: Օտար լեզուներից անգլերենի միջին միավորը (15.3) նշանակալիորեն բարձր է մյուս օտար լեզուների միջին միավորներից, որոնք նույնպես նշանակալիորեն չեն տարբերվում (13.1-14.3):

### 5. 2019 թ. 9-րդ դասարանի ավարտական քննությունների արդյունքներն ըստ ՀՀ վարչատարածքային միավորների

Աղյուսակ 5-ում ներկայացված են բոլոր առարկաներից մասնակիցների ավարտական քննությունների միջին միավորները (ստանդարտ շեղումը) ըստ վարչատարածքային միավորների: Մուգ երանգով նշված են այն միջին միավորները, որոնք տվյալ առարկայի ընդհանուր միջին միավորից բարձր են կամ հավասար:

Աղյուսակ 5

| Վարչատարածքային միավորը | Միջին միավորը (ստանդարտ շեղումը) |                          |                           |                     |                              |                       |
|-------------------------|----------------------------------|--------------------------|---------------------------|---------------------|------------------------------|-----------------------|
|                         | Հայոց լեզու (12.17)              | Հայ գրականություն (13.3) | Հայոց պատմություն (12.58) | Մաթեմատիկա (12.04)  | Բնագիտական առարկաներ (13.13) | Օտար լեզուներ (13.83) |
| Արագածոտն               | <b>12.92</b> (2.63)              | 13.13 (4.05)             | 12.57 (3.93)              | 11.73 (3.02)        | <b>13.37</b> (3.24)          | 13.77 (4.17)          |
| Արարատ                  | <b>12.21</b> (2.90)              | 12.45 (4.11)             | 11.68 (3.88)              | 11.10 (2.94)        | <b>13.49</b> (3.06)          | <b>14.87</b> (4.11)   |
| Արմավիր                 | 11.83 (2.95)                     | 12.55 (4.18)             | 11.89 (3.92)              | 11.56 (3.17)        | 12.94 (3.03)                 | 13.51 (4.29)          |
| Գեղարքունիք             | 11.61 (2.91)                     | <b>13.53</b> (4.20)      | <b>13.09</b> (4.18)       | <b>12.19</b> (3.18) | 12.94 (2.86)                 | 13.13 (4.05)          |
| Երևան                   | <b>12.54</b> (3.07)              | <b>13.87</b> (4.13)      | <b>13.09</b> (4.15)       | <b>12.61</b> (3.23) | <b>13.40</b> (3.21)          | <b>13.95</b> (4.27)   |
| Լոռի                    | 11.26 (2.97)                     | 13.11 (4.18)             | 12.45 (4.14)              | 11.79 (3.14)        | 12.36 (2.98)                 | 12.72 (4.24)          |
| Կոտայք                  | 11.97 (2.85)                     | 12.97 (4.18)             | 12.00 (4.04)              | 11.93 (3.06)        | <b>13.25</b> (3.25)          | 13.48 (4.22)          |
| Շիրակ                   | 11.56 (2.72)                     | <b>13.43</b> (4.06)      | <b>13.00</b> (4.04)       | <b>12.13</b> (3.39) | 12.72 (3.18)                 | 12.95 (4.26)          |
| Սյունիք                 | 11.39 (3.14)                     | <b>13.54</b> (4.23)      | <b>12.82</b> (4.22)       | <b>12.27</b> (3.41) | 13.11 (2.91)                 | 13.20 (4.28)          |
| Վայոց ձոր               | 11.71 (3.12)                     | 13.00 (4.12)             | 12.11 (3.90)              | 11.72 (3.24)        | 12.91 (3.16)                 | 12.96 (4.44)          |
| Տավուշ                  | 12.08 (2.71)                     | 12.88 (4.20)             | 12.03 (3.99)              | 11.30 (3.05)        | 12.96 (2.86)                 | 13.42 (4.27)          |



## 6. 9-րդ դասարանի ավարտական քննությունների արդյունքներն ըստ սեռերի

2019 թ. 9-րդ դասարանի ավարտական քննությունների մասնակիցների 53.3 տոկոսը եղել են տղաներ, 46.7 տոկոսը՝ աղջիկներ: Աղյուսակ 6-ում բոլոր առարկաներից ներկայացված են մասնակիցների թվերը, միջին միավորները և ստանդարտ շեղումները՝ ըստ սեռերի:


Աղյուսակ 6

| Առարկան                | Աղջիկներ |               |                  | Տղաներ |               |                  |
|------------------------|----------|---------------|------------------|--------|---------------|------------------|
|                        | Թիվը     | Միջին միավորը | Ստանդարտ շեղումը | Թիվը   | Միջին միավորը | Ստանդարտ շեղումը |
| Հայոց լեզու (գ.)       | 14493    | 12,92         | 2,797            | 16626  | 11,53         | 2,780            |
| Հայ գրականություն (բ.) | 14378    | 14.83         | 3.904            | 16699  | 11.99         | 3.953            |
| Հայոց պատմություն (բ.) | 14040    | 13.71         | 4.049            | 16314  | 11.60         | 3.895            |
| Մաթեմատիկա (գ.)        | 14547    | 12.58         | 3.242            | 16895  | 11.58         | 3.118            |
| Աշխարհագրություն (գ.)  | 4860     | 13.43         | 2.846            | 7149   | 12.19         | 2.821            |
| Կենսաբանություն (գ.)   | 6737     | 14.15         | 2.919            | 5407   | 12.52         | 3.068            |
| Քիմիա (գ.)             | 958      | 14.53         | 3.259            | 861    | 12.61         | 3.58             |
| Ֆիզիկա (գ.)            | 1965     | 13.97         | 3.089            | 3459   | 12.94         | 3.189            |
| Անգլերեն (բ.)          | 5657     | 16.07         | 3.605            | 4219   | 14.23         | 4.197            |
| Ռուսաց լեզու (բ.)      | 7967     | 14.32         | 4.098            | 11857  | 12.29         | 4.122            |
| Ֆրանսերեն (բ.)         | 318      | 15.86         | 3.470            | 252    | 12.32         | 4.018            |
| Գերմաներեն (բ.)        | 465      | 14.79         | 4.086            | 395    | 11.71         | 4.022            |

Դիագրամ 5-ում տեսնում ենք, որ ընտրության հնարավորության դեպքում տղաները բնագիտական առարկաներից նախապատվությունը տվել են «Աշխարհագրություն» և «Ֆիզիկա» առարկաներին, աղջիկները՝ «Կենսաբանություն» առարկային, օտար լե-


զուներից տղաների 70.9 տոկոսը, աղջիկների 55.3 տոկոսը նախընտրել են «Ռուսաց լեզու» առարկան:

Դիագրամ 5



Վերլուծության արդյունքում պարզ է դարձել, որ բոլոր առարկաներից աղջիկները ցուցաբերել են ավելի բարձր առաջադիմություն, քան տղաները: Դիագրամ 6-ում ներկայացված են տղաների և աղջիկների միջին միավորների համեմատություններն ըստ առարկաների:


Դիագրամ 6









Աղջիկներն ավելի բարձր առաջադիմություն են ցուցաբերել հատկապես «Հայ գրականություն», «Ֆրանսերեն» և «Գերմաներեն» առարկաներից: Այս առարկաներից միավորների տարբերությունը եղել է 2.8-3.5: Տղաների և աղջիկների միջին միավորների տարբերությունները համեմատաբար փոքր են եղել «Մաթեմատիկա» և «Ֆիզիկա» առարկաներից:

Ստորև բերված հիստոգրամներում ներկայացված են տղաների և աղջիկների միավորների բաշխվածության տարբերությունները:

*Հիստոգրամ 2*





Ինչպես տեսնում ենք, ներկայացված հիստոգրամներում գրեթե բոլոր առարկաներից տղաների միավորները կենտրոնացած են ցածր միավորների շուրջ, հասկապես 8 միավորի:

## 7. Քննությունների վերաբերյալ վիճակագրական տվյալների համեմատություն ըստ բնակավայրերի տիպերի

Աղյուսակ 7-ում և աղյուսակ 8-ում ըստ բնակավայրերի տիպերի ներկայացված են քննությունների մասնակիցների թվերը, միջին միավորները և ստանդարտ շեղումները:

Աղյուսակ 7

| Բնակավայրի տիպը                     | Հայոց լեզու       |                          | Հայ գրականություն |                          | Հայոց պատմություն |                          |
|-------------------------------------|-------------------|--------------------------|-------------------|--------------------------|-------------------|--------------------------|
|                                     | Մասնակիցների թիվը | Միջին միավորը (ստ. շեղ.) | Մասնակիցների թիվը | Միջին միավորը (ստ. շեղ.) | Մասնակիցների թիվը | Միջին միավորը (ստ. շեղ.) |
| Խոշոր քաղաքներ                      | 12440             | 12.9 (2.67)              | 12535             | 13.8 (4.143)             | 12186             | 13.1 (4.148)             |
| Միջին քաղաքներ                      | 4337              | 12.4 (2.86)              | 4333              | 13.4 (4.186)             | 4196              | 12.7 (4.182)             |
| Փոքր քաղաքներ                       | 3029              | 12.3 (2.78)              | 2937              | 13.5 (4.149)             | 2934              | 12.8 (4.154)             |
| Գյուղեր                             | 8811              | 11.3 (2.84)              | 8761              | 12.6 (4.131)             | 8586              | 11.9 (3.908)             |
| Սահմանամերձ և հեռավոր գյուղեր       | 1325              | 11.2 (3.16)              | 1332              | 12.5 (4.184)             | 1319              | 11.8 (3.935)             |
| Բարձր լեռնային գյուղեր              | 1121              | 11.2 (2.71)              | 1124              | 13.2 (4.069)             | 1081              | 12.3 (3.989)             |
| Սահմանամերձ և բարձրլեռնային գյուղեր | 56                | 9.8 (2.94)               | 55                | 12.7 (3.354)             | 52                | 12.7 (3.212)             |

Աղյուսակ 8

| Բնակավայրի տիպը                     | Մաթեմատիկա        |                          | Օտար լեզուներ     |                          | Բնագիտական առարկաներ |                          |
|-------------------------------------|-------------------|--------------------------|-------------------|--------------------------|----------------------|--------------------------|
|                                     | Մասնակիցների թիվը | Միջին միավորը (ստ. շեղ.) | Մասնակիցների թիվը | Միջին միավորը (ստ. շեղ.) | Մասնակիցների թիվը    | Միջին միավորը (ստ. շեղ.) |
| Խոշոր քաղաքներ                      | 12697             | 12.6 (3.25)              | 12595             | 14.76 (4.14)             | 12681                | 13.51 (3.07)             |
| Միջին քաղաքներ                      | 4399              | 12.3 (3.28)              | 4376              | 14.10 (4.27)             | 4365                 | 13.63 (3.16)             |
| Փոքր քաղաքներ                       | 2983              | 12.3 (3.29)              | 2936              | 13.86 (4.34)             | 2984                 | 13.35 (3.15)             |
| Գյուղեր                             | 8849              | 11.2 (2.96)              | 8751              | 12.62 (4.12)             | 8852                 | 12.45 (2.94)             |
| Սահմանամերձ և հեռավոր գյուղեր       | 1335              | 11.1 (2.97)              | 1333              | 12.76 (4.22)             | 1335                 | 12.57 (2.82)             |
| Բարձր լեռնային գյուղեր              | 1125              | 11.8 (2.97)              | 1085              | 12.81 (4.07)             | 1124                 | 12.51 (3.03)             |
| Սահմանամերձ և բարձրլեռնային գյուղեր | 54                | 11.5 (2.56)              | 54                | 13.24 (3.17)             | 55                   | 12.64 (2.72)             |


Վերլուծության արդյունքում պարզվել է, որ քաղաքային բնակավայրերում աշակերտների միջին միավորները նշանակալիորեն չեն տարբերվում միմյանցից, սակայն նշանակալիորեն բարձր են գյուղական բնակավայրերի աշակերտների միջին միավորներից:

Արդյունքներն ըստ բնակավայրերի տիպերի ավելի մանրամասն ներկայացված են հավելված 2-ում:

## 8. Ավարտական քննությունների արդյունքներն ըստ դպրոցների տիպերի

Դիագրամ 7-ում ներկայացված են բոլոր առարկաներից ավարտական քննությունների մասնակիցների միջին միավորներն ըստ դպրոցների տիպերի:

Դիագրամ 7



Արդյունքներն ըստ դպրոցների տիպերի ավելի մանրամասն ներկայացված են հավելված 3-ում:

Հավելված 1

| Հարգանքների տիպը              | Մատակարարվողները | Կառավարման մարմին | Նշանակումը | Մշակման փուլերը | Մտայնություն | Անբավարար գնահատական ստացած մատակարարների |        | [8-13] միավոր հավաքած մատակարարների |        | [14-17] միավոր հավաքած մատակարարների |        | [18-20] միավոր հավաքած մատակարարների |        |
|-------------------------------|------------------|-------------------|------------|-----------------|--------------|---|--------|-------------------------------------|--------|--------------------------------------|--------|--------------------------------------|--------|
|                               |                  |                   |            |                 |              | թիվը                                      | տոկոսը | թիվը                                | տոկոսը | թիվը                                 | տոկոսը | թիվը                                 | տոկոսը |
| <b>Հայոց լեզու</b>            |                  |                   |            |                 |              |   |        |                                     |        |                                      |        |                                      |        |
| Արագածոտն                     | 1455             | 20                | 1          | 11.61           | 2,911        | 121                                       | 8.3    | 940                                 | 64.7   | 373                                  | 25.6   | 21                                   | 1.5    |
| Արարատ                        | 2810             | 20                | 1          | 11.26           | 2,97         | 260                                       | 9.3    | 1867                                | 66.5   | 645                                  | 23     | 38                                   | 1.3    |
| Արմավիր                       | 1360             | 20                | 1          | 12.54           | 3,067        | 190                                       | 6.7    | 1942                                | 68.6   | 673                                  | 23.8   | 30                                   | 1      |
| Գեղարքունիք                   | 2521             | 20                | 1          | 11.97           | 2,846        | 148                                       | 5.9    | 1628                                | 64.6   | 693                                  | 27.4   | 52                                   | 2.1    |
| Երևան                         | 10123            | 20                | 1          | 12.92           | 2,632        | 257                                       | 2.5    | 5359                                | 52.9   | 4219                                 | 41.6   | 288                                  | 2.8    |
| Լոռի                          | 2507             | 20                | 2          | 11.83           | 2,953        | 173                                       | 6.9    | 1563                                | 62.5   | 716                                  | 28.5   | 55                                   | 2.2    |
| Կոտայք                        | 3053             | 20                | 1          | 12.08           | 2,706        | 141                                       | 4.6    | 1970                                | 64.5   | 888                                  | 29     | 54                                   | 1.8    |
| Կրթամասեր          | 27   | 18 | 7 | 12.9 | 2.8 | 1 | 3.7 | 13   | 48.1 | 11   | 40.7 | 2   | 7.4  |
| ՄՊԸ                | 49   | 19 | 8 | 14.0 | 3.0 | 0 | 0.0 | 21   | 42.9 | 20   | 40.8 | 8   | 16.3 |
| <b>Ֆիզիկա (գ.)</b> |      |    |   |      |     |   |     |      |      |      |      |     |      |
| Անյագ              | 99   | 19 | 8 | 14.1 | 3.1 | 0 | 0.0 | 44   | 44.4 | 34   | 34.3 | 21  | 21.2 |
| Հիմնական           | 3021 | 20 | 6 | 13.9 | 3.1 | 7 | 0.2 | 1337 | 44.3 | 1241 | 41.1 | 436 | 14.4 |
| Միջնակարգ          | 1794 | 20 | 6 | 12.4 | 3.2 | 2 | 0.1 | 1138 | 63.4 | 534  | 29.8 | 120 | 6.7  |
| Հեռակետային        | 36   | 17 | 8 | 11.6 | 2.7 | 0 | 0.0 | 26   | 72.2 | 10   | 27.8 | 0   | 0.0  |
| Հասուկ             | 29   | 17 | 8 | 9.4  | 2.1 | 0 | 0.0 | 28   | 96.6 | 1    | 3.4  | 0   | 0.0  |
| Վարձարան           | 253  | 20 | 9 | 14.5 | 2.3 | 0 | 0.0 | 79   | 31.2 | 144  | 56.9 | 30  | 11.9 |
| Կրթամասեր          | 80   | 20 | 8 | 12.8 | 2.5 | 0 | 0.0 | 50   | 62.5 | 28   | 35.0 | 2   | 2.5  |
| Մասնագիտացված      | 29   | 19 | 8 | 11.0 | 3.3 | 0 | 0.0 | 23   | 79.3 | 4    | 13.8 | 2   | 6.9  |
| ՄՊԸ                | 83   | 18 | 8 | 12.4 | 3.1 | 0 | 0.0 | 51   | 61.4 | 24   | 28.9 | 8   | 9.6  |

| <b>Ռուսաց լեզու (բ.)</b> |       |    |    |      |     |    |     |      |      |      |      |      |      |
|--------------------------|-------|----|----|------|-----|----|-----|------|------|------|------|------|------|
| Ակյազ                    | 407   | 20 | 4  | 13.7 | 4.2 | 1  | 0.2 | 187  | 45.9 | 107  | 26.3 | 112  | 27.5 |
| Հրահավան                 | 10307 | 20 | 1  | 13.7 | 4.2 | 25 | 0.2 | 4776 | 46.3 | 2717 | 26.4 | 2789 | 27.1 |
| Միջնակարգ                | 8471  | 20 | 1  | 12.3 | 4.1 | 79 | 0.9 | 5035 | 59.4 | 1965 | 23.2 | 1392 | 16.4 |
| Հեռակետային              | 65    | 20 | 8  | 12.8 | 3.9 | 0  | 0.0 | 35   | 53.8 | 18   | 27.7 | 12   | 18.5 |
| Հասուկ                   | 41    | 18 | 8  | 10.2 | 2.2 | 0  | 0.0 | 38   | 92.7 | 2    | 4.9  | 1    | 2.4  |
| Վարժարան                 | 178   | 20 | 8  | 16.2 | 3.3 | 0  | 0.0 | 33   | 18.5 | 65   | 36.5 | 80   | 44.9 |
| Կրթահամալիր              | 73    | 20 | 8  | 14.5 | 3.9 | 0  | 0.0 | 30   | 41.1 | 18   | 24.7 | 25   | 34.2 |
| Մտանոթխոսաց վան          | 107   | 20 | 8  | 12.8 | 4.2 | 0  | 0.0 | 59   | 55.1 | 25   | 23.4 | 23   | 21.5 |
| ՄԳԸ                      | 175   | 20 | 8  | 15.3 | 3.9 | 0  | 0.0 | 55   | 31.4 | 50   | 28.6 | 70   | 40.0 |
| <b>Անգլերեն (բ.)</b>     |       |    |    |      |     |    |     |      |      |      |      |      |      |
| Ակյազ                    | 219   | 20 | 8  | 16.0 | 3.8 | 0  | 0.0 | 55   | 25.1 | 54   | 24.7 | 110  | 50.2 |
| Հրահավան                 | 6408  | 20 | 4  | 15.6 | 3.8 | 7  | 0.1 | 1724 | 26.9 | 1844 | 28.8 | 2833 | 44.2 |
| Միջնակարգ                | 2508  | 20 | 1  | 14.0 | 4.2 | 17 | 0.7 | 1039 | 41.4 | 703  | 28.0 | 749  | 29.9 |
| Հեռակետային              | 14    | 19 | 14 | 17.4 | 1.7 | 0  | 0.0 | 0    | 0.0  | 6    | 42.9 | 8    | 57.1 |
| Վարժարան                 | 268   | 20 | 8  | 17.3 | 3.1 | 0  | 0.0 | 32   | 11.9 | 70   | 26.1 | 166  | 61.9 |
| Կրթահամալիր              | 162   | 20 | 8  | 15.9 | 3.3 | 0  | 0.0 | 33   | 20.4 | 70   | 43.2 | 59   | 36.4 |
| Մտանոթխոսաց վան          | 74    | 20 | 8  | 14.7 | 4.9 | 0  | 0.0 | 30   | 40.5 | 13   | 17.6 | 31   | 41.9 |
| ՄԳԸ                      | 221   | 20 | 8  | 16.1 | 3.5 | 0  | 0.0 | 46   | 20.8 | 71   | 32.1 | 104  | 47.1 |



| <b>Գերաներեն (բ.)</b> |     |    |   |      |     |   |     |     |      |     |      |     |      |
|-----------------------|-----|----|---|------|-----|---|-----|-----|------|-----|------|-----|------|
| <b>Հիմնական</b>       | 150 | 20 | 8 | 16.0 | 4.2 | 0 | 0.0 | 44  | 29.3 | 21  | 14.0 | 85  | 56.7 |
| <b>Միջնակարգ</b>      | 697 | 20 | 5 | 12.8 | 4.1 | 3 | 0.4 | 385 | 55.2 | 178 | 25.5 | 131 | 18.8 |
| <b>Ֆրանսերեն (բ.)</b> |     |    |   |      |     |   |     |     |      |     |      |     |      |
| <b>Անկազ</b>          | 28  | 20 | 8 | 15.7 | 4.4 | 0 | 0.0 | 7   | 25.0 | 5   | 17.9 | 16  | 57.1 |
| <b>Հիմնական</b>       | 283 | 20 | 8 | 15.3 | 4.1 | 0 | 0.0 | 91  | 32.2 | 71  | 25.1 | 121 | 42.8 |
| <b>Միջնակարգ</b>      | 246 | 20 | 8 | 12.9 | 3.7 | 0 | 0.0 | 131 | 53.3 | 77  | 31.3 | 38  | 15.4 |
| <b>ՄՊԸ</b>            | 11  | 20 | 8 | 15.6 | 3.6 | 0 | 0.0 | 3   | 27.3 | 3   | 27.3 | 5   | 45.5 |

ԳԹԿ թեստաբանության բաժնի գլխավոր մասնագետ

## **9-րդ դասարան. Ավարտական քննություն**

(ստուգման վերլուծություն)

2019 թիվը 9-րդ դասարանցիների համար բերեց հայոց լեզվի ավարտական քննության հետ կապված երկու նորություն: Մեկը թեստի նոր կառուցվածքն էր, մյուսը՝ քննության անցկացման ձևը՝ կենտրոնացված եղանակը: Մի կողմ թողնենք վերջինը, որը թեև բավական բարդ և մարդկային լուրջ ռեսուրսներ պահանջող, սակայն միանգամայն ողջունելի նախաձեռնություն էր և հիմնական կողմերով իրեն արդարացրած: Դիտարկենք առաջինը՝ թեստի կառուցվածքը՝ շեշտադրում անելով երկու հանգամանքի վրա: Դրանցից մեկը տեքստի առկայությունն է և առաջադրանքների՝ դրանից բխեցնելու հանգամանքը, մյուսը՝ բաց (կարճ) պատասխանով առաջադրանքների զգալի քանակությունը, ապա և շարադրանքը: Առաջադրանքներ, որոնք համակարգչային ստուգման ենթարկվել չեն կարող, և անխուսափելիորեն հանգեցնում են մարդկային գործոնի առկայությանը՝ դրանից բխող մի շարք խնդիրներով: Նշենք, որ ստուգման գործընթացում ընդհանուր հաշվով ներգրավված էին հայոց լեզվի և գրականության շուրջ 1500 ուսուցիչներ, որոնք քննական կենտրոններում ստուգել և գնահատել են 15 կարճ պատասխանով առաջադրանքներ և շարադրանք: Թեստի առաջադրանքներից 20-ը ընտրովի պատասխաններով են:

Գնահատման առումով դրանք հստակ են (ունեն մեկ ճիշտ պատասխան, որին տրվում է 1 միավոր, և 3 սխալ պատասխաններ, որոնցից որևէ մեկը նշած լինելու դեպքում աշակերտը միավոր չի ստանում) և ըստ էության բողոքարկման ենթակա չեն, եթե թեստաբանական կամ առարկայական սխալներ և թերություններ չեն պարունակում: Այս առաջադրանքների հետ կապված Գնահատման և թեստավորման

կենտրոնը որևէ բողոք չի ստացել: Ցավոք, նույնը չի կարելի ասել կարճ պատասխանով առաջադրանքների և հատկապես շարադրանքի գնահատման վերաբերյալ:

Նախ՝ կարճ պատասխանով առաջադրանքների մասին: Դրանք թեստում, ինչպես ասվեց, 15-ն են: Առաջադրանքի այս տիպը ենթադրում է որևէ հարց, որին աշակերտը պետք է տա, այսպես ասած, բաց պատասխան: Դրանցից 14-ի համար ԳԹԿ-ն տրամադրել է ճիշտ պատասխանը կամ պատասխանները՝ նայած հարցի բնույթին և հնարավոր պատասխանների քանակին, միայն մեկի համար պատասխան չի տրամադրել, քանի որ այդ առաջադրանքը ուղղակիորեն չի բխում տեքստից, այլ ենթադրում է ազատ պատասխան՝ ցանկացած բառ, որը համապատասխանում է տրված պահանջին:

Այս առաջադրանքների վերաբերյալ բողոքներ եղել են՝ հետևյալ ուղղություններով:

- Ճիշտ գրված պատասխանին, որը համապատասխանում է ԳԹԿ-ի ներկայացրածին, ստուգող ուսուցիչը միավոր չի տվել կամ, հակառակը, սխալ գրված պատասխանը գնահատվել է որպես ճիշտ: Սրանք ենթադրաբար եղել են սուկական վրիպումներ, որոնց պատճառով, սակայն, աշակերտի միավորը եղել է իրականից կա՛մ ցածր, կա՛մ բարձր: Եթե առաջինը շտկելի է (աշակերտը բողոքարկում է, և ստուգման սխալը ուղղվում է), ապա երկրորդը՝ հասկանալի պատճառներով հիմնականում ոչ:
- Աշակերտը կամ նրա ուսուցիչը կամ ծնողը կարծում են, որ աշակերտի գրած բառը, որը նշված չէ ԳԹԿ-ի տված պատասխաններում, նույնպես կարելի է համարել ճիշտ:

Թեստաբանության մեջ գնահատման օբյեկտիվությունը՝ որպես առավել բնորոշ առանձնահատկություն, վերագրվում է երկու տիպի առաջադրանքների՝ ընտրովի պատասխանով առաջադրանքներ, որոնց մասին արդեն խոսվեց, և կարճ պատասխանով այնպիսի առաջադ-

բանքներ, որոնց պատասխանը միարժեք է<sup>14</sup>: Թեստի այս կառուցվածքի պայմաններում, սակայն, կարճ պատասխանով ոչ բոլոր առաջադրանքները կարող են ունենալ միարժեք պատասխաններ: Թեստի բնորոշ առանձնահատկությունը, ինչպես ասվեց, տեքստն է, որով սկսվում է թեստը, և որի հիմքի վրա կազմվում են բոլոր կամ գրեթե բոլոր առաջադրանքները: Ասել է թե՛ որպես աշակերտի գիտելիքների ստուգման ձև նախապատվությունը տրվում է տեքստի հետ կամ տեքստի վրա տարվող աշխատանքին: Այդպիսի աշխատանք կատարելուն նպաստում են շատ ավելի կարճ պատասխանով, քան ընտրովի պատասխանով առաջադրանքները: Այսպես, եթե տրված են ընտրության համար չորս տարբերակները, ապա հաճախ տվյալ առաջադրանքը լուծելու համար տեքստին անդրադառնալու կամ դրանից օգտվելու անհրաժեշտություն կարող է և չլինել: Ավելին, որոշ դեպքերում դժվար է լինում գտնել այնպիսի հարցադրում, որ առաջադրանքը լուծելու համար աշակերտը անհրաժեշտություն ունենա տեքստին նայելու:

Օրինակ, եթե հարցադրումը վերաբերում է բառի կազմությանը՝ պարզ, բարդ, ածանցավոր և այլն, ապա քիչ նշանակություն ունի (իսկ ավելի անկեղծ՝ բոլորովին չունի)՝ այդ բառերը տեքստում առկա են, թե ոչ, թեև նախատեսվում է, որ լինեն: Տեքստի հետ ուղղակի առնչություն ունեն այնպիսի ընտրովի առաջադրանքները, որոնցում պահանջվում է, օրինակ, որոշել, թե տվյալ բառը նշված նախադասության մեջ ինչ պաշտոն է կատարում: Ուղիղ տեքստի հետ առնչվում են տեքստի վերաբերյալ հարցադրումները (որտեղ է դեպքը տեղի ունենում, ինչի մասին խոսք կա կամ չկա և այլն), դատողություններ (գտնել տեքստին հակասող կամ չհակասող, տեքստից բխող կամ չբխող միտքը):

Մինչդեռ կարճ պատասխանով առաջադրանքները ենթադրում են հենց տեքստի վրա կատարվող աշխատանք: Հասկանալի է, որ լեզվական այն միավորը, որի վերաբերյալ հարց է ձևակերպվում, տեքստում կամ դրա մի հատվածում կարող է միակը չլինել: Օրինակ, պահանջվում է տեքստից կամ նրա որևէ հատվածից կամ նախադասությունից դուրս գրել, ասենք, մեկ ածական: Շատ հնարավոր է, որ տեքստում

<sup>14</sup> Տե՛ս Ա. Բաղդասարյան, Թեստաբանության հիմունքներ, Երևան, 2018, էջ 127:

չգտնվի այնպիսի հատված կամ նախադասություն, որում և՛ ածական լինի, և՛ դա լինի միայն մեկը: Այդ պատճառով որոշ առաջադրանքներ ունենում են ճիշտ պատասխանի մեկից ավելի հնարավոր դեպքեր: Հետևաբար բոլոր կարճ պատասխանով առաջադրանքները չեն, որ կարող են ունենալ միարժեք պատասխաններ: Կան դեպքեր էլ, երբ անհրաժեշտ կամ նախատեսվող հարցի համար տեքստը նյութ չի պարունակում: Այս դեպքում հարկադրաբար տրվում է այնպիսի հարց, որի դեպքում աշակերտը պետք է բերի կամայական համապատասխան օրինակ: Սա լինում է հիմնականում ուղղագրական առաջադրանքների դեպքում: Այդպիսի մեկ առաջադրանք կար 2019 թ. ավարտական թեստում. պահանջվում էր գրել *յ* ձայնակապ ունեցող որևէ բառ: Եթե առաջինի համար ԳԹԿ-ից ուղարկվող պատասխանների համապատասխան տողում տրվում են բոլոր հնարավոր պատասխանները, ապա երկրորդ դեպքում տողը լինում է դատարկ:

Պատասխանի ոչ միարժեքության պատճառներից մեկն էլ աշակերտի կողմից կատարվող ձևակերպում ենթադրող հարցերն են: Օրինակ, ենթադրենք, հարցն այսպիսին է՝ *ինչո՞ւ է նախադասության մեջ ստորակետ դրված: Ճիշտ պատասխանն այն է, որ դա բարդ ստորադասական նախադասություն է, և ստորակետով անջատված են բաղադրիչները: Աշակերտը կարող է գրել՝ բարդ ստորադասական նախադասություն, բարդ նախադասություն, անջատված են բաղադրիչները, հարաբերական դերանունից առաջ է, շղկապական բառից առաջ է, որովհետև կա որը հարաբերական դերանունը* և այլն: Այս բոլոր դեպքերում աշակերտը միավոր է ստանում: Սակայն զրկվում է այդ միավորից, եթե գրած լինի՝ *բարդ համադասական նախադասություն* կամ *շղկապից առաջ է* և այլն, այսինքն մի բան, որը տվյալ դեպքում սխալ է պարունակում: Այսպիսի իրավիճակներում հարցի լուծման եղանակը տվյալ իրավիճակի համար որոշում կայացնելն է: Մասնավորապես, 2019 թ. քննական աշխատանքների ստուգման գործընթացում հարցը լուծվել է հետևյալ կերպ. ստուգող ուսուցչի՝ չկողմնորոշվելու դեպքում քննա-

կան կենտրոնում գտնվող ԳԹԿ ներկայացուցիչը զանգահարել է ԳԹԿ և հստակեցրել միավոր տալ-չտալու հարցը:

Կարճ պատասխանով առաջադրանքների գնահատումից ծագած խնդիրների լուծումը բողոքարկման միջոցով, այնուամենայնիվ, հստակ է անգամ պատասխանի ոչ միարժեքության դեպքում: Բոլորովին այլ է շարադրանքի գնահատման խնդիրը:

Շարադրանքը՝ որպես առաջադրանքի տեսակ, 9-րդ դասարանի ավարտական քննության թեստերի համար նորություն չէ: Մինչ թեստը փոխադրությունով փոխարինելու որոշումը (2016թ.) տարիներ շարունակ թեստերի վերջին առաջադրանքը եղել է շարադրանք՝ իր մի շարք տեսակներով: Տարբեր տարիների եղել են հետևյալ տիպի պահանջներ՝

- կազմել կապակցված խոսք տրված բառերով,
- համառոտ վերլուծել տրված գրական ստեղծագործություններից որևէ մեկը /տրվում են 3 վերնագրեր/,
- գրել սկիզբ տրված շարունակության համար:

Սակայն այս բոլոր տեսակները գնահատվել են ընդամենը 2 միավորով՝ ի տարբերություն 2018-2019 ուստարվա թեստի, որում շարադրանքին տրվել է 5 միավոր:

Շարադրանքի այս տեսակը մեր կարծիքով լավագույնն է: Այն ոչ ամբողջովին, սակայն իր էական կողմով պատկանում է աշխարհի շատ երկրներում, մասնավորապես՝ ԱՄՆ-ում լայնորեն կիրառվող էսսեի ժանրին: Մա ենթադրում է տրված տեքստի ընկալում, նրանում արտահայտված բովանդակության, ասելիքի վերաբերյալ կարծիքի արտահայտում, ապա նաև արտահայտված կարծիքի հիմնավորում: Հենց այս սկզբունքն է ընտրված մեր թեստում՝ որպես շարադրանքի բովանդակություն: Ընդ որում, ինչպես նշված է ուղեցույցի՝ շարադրանքի գնահատման չափանիշներում, արտահայտվող կարծիքի հարցում աշակերտը ազատ է: Ստուգողը պարտավոր է ընդունելի համարել ցանկացած կարծիք անկախ նրանից՝ այդ կարծիքը համընկնում է իր կարծիքին, թե հակասում է դրան՝ մի պայմանով. արտահայտված կարծիքը պետք է տրամաբանորեն հիմնավորված լինի տեքստին արվող հղումներով և չհակասի տեքստի մտքերին: Վերջինը հիմնականում լինում է

սխալ ընկալման արդյունքում: Հայտնի էսսեն, սակայն, պահանջում է կատարել մի լրացում ևս. բերել դեպքեր սեփական փորձից՝ հաստատելու համար արտահայտված կարծիքը կամ մոտեցումը: Այս վերջին պահանջը, որ ըստ էության ազատ շարադրանք է, մեր թեստում նախատեսված չէ:

Շարադրանքը անժխտելիորեն ամենասուբյեկտիվն է գնահատման առումով<sup>15</sup>, որքան էլ մանրամասն մշակված լինեն գնահատման չափանիշները: Բնականաբար չկան և չեն կարող լինել շարունակներ, առկա է մարդկային գործոնը, ստուգողները ունեն տարբեր մոտեցումներ, տարբեր ճաշակներ ոչ միայն շարադրված բովանդակությունը, այլև շարադրանքի որակը գնահատելու առումով, ապա նաև, ինչպես պարզվեց բողոքարկման ընթացքում, ցավոք կան նաև տեքստի ընկալման խնդիրներ: Լուրջ խնդիր է նաև այն, որ շարադրանքի գնահատման համար նախատեսված 5 միավորը բավական մեծ տեղ է թողնում թե՛ գնահատման սխալանքի, թե՛ դրա բողոքարկման համար և էական սողանք է դրված գնահատականի բարձրացման համար: Հանգամանք, որ լուրջ գլխացավանք ստեղծեց ԳԹԿ-ի համար. քննությունը տեղի էր ունեցել մայիսի 26-ին, ստուգումը ավարտվել և գնահատականները դպրոցներ են ուղարկվել յոթ օրվա ընթացքում, բողոքարկումը պաշտոնապես տևել է մինչև հունիսի 17-ը, իսկ իրականության մեջ առանձին դեպքերում ձգվել մինչև հուլիսի վերջերը:

Խնդիրների խնդիրը, սակայն, ինչպես ասվեց, շարադրանքն է: Ինչպես էլ մշակվեն չափանիշները, իսկ դրանք մշակվել են մանրակրկիտ, հաշվի առնելով նաև հրապարակի վրա եղած օտարալեզու չափանիշները, միևնույնն է, վճռորոշ խոսքը պատկանում է ստուգողին: Մանավանդ բովանդակության գնահատման առումով: 2019 թ. շարադրանքի այս բաղադրիչի համար նախատեսված էր 3 միավոր, ինչը մանրելու բավականին հնարավորություն է տալիս: Եվ սա լուրջ խնդիր է: Եթե սրան գումարենք նաև աշակերտի, նրա ծնողների, ուսուցչի կարծիքները, ավելի ճիշտ, գնահատականի հետ անհամաձայնությունը՝ հո-

<sup>15</sup> Տե՛ս նույն տեղում:

գուտ աշակերտի, ապա խնդիրը առավել ակնառու կդառնա: Այս է պատճառը, որ բողոքարկումը անցկացվել է մի քանի փուլով և ձգվել անորոշ ժամանակով: Արդյունքները եղել են տարբեր: Եղել են և՛ գնահատականի բարձրացման, և՛ պահպանման, և՛ իջեցման դեպքեր՝ ըստ բողոքարկմանը արտոնված կանոնների: Գնահատականի իջեցում, սակայն, տեղի է ունեցել բողոքարկման միայն, այսպես ասած, պաշտոնական փուլում: Պայմանականորեն ոչ պաշտոնական փուլ համարենք կրկնակի, որոշ դեպքերում եռակի բողոքարկումը, որի պատճառն այն էր, որ ծնողները ոչ մի կերպ չէին համակերպվում հատկապես այն հանգամանքի հետ, որ աշակերտը մեկ կամ երկու միավորի պատճառով զրկվում է կարմիր ատեստատից: Այս փուլում որոշվեց անցկացնել, այսպես ասած, անանուն ստուգում: Բանն այն է, որ բողոքարկման հանձնաժողովը կաշկանդվում էր նաև քննական կենտրոնում ուսուցչի դրած միավորից, ինչը հասկանալի է. հոգեբանորեն դժվար է արդեն դրված միավորը իջեցնելը, եթե անգամ դրված միավորը ակնհայտորեն բարձր է արժանիից: Ուստի որոշվեց, հանուն առավելագույն օբյեկտիվության, ծածկել ոչ միայն աշակերտի անուն-ազգանունը, այլև շարադրանքին տրված միավորները: Աշխատանքներից յուրաքանչյուրը ստուգվեց բողոքարկման հանձնաժողովի բոլոր 7 անդամների կողմից, այնուհետև համադրվեցին արդյունքները, ապա համեմատվեցին նախնական միավորների հետ: Արդյունքները եղան այսպիսին. 23 աշակերտներից 7-ի միավորները մնացին անփոփոխ, 16-ինը իջան, ընդ որում, դրանցից 5-ինը՝ 2-ական միավորով, 3-ինը՝ 3-ական: Ինչպես ասվեց, որոշվեց միավորի իջեցում չկատարել:

Նշված փաստերը վկայում են, որ փոփոխությունների անհրաժեշտություն կա: Խնդրի եթե ոչ լուծումը, ապա գոնե հաղթահարման ուղիներից մեկը համարեցինք բովանդակության համար տրվող միավորների պակասեցումը: 2020 թ. ավարտական քննության ժամանակ շարադրանքի այս բաղադրիչը կգնահատվի 2 միավորով: Ըստ այդմ, նվազեցվել է նաև շարադրանքի համար անհրաժեշտ բառաքանակը՝ 50-70 բառից հասցվելով 40-60-ի: Սրա հետևանքով ամբողջ թեստին տրվող միավորը նույնպես իջնում է՝ 40-ից դառնալով 39: Փոփոխություններ են արվել նաև գնահատման սանդղակում, ինչը ևս կավելացնի գնա-



հատման օբյեկտիվությունը: Այսպես՝ եթե 2019 թ. 18 (գերագանց գնահատականի ստորին շեմը) կարող էր ստանալ այն աշակերտը, որը շարադրանքից վաստակել է առնվազն 2 միավոր, այդ թվում անսխալ կատարելով բոլոր ընտրովի և կարճ պատասխանով առաջադրանքները (ընդհանուր առմամբ՝ 37-38 միավոր), ապա նոր սանդղակով նույն կերպ կգնահատվի շարադրանքից ոչ մի կամ ընդամենը 1 միավոր վաստակածը (ընդհանուր առմամբ՝ 35-36 միավոր): Այս դեպքում գերագանցության շեմը կարող է հաղթարարել կա՛մ բոլոր ընտրովի և կարճ պատասխանով առաջադրանքները անսխալ կատարած և շարադրանքից 0 գնահատված, կա՛մ մյուս առաջադրանքներում 1 սխալ թույլ տված, սակայն շարադրանքից 1 միավոր ստացած աշակերտը:

Այս փոփոխությունը բնավ չի նվազեցնում շարադրանքի արժեքը. այսպես թե այնպես բարձր միավորի ձգտող աշակերտը կջանա շարադրանքից միավորներ ստանալ՝ գիտակցելով, որ ապահովագրված չի կարող լինել մյուս առաջադրանքներում սխալներ թույլ չտալուց: Այսպիսով աշակերտի ուղղորդվածությունը՝ մտքերը շարադրելու հմտությունն ձեռք բերելու առումով, մնում է նույնը, սակայն ինչ-որ չափով մեծանում է գնահատման օբյեկտիվությունը: Մյուս կողմից, կարծում ենք, 40-60 բառի սահմաններում գրված շարադրանքի բովանդակության 2 միավորով գնահատումը ավելի հստակ և հասկանալի կլինի գնահատող ուսուցչի համար, ինչպես նաև, անշուշտ, կփոքրացնի գնահատման մոտավորությունը:

## <<Կենտրոնացված քննությունը զգաստացնում է բոլորին>>

Հարցազրույց Գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենի տեղակալ Կարո ՆԱՍԻԲՅԱՆԻ հետ

- Պարո՛ն Նասիբյան, 9-րդ և 12-րդ դասարանների ավարտական քննությունների թեման մշտապես քննարկման առարկա է եղել: Այդ քննությունների մասին իրենց դժգոհությունն են հայտնել, ինչպես կրթության ոլորտի համապատասխան մասնագետները, այնպես էլ դպրոցների տնօրեններն ու ուսուցիչները՝ հիմնականում նշելով դրանց անարդյունավետությունը, երբեմն նաև՝ ձևական բնույթը: Հնչել են տարբեր առաջարկներ, այդ թվում նաև ավարտական քննություններից ընդհանրապես հրաժարվելու առաջարկ: ՀՀ կրթության և գիտության նախարարությունը հանդես եկավ միանգամայն նոր նախաձեռնությամբ՝ ավարտական քննություններն անցկացնել կենտրոնացված ձևով և որոշում ընդունեց 2019 թվականին «Հայոց լեզու» առարկայի 9-րդ դասարանի ավարտական քննությունն անցկացնել այդ ձևով: Դուք, որպես Գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենի տեղակալ, ինչպե՞ս կմեկնաբանեք այս նախաձեռնությունը:

- Գնահատման և թեստավորման կենտրոնում, կարելի է ասել, իր գործունեության հենց սկզբնական շրջանում, քննարկվում էր այդ հարցը. արժե՞ 9-րդ և 12-րդ դասարաններում ավարտական քննություններ կազմակերպել, թե՞ ոչ: Թեև մենք էլ այն կարծիքին էինք, որ եթե այդ քննությունները այն ձևով պետք անցկացվեն, ինչպես կազմակերպվում են, ավելի լավ է հրաժարվել դրանցից, այդուամենայնիվ, նախարարությունը հարմար գտավ շարունակել անցկացնել պետական և պետական ավարտական քննությունները: Ի՞նչ արեցինք մենք այդ ժամանակ: Սկսեցինք ուսումնասիրել ավարտական քննությունների արդյունքները, և ստացվեց այսպիսի պատկեր. նույն առարկայից իրենց դպրոցում պետական ավարտական քննություն հանձնած աշակերտների գնահատականները բուհի ընդունելության միասնական քննությանը մասնակցած դիմորդների <<ավարտական>> մասի գնա-

հատականներից ավելի բարձր էին: Այսինքն այն շրջանավարտը, դիմորդը, որը բուհ ընդունվելու համար հատուկ պատրաստվել է, պարապել է ինչ-որ չափով, միասնական քննությանը ավելի ցածր գնահատական է ստանում, քան այն աշակերտը, որը դպրոցի պետական ավարտական քննությանը, համենայն դեպս, այդքան չի պատրաստվել: Պարզվեց, որ բավականին մեծ թվով դպրոցներում աստեսատներում 18, 19, 20-ից ցածր գնահատականներ գրեթե չէին դնում: Սկսեցինք ուսումնասիրությունները, հատկապես այն դպրոցներում, որտեղ աստեսատի գնահատականները ամենաբարձրն էին: Մի արտառոց դեպքի մասին եմ ուզում պատմել: Վանաձորի մանկավարժական համալսարանի հենակետային վարժարանում արտաքին ընթացիկ գնահատում էինք անցկացնում հայոց լեզվից: Աշակերտներ կային, որոնք ոչինչ չէին գրում: Տնօրենին հարցրեցի, թե ինչու չեն գրում: Տնօրենը, ցույց տալով աշակերտներից մեկին, ասաց՝ գիտե՞ք, որ այս աշակերտը մեր վարժարան կարմիր վկայականով է եկել: Ու այդ երեխան չգիտեր ինչ գրել: Իհարկե, ավելի լավ է չգրեր, քան թե խայտառակվեր: Ապշելու բան է:

Վերոնշյալ դպրոցների տնօրեններին ասեցինք՝ հասկանալի է, որ գնահատականներն արհեստականորեն բարձրացրել եք, պիտի հրաժարվեք այդ պրակտիկայից: Աստիճանաբար որոշակի արդյունքի հասանք. արդեն 5-6 տարի է, որ դպրոցներում արհեստականորեն բարձր գնահատականներ չեն դրվում: Անբավարար գնահատական, հասկանալի է, չեն դնում, բայցև շատ բարձր գնահատականներ դնելուց էլ են հրաժարվել: Նախարարության նախաձեռնությունը բարձր եմ գնահատում: Ճիշտն ասած, ես ուզում եմ, որ ժամանակի ընթացքում մյուս առարկաների քննություններն էլ կենտրոնացված լինեն: Կենտրոնացված քննությունն ունի շատ դրական մի կողմ. այն բավականին զգաստացնում է ինչպես աշակերտներին, այնպես էլ ուսուցիչներին և ծնողներին: Ուսուցիչներն ու աշակերտները ավելի մեծ պատասխանատվությամբ սկսեցին պատրաստվել կենտրոնացված քննությանը, իսկ

ծնողները սկսեցին ավելի հետևողական լինել, որ իրենց երեխան քննությունը բարեհաջող հանձնի:

- Հայոց լեզվի 9-րդ դասարանի կենտրոնացված ավարտական քննությունը կազմակերպեց Գնահատման և թեստավորման կենտրոնը: Պատմեք, խնդրեմ, քննության կազմակերպման և անցկացման նախապատրաստական աշխատանքների մասին:

- Քննության անցկացման նախապատրաստական աշխատանքները Գնահատման և թեստավորման կենտրոնը սկսել էր հոկտեմբերին, ավարտել փետրվարին: Հիմնական խնդիրներից մեկը քննական կենտրոններ ընտրելու խնդիրն էր: Ամբողջ հանրապետությունով մեկ 251 քննական կենտրոններ ընտրելու համար մոտավորապես 350 դպրոց ենք մտել: Պարզվեց, որ դա որոշ տեղերում բավականին բարդ գործ է: Օրինակ՝ Տավուշի մարզում, հատկապես Շամշադինի տարածաշրջանում, մենք մարզադահլիճ չէինք կարողանում գտնել, որ այդտեղ կազմակերպենք կենտրոնացված քննությունը: Ստիպված էերդից 25 կիլոմետր հեռավորության վրա գտնվող գյուղի երեխաները քննությունը հանձնեցին Բերդում կամ Բերդին մոտ գտնվող մի գյուղում, այլ տարբերակ չկար: Երեխաներին տեղավորեցինք դպրոցի միջանցքներում, այսպես կոչված, ֆիզկուլտուրայի դահլիճում, որն իրականում մի դասարան է, որտեղ ֆիզկուլտուրայի դասեր են անցկացվում ձմռանը, աշնանը, գարնանը: Իհարկե, այլ էր պատկերը Երևանի, Արարատյան դաշտի, Շիրակի և մյուս մարզերի դպրոցներում: Այստեղ նման խնդիրներ, բնականաբար, չառաջացան: Մենք ցանկանում էինք քննական կենտրոնն ընտրել այնպես, որ երեխաներն իրենց տարածաշրջանից դուրս չգան, ասենք, Երևանի կենտրոնում դպրոց հաճախող երեխան քննություն հանձնի կենտրոնի մեկ այլ դպրոցում, Ճամբարակի տարածաշրջանում ապրող երեխան քննություն հանձնի Ճամբարակում, Մարտունունը՝ Մարտունիում, Վարդենիսինը՝ Վարդենիսում և այլն: Այդ սկզբունքով քննակենտրոնների ընտրությունը կատարեցինք 99 տոկոսով: Միայն մի բացառություն եղավ. Աշոցքում քննություն հանձնեցին նաև Ամասիայի աշակերտները՝ 56 հոգի: Որոշ դպրոցներում աշակերտների տեղաշարժ չարեցինք, օրինակ, Երևա-

նում կա դպրոց, որը 167 9-րդ դասարանցի ուներ, այդ աշակերտներին տարբեր դպրոցներում տեղաբաշխելն անիմաստ էր:

2018 թվականի նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 1-ը ԳԹԿ-ն անցկացրեց <<Դպրոցի ավարտական և պետական ավարտական քննությունների հիմնախնդիրները և հեռանկարները>> թեմայով համաժողով, որին մասնակցում էին ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՀՀ և Արցախի Հանրապետության Գնահատման և թեստավորման կենտրոնների, ՀՀ մարզերի կրթության վարչությունների, բուհերի, դպրոցների ներկայացուցիչներ: Համաժողովի ընթացքում ամենայն մանրամասնությամբ քննարկվեցին այն հիմնախնդիրները, որոնք կարող էին առաջանալ քննության նախապատրաստման և անցկացման ընթացքում, մասնակիցների կողմից եղան դրանց լուծման տարատեսակ առաջարկներ: Նրանք հատկապես կարևորեցին քննության անցկացման հարցում մարզպետարանների օգնության հարցը:

Մինչև քննության օրը Գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենի պաշտոնակատար Արմեն Փաշայանը մասնակցեց ՀՀ տարածքային կառավարման նախարարի մոտ տեղի ունեցած խորհրդակցությանը, որի ընթացքում նախարարը հրահանգեց բոլոր մարզպետներին ամեն կերպ աջակցել կենտրոնացված քննության անցկացմանը:

**- Ասացիք, որ 9-րդ դասարանի կենտրոնացված քննությունն անցկացվեց Երևան քաղաքի և հանրապետության բոլոր մարզերի 251 դպրոցներում: Քննական կենտրոնների ղեկավարներն այդ դպրոցների տնօրեններն էին, որոնք, հասկանալի է, նման քննություն անցկացնելու փորձ չունեին: Ինչպե՞ս կատարվեց նրանց վերապատրաստումը:**

- Այո, քանի որ առաջին անգամ էր նման քննություն անցկացվում, որոշեցինք, որ քննական կենտրոնի ղեկավարը լինի տվյալ դպրոցի տնօրենը, որպեսզի նա ամեն ինչով նախապարտաստի քննական կենտրոնը: Հասկանալի է, նրանք կենտրոնացված քննություն անցկացնելու փորձ չունեին: Ավարտական քննությունն այլ կերպ էր անցկացվելու. իրենց դպրոց էին գալու ուրիշ դպրոցների աշակերտներ, քննությունը վերահսկվելու էին ԳԹԿ-ի կամ նախարարության ներկայացուցիչները,

աշակերտների գրավոր աշխատանքները պետք է ստուգեին ոչ իրենց դպրոցի ուսուցիչները և այլն:

ԳԹԿ աշխատակիցները, մեր լեզվի և գրականության մասնագետները դպրոցի տնօրեններին և քննությունից հետո աշակերտների աշխատանքները ստուգող լեզվի և գրականության ուսուցիչներին վերապատրաստելու նպատակով գործուղվել են հանրապետության բոլոր մարզեր ու կատարել հսկայածավալ աշխատանք: Արդյունքը եղել է այն, որ չի եղել քննական կենտրոնի ղեկավար կամ գրավորները ստուգող լեզվի, գրականության ուսուցիչ, որ վերապատրաստում անցած չլիներ: Ուզում եմ նշել, որ, այնուամենայնիվ, աշակերտների ձևաթղթերի շարադրանքի ստուգման հարցում խնդիրներ եղել են, և դա, ինչ-որ առումով, սպասելի էր: Ուսուցիչները այդ ծավալի աշխատանք դեռ չէին կատարել, մյուս կողմից էլ, հավանաբար, իր ազդեցությունն է թողել պատասխանատվության գործոնը: Ճիշտն ասած մենք գրավոր դիմել էինք կրթության վարչություններին, որ այդ գործում լավագույն ուսուցիչներին ընդգրկեն, բայց, կարելի է ասել, ոչ բոլոր դեպքերում էին ընդգրկվել լավագույնները:

**- Ինչպե՞ս կատարվեց ԳԹԿ ներկայացուցիչների ընտրությունը: Այդպիսի մեծ ծավալի աշխատանքը միայն Գնահատման և թեստավորման կենտրոնի աշխատողների միջոցով կատարելը, բնականաբար, անհնար էր: Նրանք նո՞ւյնպես վերապատրաստման դասընթացների մասնակցեցին:**

- Ներկայացուցիչներ ունեցել ենք բոլոր 251 քննական կենտրոններում: Այդ հարցում մեզ շատ օգնեց ՀՀ կրթության և գիտության նախարարությունը: Երևանի բոլոր քննակենտրոններում նախարարության ներկայացուցիչներն էին իրականացնում վերահսկողությունը: Մարզերում ԳԹԿ ներկայացուցիչները, առաջին հերթին, ԳԹԿ -ի աշխատողներն էին և միասնական քննություններին որպես ԳԹԿ ներկայացուցիչ մասնակցած անձինք, որոնք արդեն որոշակի փորձ ունեին: Բնականաբար, նրանք նույնպես մասնակցել են վարապատրաստման դասընթացներին: Բացի այդ, յուրաքանչյուր մարզում մենք ԳԹԿ աշխատողներից նշանակել էինք մեկ պատասխանատու, որն անմիջականորեն չէր մասնակցում քննությանը որևէ կենտրոնում: Նրա հիմ-

նական աշխատանքը քննության ընթացքում քննակենտրոններից ստացված զանգերին պատասխանելն էր: Ասեմ նաև, որ ԳԹԿ-ն կազմակերպել էր իր ներկայացուցիչների տեղափոխումը մարզերի քննական կենտրոններ և նրանց վերադարձը ԳԹԿ, ուր նրանք քննությունից հետո փակ ծրարներով բերում էին աշակերտների գրավոր աշխատանքները:

- **Կենտրոնացված ավարտական քննությունը, ընդհանուր առմամբ, հաջողությամբ իրականացվեց, սակայն բուհերի ընդունելության քննությունների համեմատ բավականին մեծ էր դրա արդյունքները բողոքարկողների թիվը...**

- Գնահատման և թեստավորման կենտրոն բերվել է 31.119 գրավոր աշխատանք: Ուսուցիչները, որոնք եղել են 1200 հոգի, ստուգել են պատասխանների ձևաթղթի շարադրանքի և կարճ պատասխանների մասը: ԳԹԿ-ում ստուգվել են ընտրովի պատասխաններով առաջադրանքների արդյունքները և դրվել գրավոր աշխատանքի ընդհանուր գնահատականը: Այս ամենից հետո բոլոր դպրոցներին ուղարկվել են իրենց աշակերտների գրավոր աշխատանքները, այսինքն, դպրոցը ստացել է իր աշակերտների գրավոր աշխատանքները ստուգված վիճակում: Եթե բողոքարկելու խնդիր եղել է՝ բողոքարկել են: Հետաքրքիրն այն է, որ հիմնականում բողոքարկել են այն աշակերտների ծնողները, որոնք կարմիր վկայականների հավակնորդ էին համարվում: Ուզում եմ մի փաստի մասին խոսել. եթե նախկինում ավելի քան 4000 աշակերտ էր ստանում բարձր՝ 18-20 գնահատականներ, որոնցից, մոտավորապես 3000-ը ստանում էին կարմիր վկայականներ, ապա այս քննությունից հետո 18-20 է ստացել ընդամենը 700 աշակերտ: Մենք չգիտենք, թե նրանցից քանիսն են ստացել կարմիր վկայական, այդ տվյալները նախարարությունում կլինեն: ԳԹԿ-ում ստեղծեցինք բողոքարկումները քննող հանձնաժողով, որը գիշեր-ցերեկ աշխատում էր: Բողոքում էին առավելապես շարադրանքի գնահատականից: Ամենավատն այն էր, որ բողոքում էր ոչ մասնագետը, այլ ծնողն էր բողոքում: Երբ ծնողին ասում ես այս ու այս սխալներն են արվել, չի ուզում հաս-

կանալ, նա իր գնահատականն է ուզում և վերջ: Ճիշտն ասած, չէի նախանձում այդ հանձնաժողովի անդամներին:

**- Ի՞նչ կասեք քննության արդյունքների մասին, զգալի՞ էր դրանց տարբերությունը նախորդ տարիների հայոց լեզվի ավարտական քննությունների արդյունքներից:**

– 2019 թվականի կենտրոնացված քննության արդյունքները երբ համեմատում ենք անցած տարիների հետ, տեսնում ենք, որ ընդհանուր միջին միավորը մնացել է գրեթե նույնը. 2019 թվականին եղել է 12. 17, , 2018-ին՝ 12.69, 2017-ին՝ 12.81 (20 միավորանոց համակարգում): Ի՞նչն է փոխվել: 2017 թվականին 18-ից 20 միավոր ստացած աշակերտների թիվը եղել է 4200 (14.4 տոկոս), 2018-ին՝ 4097 (14.1 տոկոս), մոտավորապես նույնն է եղել, 2019 թվականին՝ կենտրոնացված քննությունից հետո, 700 (2.2 տոկոս): Այսինքն, իջել է բարձր գնահատականներ ստացողների թիվը, միջին գնահատական ստացողների թիվը մնացել է գրեթե նույնը, որովհետև ավելացել է անբավարար գնահատական ստացողների թիվը: Եթե վերջիններիս թիվը 2017 թվականին եղել է ընդամենը 352 (1.2 տոկոս), 2018-ին՝ 331 (1.1 տոկոս), ապա 2019-ին եղել է 1665 (5.4 տոկոս): Այս թիվն էլ մեծ չէ, կանխատեսում էինք ավելի մեծ թվով անբավարար գնահատականներ: Սա ևս մի վկայություն է, որը 9-րդ դասարանցիները լավ էին նախապատրաստվել հայոց լեզվից կենտրոնացված ավարտական քննությանը:

**- Այս քննության արդյունքների վերլուծությունից հետո Գնահատման և թեստավորման կենտրոնում որոշակի ճշգրտումներ, ընդհանրացումներ կատարվե՞լ են, չ՞է որ նախատեսվում է հետագա տարիներին կենտրոնացված ձևով անցկացնել 9-րդ և 12-րդ դասարանների բոլոր ավարտական քննությունները:**

-Իհարկե, ԳԹԿ-ում և այս տարվա համաժողովում քննարկվել են կենտրոնացված քննությանը վերաբերող հարցեր: Կարող են լինել մասնակի փոփոխություններ: Մասնավորապես, կարող են փոխվել շարադրանքի մասի գնահատման միավորները: Եթե այս տարի շարադրանքի համար տրվում էր առավելագույնը 5 միավոր՝ բովանդակային մասին 3 և ուղղագրական, քերականական, բառագործական մասին 2 միավոր, ապա հաջորդ տարի ընդհանուր առավելագույն



գնահատականը կարող է լինել 4՝ համապատասխանաբար՝ 2 և 2: Այսինքն՝ 2 միավորը չի կարող ինչ-ինչ պատճառներով 3 և 1 միավորը դառնալ 2: Գնահատման նոր տարբերակի դեպքում նման բան հնարավոր չէ. աշակերտը կատարել է սխալ, ուրեմն 2 միավորի փոխարեն կստանա 1 միավոր:

Հարցազրույցը վարեց Աշոտ ՂԱԶԱՐՈՍՅԱՆԸ

## ՀՈՒՎԱԾՆԵՐ



*Ընդհանուր տեղեկատվության համար ներկայացնում ենք հողվածներ մի շարք երկրների կրթական համակարգերի վերաբերյալ:*

## Նույն ՄՏԵՓԱՆՅԱՆ

ԳԹԿ համագործակցության և վերապատրաստումների բաժնի առաջատար մասնագետ

### Վրաստանի կրթական համակարգը

Տարբեր երկրների կրթության ոլորտում առկա քննությունների տեսակների և քանակի վերլուծությունը թույլ է տալիս այդ երկրները բաժանել երեք խմբի:

Առաջին խմբին են պատկանում այն երկրները, որտեղ դպրոցի ավարտական և բուհի ընդունելության քննությունները անցկացվում են մեկ անգամ (միասնական քննություններ, որի արդյունքներն օգտագործվում են ավարտական քննությունների և ընդունելության համար): Դրանք են՝ Ավստրալիան, Ավստրիան, Բուլղարիան, Հունգարիան, Գերմանիան, Դանիան, Ինդոնեզիան, Իսլանդիան, Կիպրոսը, Քուվեյթը, Լիտվան, Նորվեգիան, Նիդերլանդները, Ռումինիան, Իտալիան, Կոլումբիան, Ֆրանսիան, Ֆինլանդիան, Թունիսը, Շվեյցարիան, Էստոնիան: Թվարկված երկրներից միայն ութում են քննություններն անցկացվում կենտրոնացված (Բուլղարիա, Հունգարիա, Դանիա, Իսրայել, Ինդոնեզիա, Իտալիա, Նորվեգիա և Ֆինլանդիա):

Երկրորդ խմբին են պատկանում այն երկրները, որտեղ քննությունները կազմակերպվում են երկու (միմյանցից անկախ) փուլերով՝ դպրոցի ավարտական և ընդունելության (Հունաստան, Լատվիա, Մակեդոնիա, Սլովենիա, Չեխիա, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Իրան, Կանադա, Մալազիա, Նոր Զելանդիա, Սինգապուր, Հայաստան):

Երրորդ խմբին են պատկանում Բելգիան և Շվեդիան, որտեղ բացակայում են ավարտական և ընդունելության պարտադիր քննությունները:

Վրաստանի Հանրապետության քննական համակարգը դժվարանում ենք մտցնել վերոնշյալ խմբերից որևէ մեկի մեջ՝ կրթության ոլորտում անընդհատ կատարվող փոփոխությունների պատճառով: Թեև այս պահի դրությամբ, Վրաստանի վարչապետի հայտարարության համաձայն, չեղարկվել են 11-րդ և 12-րդ դասարանների ավարտական քննությունները, բայց բազմաթիվ ուսուցիչների բողոքներից ելնելով Վրաստանի կրթության, մշակույթի և սպորտի նախարարությունում չեն բացառում ավարտական քննությունների վերականգնումը:

Վրաստանում ուսումնական տարին մեկնարկում է սեպտեմբերի 15-ին և ավարտվում հունիսի 10-ին, բացառությամբ 12-րդ դասարանցիների. նրանց ուսումնական տարին ավարտվում է մայիսի 15-ից 25-ը, որից հետո սկսվում են ավարտական քննությունները:

Դպրոցներ ընդունելությունը սկսվում է 6 տարեկանից: Միջնակարգ կրթության համակարգը բաժանված է 3 մակարդակի՝ տարրական (1-6-րդ դասարաններ), 6-րդ դասարանից աշակերտները առանց քննությունների փոխադրվում են 7-րդ դասարան, հիմնական դպրոց՝ 6-9-րդ դասարաններ, անցումը՝ առանց քննության, միջնակարգ դպրոց՝ 9-12-րդ դասարաններ: Դպրոցներում գնահատումը կատարվում է 10 բալային համակարգով: 1-4-րդ դասարաններում գնահատականների փոխարեն աստղիկներ են դրվում, կիսամյակի և տարվա վերջում դասողեկը յուրաքանչյուր աշակերտի համար գրում է ամփոփիչ մեկնաբանություն<sup>16</sup>:

Վրաստանը 12-ամյա ուսուցման է անցել 2009 թվականից, մինչ այդ գործում էր 11-ամյա ուսուցում:

Վրաստանը մի քանի անգամ հանել և մտցրել է ավարտական քննությունները: Առհասարակ Վրաստանը երբեք չի վախենում փորձարկումներից: Սա գուցե պայմանավորված է նախարարների հաճախակի փոփոխմամբ (15 նախարար 27 տարում):

2004-2005 ուստարվա շրջանավարտների համար չեղարկվեցին ավարտական քննությունները, մեկնաբանությունը՝ քննությունների իրական գործառույթը չի իրականացվում, դրանք կրում են ձևական բնույթ: 2010-2011 ուստարվանից Վրաստանում անցկացվում էին

<sup>1</sup> <https://sputnik-georgia.ru/infographics/20160914/233211152/Shkolnoe-obrazovanie-v-Gruzii.html>

ավարտական կենտրոնացված քննություններ 8 առարկաներից (վրաց լեզու և գրականություն, աշխարհագրություն, օտար լեզու, կենսաբանություն, պատմություն, ֆիզիկա, մաթեմատիկա և քիմիա), որոնք կազմակերպում և անցկացնում էր Քննությունների և գնահատականների ազգային կենտրոնը: 2012-2013 ուստարվա շրջանավարտների համար կրկին չեղարկվեցին ավարտական քննությունները: 2013-2014 ուստարվանից, 2017-2018 ուստարին ներառյալ, անցկացվում էին ավարտական կենտրոնացված քննություններ 8 առարկաներից: Ավարտական քննություններն անցկացվում էին համակարգչային թեստավորման մեթոդով (CAT համակարգչային հարմարեցված թեստավորում), յուրաքանչյուր աշակերտ քննությունը հանձնում էր իր դպրոցում: Շրջանավարտներին տրվում էր քննությունների հանձման օրն ու ժամը հաստատող անցաթուղթ: Յուրաքանչյուր առարկայի նվազագույն անցողիկ շեմը 5,5 միավորն էր: Բնագիտական առարկաների 30, իսկ հումանիտար առարկաների 40 հարցից բաղկացած թեստը լրացնելու համար աշակերտներն տրվել է 90 րոպե: Հաջորդ հարցին կարելի էր անցնել նախորդին պատասխանելուց հետո, նախորդ հարցերին անդրադառնալու հնարավորություն չի ընձեռվել: Մինչև 2017-18 ուստարի քննության ավարտին համակարգչի էկրանին շրջանավարտը տեսել է իր գնահատականը, 2018 թվականին քննության ավարտին գրվել է միայն անցողիկ շեմը հաղթահարելու կամ չհաղթահարելու մասին տեղեկություն, իսկ ատեստատի միջուկում որպես այդ առարկաների գնահատականներ անցկացվել են տարեկան գնահատականները: Այս փոփոխությունը աշակերտների շրջանում դժգոհություն է առաջացրել, քանի որ բոլորին հետաքրքրում էր իրենց ստացած գնահատականը:

2017 թվականից քննությունները անցկացվել են երկու փուլով: 11-րդ դասարանի աշակերտները հանձնել են ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն ու աշխարհագրություն (բացասական գնահատականի դեպքում վերոնշյալ առարկաները շարունակել են ուսումնասիրել 12-րդ դասարանում և նորից վերահանձնելու իրավունք ստացել), իսկ մյուս՝ «Մաթեմատիկա», «Վրաց լեզու», «Օտար լեզու» և «Պատմություն» առարկաները հանձնել են 12-րդ դասարանում: Հայկա-

կան և աղբբեջանական դպրոցների աշակերտները քննություններ հանձնում էին իրենց մայրենի լեզվով: Հետաքրքիր է, որ նույն 2017 թվականին ամբողջ երկրում ավելի քան 40.000 աշակերտ հանձնել է ավարտական քննություններ: Նրանցից մոտավորապես 11 հազար աշակերտ չեն անցել թեստավորումը: Իսկ 2018 թվականին 49.000 աշակերտ է հանձնել ավարտական քննություններ, նրանցից 2410-ը չեն հաղթահարել նվազագույն շեմը:

### **Բուհի ընդունելության համազգային քննությունների բարեփոխումը**

2004 թվականին Վրաստանում ներկայացվեց բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու նոր համակարգ: Մինչև բարեփոխումը ընդունելության քննությունները ամբողջությամբ բարձրագույն ուսումնական հաստատություններն էին իրականացնում: 2005 թվականից կազմվեց նոր ստանդարտային և հմտություն-կարողությունների վրա հիմնված համազգային քննությունների համակարգ: Կրթության և գիտության նախարարության կողմից 2004 թվականին ներկայացված կրթական բարեփոխման նպատակն էր բոլոր դիմորդների համար հավասար պայմանների ստեղծումը: Վրաստանում հենց այս բարեփոխման շրջանակներում ներդրվեցին համազգային քննությունները, որի համաձայն յուրաքանչյուր դիմորդ, անկախ ազգությունից, պարտավոր է հանձնել երեք պարտադիր թեստ՝ վրաց լեզվից, ընդհանուր հմտություն-կարողություններից (վրացերեն կամ ռուսաց լեզվով, 2008 թվականից նաև աղբբեջաներեն կամ հայերեն)) և օտար լեզու:

Շատ դիմորդներ բողոքում են, որ թեև դպրոցում տրամաբանություն չեն անցնում, սակայն ընդունելության քննությունների ժամանակ ստիպված են այս առարկայից ևս քննություն հանձնել: Կրթության նախարարությունում պարզաբանում են, որ դպրոցի յուրաքանչյուր առարկայի ծրագրում և չափորոշիչում կա, թե ինչ պետք է անի ուսուցիչը երեխաների տրամաբանության զարգացման համար, և յուրաքանչյուր առարկայի տրամաբանության խնդիրը հենց ուսուցչին է վերաբերում:

2010 թվականին իրականացվեցին մի քանի նշանակալի փոփո-

խություններ՝ կապված համազգային քննությունների հետ՝ բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսումը շարունակելու համար դիմորդները հանձնում են 4 քննություն (3 պարտադիր և մեկ առարկա, որն ընտրում է տվյալ բարձրագույն ուսումնական հաստատությունը): Վրաց լեզվի և գրականության, օտար լեզվի, տրամաբանության քննությունները պարտադիր են, իսկ չորրորդ պարտադիր քննությունը որոշվում է բարձրագույն կրթության ծրագրով: Մաթեմատիկա հանձնում են տեխնիկական ուղղություններ ընտրելու դեպքում, իսկ պատմություն՝ հումանիտար:

Դիմորդները հնարավորություն ունեն ընտրելու ինչպես տեխնիկական, այնպես էլ հումանիտար ուղղություն:

Համալսարանները իրավունք ունեն սահմանելու յուրաքանչյուր առարկայի քննության շեմը հաղթահարելու միավորը, որը յուրաքանչյուր տարի փոխվում է:

### **Ընդհանուր հմտության-կարողության (տրամաբանության) թեստը**


Թեստը բաղկացած է երկու մասերից՝ բնագիտական և մաթեմատիկա, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին բաղկացած է չորս ենթամասերից: Բնագիտական մասը բաղկացած է «Տրամաբանություն», «Նախադասության լրացում», «Ընթերցած տեքստի վերաիմաստավորում» և «Համանմանություն» ենթաբաժիններից (ընդհանուր 40 առաջադրանք): Մաթեմատիկայի մասը՝ «Քանակական համեմատություն», «Խնդիրներ», «Տվյալների վերլուծություն» և «Տվյալների բավարարություն» ենթամասերից (ընդհանուր 40 առաջադրանք): Յուրաքանչյուր առաջադրանքի կցված է 4 կամ 5 պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Յուրաքանչյուր մաս լուծելու համար տրվում է մեկ ժամ 35 րոպե: Առավելագույն միավորը՝ 80:

Տրված են դրույթներ.


- Իմ բակում միայն մշտադալար ծառեր են:
- Ես տնկում էի ոչմշտադալար ծառեր:
- Ես տնկում էի մշտադալար ծառեր:

Ստորև տրված դիագրամներից  $n$  ըը/որոն նը են համապատասխանում այս դրույթների բովանդակությանը:


I




II



III



IV



(ա) Միայն I

(բ) Միայն II

(գ) Միայն III

(դ) I և III

(ե) II և IV

Տրված են դրույթներ.


- Բոլոր սողունները սառնարյուն են:
- Ոչ մի սողուն չի ապրում բարձր ծառերի վրա:
- Բարձր ծառերի վրա միայն թռչուններն են բնակվում:
- Ոչ մի թռչուն սառնարյուն չէ:

Ստորև թվարկածներից  $n$  ըն է ճիշտ նկարագրում այս նախադասությունների միջև եղած հարաբերակցությունը:

- I բխում է մնացած երեքից:
- II բխում է մնացած երեքից:
- III բխում է մնացած երեքից:
- IV բխում է մնացած երեքից:
- Դրանցից ոչ մեկը չի բխում մնացած երեքից:



Համեմատեք A և B պլունակների վանդակներում տրված քանակությունները:


| A  | B |
|--|---|
| <p>Հավասարաբար ուղղանկյուն եռանկյունուց հատվել է շրջան, որի տրամագծի երկարությունը 2-անգամ պակաս է ուղղանկյուն եռանկյան էջի երկարությունից:</p> <div style="display: flex; justify-content: space-around; align-items: center;"> <div style="border: 1px solid black; padding: 5px; text-align: center;"> <p>Եռանկյան մնացած մասի մակերեսը</p> </div> <div style="border: 1px solid black; padding: 5px; text-align: center;"> <p>Հատված շրջանի մակերեսը</p> </div> </div>  |   |

- (ա) Եթե A պլունակի վանդակում տրված քանակությունը ավելի է B պլունակի համապատասխան վանդակում տրված քանակությունից
- (բ) Եթե B պլունակի վանդակում տրված քանակությունը ավելի է A պլունակի համապատասխան վանդակում տրված քանակությունից
- (գ) Եթե վանդակներում տրված քանակությունները հավասար են
- (դ) Եթե տրված տեղեկատվությունը բավարար չէ այն բանի որոշման համար, թե որ քանակությունն է ավելի


Երկրում արտադրված մրգի հիմնական մասը կազմում է խնձոր, տանձ, ցիտրուսներ և դեղձ: Դրանցից խնձոր, տանձ և դեղձ աճեցնում են երկրի բոլոր տարածաշրջաններում, իսկ **ցիտրուսներ**՝ միայն **հարավային տարածաշրջաններում**:

Չախակողմյա դիագրամի վրա տրված է երկրի հարավային տարածաշրջաններում աճեցրած մրգի ընդհանուր քանակի քանի տոկոսն են կազմում այս նույն տարածաշրջաններում աճեցրած ցիտրուսների, խնձորի, տանձի և դեղձի քանակությունները, իսկ աջակողմյա դիագրամի վրա ներկայացված են համանման տվյալները ամբողջ երկրի համար (այսինքն՝ երկրի բոլոր տարածաշրջանի հաշվառումով):

Խնձորի, տանձի, ցիտրուսների և դեղձի արտադրություն երկրի հարավային տարածաշրջաններում



Խնձորի, տանձի, ցիտրուսների և դեղձի արտադրություն ամբողջությամբ երկրում



Քանի՞ անգամ է գերազանցում երկրի հարավային տարածաշրջաններում աճեցրած տանձի և դեղձի ընդհանուր քանակը այս նույն տարածաշրջաններում աճեցրած խնձորի քանակությանը:

- (ա) 1,5 անգամ
- (բ) 2 անգամ
- (գ) 2,5 անգամ
- (դ) 3 անգամ
- (ե) 3,5 անգամ

Հեռախոսով գրուցելիս՝ առաջին թույլի արժեքն է  $a$  թեթրի, յուրաքանչյուր հետևյալ թույլինը՝ ավելի պակաս է՝  $b$  թեթրի:  $\Omega$  թ դեպքում կծախսվի ավելի պակաս գումար և որքանով, եթե հեռախոսից օգտվենք.

I. Առաջին անգամ 4 թույլով, երկրորդ անգամ՝ 6 թույլով.

II. Միայն մեկ անգամ, բայց 10 թույլով:

- (ա) I դեպքում  $a - b$  թեթրիով,
- (բ) II դեպքում  $a - b$  թեթրիով,
- (գ) I դեպքում  $b - a$  թեթրիով,
- (դ) II դեպքում  $b - a$  թեթրիով,
- (ե) Երկու դեպքերում էլ միատեսակ գումար կծախսվի:

Տարվա վերջին Էլենեի աշխատավարձը 100%-ով ավելացավ:

Տրված է երկու պայման.


I. Տարվա վերջին Էլենեի աշխատավարձը ավելացավ 600 լարիով:

II. Տարվա վերջին Էլենեի աշխատավարձը կրկնապատկվեց:

Պարզելու համար, թե ինչի հավասարվեց Էլենեի աշխատավարձը տարվա վերջին:

- (ա) I պայմանը բավարար է, իսկ II-ը՝ ոչ
- (բ) II պայմանը բավարար է, իսկ I-ը՝ ոչ
- (գ) I և II պայմանները միասին բավարար են, իսկ առանձին-առանձին ոչ մեկ բավարար չէ
- (դ) առանձին-առանձին բավարար է ինչպես I, այնպես էլ II պայմանը
- (ե) տրված պայմանները բավարար չեն

Համեմատեք  $A$  և  $B$  պունակների վանդակներում տրված քանակությունները:


| $A$  | $B$ |
|--|-----|
| <p>Հավասարաբար ուղղանկյուն եռանկյունուց հատվել է շրջան, որի տրամագծի երկարությունը 2-անգամ պակաս է ուղղանկյուն եռանկյան էջի երկարությունից:</p> <div style="display: flex; justify-content: space-around; align-items: center;"> <div style="border: 1px solid black; padding: 5px; text-align: center;"> <p>Եռանկյան մնացած մասի մակերեսը</p> </div> <div style="text-align: center;">  </div> <div style="border: 1px solid black; padding: 5px; text-align: center;"> <p>Հատված շրջանի մակերեսը</p> </div> </div> |     |

- (ա) Եթե  $A$  պունակի վանդակում տրված քանակությունը ավելի է  $B$  պունակի համապատասխան վանդակում տրված քանակությունից
- (բ) Եթե  $B$  պունակի վանդակում տրված քանակությունը ավելի է  $A$  պունակի համապատասխան վանդակում տրված քանակությունից
- (գ) Եթե վանդակներում տրված քանակությունները հավասար են
- (դ) Եթե տրված տեղեկատվությունը բավարար չէ այն բանի որոշման համար, թե որ քանակությունն է ավելի


## 4+1 արտոնությունների ծրագիրը ազգային փոքրամասնությունների համար

Վրաստանի ազգային փոքրամասնությունների ինտեգրման ամենաարդյունավետ ծրագրերից մեկը՝ 4+1 խոշոր ազգային փոքրամասնությունների համար արտոնությունների ծրագիրը, մեկնարկել է 2010-2011 ուստարվանից, որի շրջանակներում նրանց հնարավորություն է տրվում հանձնելու ընդհանուր հմտությունների քննություն հայերեն, ադրբեջաներեն, արխազերեն և օսերեն: Այս ծրագրով, հանձնելով միայն ընդհանուր հմտությունների քննություն իրենց մայրենի լեզվով, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները ընդունվում են բուհ մեկ տարի վրացերենի արդյունավետ կուրսեր անցնելու պայմանով: 60 կրեդիտ հավաքելու դեպքում ուսանողը շարունակում է ուսուցումը բակալավիրատի 1-ին կուրսում:

Ծրագրի արդյունավետությունը փաստում է ամեն տարի ավելացող դիմորդների թիվը.



**Միայն հայերենով քննություն են հանձնել<sup>17</sup>**



Ինչո՞ւ են կարևոր այս թվային տվյալները մեզ համար: Նախկինում, եթե այս դիմորդները գալիս էին հայաստանյան բուհերում կրթությունը շարունակելու, քանի որ ունեին վրացերենի չիմացության խնդիր, այժմ պետությունը տալիս է հնարավորություն սովորելու վրացերեն և ստանալու մասնագիտություն իրենց երկրում՝ միաժամանակ լուծելով ազգային խնդիրներ:

**TIMMS, PISA և «Ազգային գնահատում»**

TIMMS միջազգային ստուգատեսն անցկացվում է չորս տարին մեկ անգամ, այն գնահատում է մաթեմատիկայի և բնագիտական առարկաների մակարդակը 4-րդ և 8-րդ դասարաններում: Համաձայն 2015 թ. տվյալների, Վրաստանը հետ է մնում միջազգային ցուցանիշներից: 4-րդ դասարանի աշակերտների 22% և 8-րդ դասարանի

<sup>17</sup> <http://jnews.ge/am/?p=23597#.XHUszYkzaUk>

28%-ը չի տիրապետում մաթեմատիկայի նվազագույն գիտելիքների: Տվյալներն ավելի վատ են բնագիտական առարկաների պարագայում. 4-րդ դասարանի աշակերտների 26% և 8-րդ դասարանի աշակերտների 30%-ը չունեն բնագիտական առարկաների բազային գիտելիքներ:

PISA` աշակերտների միջազգային գնահատման ծրագրով գնահատումը կատարվում է 15 տարեկան սովորողների շրջանում գիտելիքների և հմտությունների ստուգմամբ` թեստային առաջադրանքների տարբերակով, համակարգչի միջոցով: PISA -ի առաջադրանքները 4 ուղղությամբ են կազմվում` ընթերցանություն, մաթեմատիկա, բնագիտություն և համակարգչի իմացություն: Այս ծրագիրը օգնում է վեր հանել ազգային կրթության համակարգի խնդիրներն ու բացթողումները, ինչը կարող է հիմք հանդիսանալ կրթության քաղաքականության արդյունավետ մշակման համար:

Համաձայն արդյունքների, Վրաստանում սովորող աշակերտների կեսը չունեն բազային գիտելիքներ բնագիտական առարկանեից, իսկ 60 %-ը` մաթեմատիկայից:

«Ազգային գնահատմանը» 2017թ. մասնակցել է 1000 դպրոց, 9-րդ դասարանի 16,523 աշակերտ: Հումանիտար առարկաների համեմատ շատ վատ արդյունքներ են գրանցվել «Մաթեմատիկա» (30,3% «անբավարար» գնահատական ստացած), «Ֆիզիկա» (34,8% «անբավարար» գնահատական ստացած), «Քիմիա» (49,1% «անբավարար» գնահատական ստացած), «Կենսաբանություն» (13,3% «անբավարար» գնահատական ստացած) առարկաներից:

## **Հայաստանի և Վրաստանի քննական համակարգերի նմանությունները և տարբերությունները**

### **Նմանությունները**

- 12- ամյա կրթական համակարգ (տարրական, միջին և ավագ դպրոց)
- բուհի ընդունելության միասնական քննություններ
- անցկացվում են արտաքին և ընթացիկ գնահատումներ

### **Տարբերությունները**

- Վրաստանում 6-րդ և 9-րդ դասարաններում փոխադրական քննություններ չկան, Հայաստանում 4-րդ և 9-րդ դասարաններում ավարտական քննություններ կան
- Վրաստանում դպրոցի ավարտական քննություններ չկան, Հայաստանում՝ կան
- Վրաստանում բոլոր քննություններն անցկացվում են համակարգչային տարբերակով, իսկ Հայաստանում՝ թեստերով և ձևաթղթերով

### **Վրաստանի համակարգի առանձնահատկությունները**

- Նախկին ավարտական քննությունները յուրաքանչյուր աշակերտ հանձնում էր իր դպրոցում
- 11-րդ դասարանում աշակերտը իրավունք ուներ հանձնելու բնագիտական առարկաներից ավարտական քննություն
- Յուրաքանչյուր աշակերտ ուներ ավարտական քննությունների անհատական ժամանակացույց
- Վրաստանում կա բուհի ընդունելության «Տրամաբանություն» պարտադիր քննություն
- Ազգային փոքրամասնությունների համար գործում է ընդունելության հատուկ ծրագիր
- Բուհերն իրավունք ունեն տվյալ տարվա միավորներից ելնելով սահմանել ընդունելության շեմը

ԳԹԿ համակարգչային և վերլուծական  
աշխատանքների բաժնի գլխավոր մասնագետ

### Լիտվայի կրթական համակարգը

Լիտվայում կրթությունը պարտադիր է մինչև 16 տարեկանը: Կրթական համակարգի հիմքը 12-ամյա դպրոցն է:

Կրթության որակի պատասխանատուն Լիտվայի կրթության, գիտության և սպորտի նախարարությունն է, որի հսկողությամբ կազմակերպվում և անցկացվում են ազգային գնահատումներ (ավարտական և միասնական քննություններ, արտաքին ընթացիկ գնահատում, ազգային և միջազգային ստուգատեսներ): Գնահատման գործառույթն իրականացնում է նախարարության ենթակայությամբ գործող Ազգային քննական կենտրոնը (ԱՔԿ): Հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթության որակի գնահատման համար կիրառում են ներքին և արտաքին գնահատման համակարգը: Ներքին գնահատումն անցկացնում են դպրոցները, արտաքինը՝ Լիտվայի ԱՔԿ-ն, որը ազգային գնահատումների պատասխանատուն է 2011 թվականից: Ազգային գնահատումների նպատակն է կրթության որակի ապահովման համար անհրաժեշտ նախադրյալներ ստեղծելը և գիտելիքների գնահատման մշակույթի առաջընթացին նպաստելը:

Արտաքին գնահատման համակարգին կանդիդատանք առանձին:

## ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

### ❶ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Լիտվայում նախադպրոցական կրթությունը կազմակերպվում է 2 փուլով՝ մինչև 6 տարեկանների և 6-ից 7 (որոշ դեպքերում՝ 5-ից 6) տարեկանների համար, և պարտադիր չէ:

## 2 ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Դպրոցական կրթությունը բաղկացած է 3 փուլից՝ տարրական, հիմնական կամ ոչ լրիվ միջնակարգ և լրիվ միջնակարգ:

### Տարրական դպրոցը

Երեխաները տարրական կրթություն ստանում են 1-4-րդ դասարաններում (դպրոցներում կամ դպրոց-մանկապարտեզներում): Այս փուլում ուսուցումն առավելապես միտված է երեխաների ստեղծագործական ունակությունների զարգացմանը: Ճանաչողական ունակությունների զարգացմանը զուգընթաց երեխան ստանում է տարրական գրագիտություն, հաղորդակցման հմտություններ և հիմնական կամ միջնակարգ դպրոցում շարունակական կրթության համար անհրաժեշտ գիտելիքներ: 1-4-րդ դասարաններում գնահատականներ չեն դրվում, սակայն աշակերտների առաջադիմությունը ուսուցիչները կարող են գնահատել ըստ իրենց հայեցողության: Տարրական կրթություն ստանալուց հետո ստուգվում են աշակերտների գիտելիքները, և նրանք մեխանիկորեն փոխադրվում են 5-րդ դասարան՝ ստանալով տարրական կրթության վկայական:

### Հիմնական դպրոցը

Ոչ լրիվ միջնակարգ կրթություն ստանում են 5-10-րդ դասարաններում՝ հաճախելով հիմնական և միջնակարգ դպրոցներ կամ պրոգիմնագիաներ, որոնց կրթական ծրագիրը բաղկացած է 2 մասից՝ 5-8-րդ և 9-10-րդ դասարանների: 5-8-րդ դասարաններում ուսումնասիրում են պարտադիր հանրակրթական առարկաներ, 9-10-րդում սկսվում է որոշ առարկաների խորացված ուսուցումը և նախապատրաստումը գիմնագիա ընդունվելուն:

Պրոգիմնագիաներում ուսումնասիրում են 5-10-րդ դասարանների առարկաները: 5-8-րդ դասարաններում ուսումնասիրում են հանրակրթական պարտադիր առարկաներ: 5-6-րդ դասարաններում աշակերտները սկսում են ուսումնասիրել 2-րդ օտար լեզուն: 9-րդ դասարանից սկսվում է որոշ առարկաների խորացված ուսուցումը և նախապատրաստումը գիմնագիա ընդունվելուն: Պրոգիմնագիաներում ուսումնասիրում են նաև մասնագիտական առարկաներ:



Շատ թույլ և շատ ուժեղ աշակերտների համար դպրոցների ղեկավարության որոշման հիման վրա հնարավոր է ուսուցումը կազմակերպել անհատական պլանով:

12-16 տարեկանները կարող են սովորել նաև «երիտասարդական դպրոցում», որտեղ ստանում են հիմնական կրթություն: Դրանք այն հաստատություններն են, որոնք կրթական համակարգ են վերադարձնում այն դեռահասներին և երիտասարդներին, ովքեր ինչ-ինչ պատճառներով չեն հաճախում հանրակրթական դպրոցներ: Այդպիսիք կարող են լինել ուսման շարժառիթներ չունեցողները, սոցիալական անձեռնմխելիությունը կորցրածները, սոցիալ-տնտեսական կամ այլ պայմանների պատճառով իրենց սկզբնական դպրոցն ավարտել չկարողացողները, «դժվար» պատանիները և երիտասարդները:

Հիմնական կրթության փուլում սովորողների առաջադիմությունը գնահատվում է 10 միավորանոց համակարգով: Այս փուլի ավարտին հանձնում են ավարտական քննություններ և ստանում հիմնական կրթության վկայական (ատեստատ):

### ★ Արտաքին գնահատումը

2002 թվականից Լիտվայում իրականացնում են սովորողների առաջադիմության ազգային հետազոտություններ (արտաքին գնահատումներ): 2002-2005 թթ. հետազոտություններն անցկացվում էին Կրթության, գիտության և սպորտի նախարարության «Դպրոցների կատարելագործման ծրագրի» շրջանակներում: 2006-ից ազգային հետազոտություններն իրականացվում են «Կրթական ռազմավարության պետական ծրագրի» իրականացմանը զուգընթաց: 2008-2011 թթ. առաջադիմության ազգային հետազոտություններն ընդհատվել են տնտեսական պատճառներով. անցկացվել են միայն TIMSS և PIRLS միջազգային ստուգատեսները:

Արտաքին գնահատումների խնդիրներն են՝

- սովորողների առաջադիմության ազգային մոնիթորինգի իրականացումը, նորամուծությունները և դրանց հաջողության գնահատումը,
- ուսումնական պլանի բովանդակության գնահատումը և գնահատման չափանիշների հաստատումը,

- աշակերտների և ուսուցիչների համար թեստերի և գնահատման այլ գործիքների մշակումը,
- կրթության բաժինների և դպրոցների ղեկավարության աշխատանքային արդյունքների գնահատման և գործունեության պլանավորման համար անհրաժեշտ տվյալներ հավաքելու նպատակով անհրաժեշտ գործիքակազմի մշակումը:

Սովորողների առաջադիմության գնահատման նպատակով մշակվել են թեստեր 2-րդ (մայրենի լեզվից ընթերցանություն և գրավոր աշխատանք, մաթեմատիկա), 4-րդ (մայրենի լեզվից ընթերցանություն և գրավոր աշխատանք, մաթեմատիկա, շրջակա աշխարհի ճանաչողություն), 6-րդ (մայրենի լեզվից ընթերցանություն և գրավոր աշխատանք, մաթեմատիկա) և 8-րդ (մայրենի լեզվից ընթերցանություն և գրավոր աշխատանք, մաթեմատիկա, բնագիտություն, սոցիալական կրթություն) դասարանների համար:

2019 թ. գարնանը ազգային գնահատում է անցկացվել 2-րդ, 4-րդ և 6-րդ դասարաններում: 8-րդ դասարանում էլեկտրոնային թեստավորում է անցկացվել մաթեմատիկայից և բնագիտությունից:

8-րդ դասարանում արտաքին գնահատումն ընդգրկում է՝

- ընթերցանության թեստը, որով ստուգվում է տեքստի ընկալման կարողությունը,
- գրավոր աշխատանքը, որով ստուգվում է տեքստի կազմման կարողությունը,
- մաթեմատիկայի թեստը,
- բնագիտության թեստը,
- սոցիոլոգիական թեստը:

Յուրաքանչյուր թեստի առաջադրանքների կատարման համար նախատեսվում է 60 րոպե:

2012 և 2014 թթ. լիտվերենից և մաթեմատիկայից ազգային ստուգատեսներ են անցկացվել 4-րդ և 8-րդ դասարաններում: Ստուգատեսի ընթացքում անցկացվել է նաև աշակերտների և ուսուցիչների հարցում: 2014 թվականից Ազգային քննական կենտրոնը 8-10-րդ դասարաններում կազմակերպում է մաթեմատիկական և բնագիտական գրագիտության ազգային մրցույթ, որով ստուգվում են աշակերտների ընդհանուր ունակությունները և կոնկրետ իրավիճակներում գիտելիքները կիրառելու հմտությունները: 2016 թվականից մրցույթն անցկացվում է էլեկտրոնային եղանակով: Մասնա-

կիցների թվի սահմանափակում չկա: Ամենամեծաթիվ մասնակիցներով դպրոցները պարզևատրվում են շնորհակալագրերով: 2018 թ. անցկացվել է տրամաբանական մտածողության և խնդիրների լուծման ազգային մրցույթ:

**★ Հիմնական դպրոցի ավարտական քննությունները**

Հիմնական դպրոցի ավարտական քննություններով ստուգվում են 1-10-րդ դասարանների համար սահմանված գիտելիքները և հմտությունները: Ատեստատ ստանալու համար շրջանավարտը պարտադիր պետք է քննություն հանձնի լիտվերենից և ևս 3 ընտրովի առարկայից: Այդ քննությունները գարնանային քննաշրջանում հանձնում են փետրվար-մայիս ամիսներին, իսկ աշնանայինում՝ հոկտեմբերին: Վերաքննությունը հունիսի վերջին-հոկտիսի սկզբին է:

Ավարտական քննությունների արդյունքների գնահատումը կատարվում է 10 միավորանոց սանդղակով:

Տեխնիկական և գեղարվեստի դպրոցների քննություններն անցկացվում են հոկտեմբերից մինչև ապրիլ ընկած ժամանակաշրջանում: Գիմնազիաների 3-րդ դասարանի ավարտական քննությունները հանձնում են հունվար-ապրիլ ամիսներին:

Ավարտական քննությունների ժամանակացույցը հաստատում է կրթության, գիտության և սպորտի նախարարը: Ազգային քննական կենտրոնի տնօրենը հաստատում է քննությունների անցկացման հրահանգները, գնահատման ուղեցույցները, ազգային փոքրամասնությունների մայրենի լեզվով թարգմանված թեստերը: Դպրոցները համագործակցում են տվյալների փոխանցման ԿԵԼՏԱՍ համակարգի հետ:

Քննական հանձնաժողովի կազմում լինում են գործադիր տնօրենը (կարող է լինել նաև ուսումնական հարցերի գծով դպրոցի տնօրենի տեղակալը կամ ուսուցիչներից մեկը), ադմինիստրատորը, քննությունն իրականացնողները, առարկայական մասնագետները, տվյալ ոլորտի մասնագետները և օպերատորները: Կախված աշակերտների թվից՝ հանձնաժողովի անդամների թիվը որոշում է դպրոցի տնօրենը:

Լիտվերեն տեքստի ընկալման, լեզվի իմացության և կիրառության թեստը (առավելագույն միավորը՝ 28) կազմվում է տեքստի ընկալմանը վերաբերող 8 առաջադրանքից (գումարային առավելագույն միավորը՝ 12), լեզվի իմացությանը և կիրառությանը վերաբերող 7 առաջադրանքից (գումարային առավելագույն միավորը՝ 16): Քննության տևողությունը՝ 100 րոպե:

Լիտվերեն տեքստի կազմման գրավոր աշխատանքի համար տրված 3 առաջադրանքներից ընտրում են մեկը և կազմում 250 բառից կազմված տեքստ՝ այն գրելով թեստում դրա համար հատկացված էջում: Սնագրության համար տրվում են կնքած մաքուր թղթեր: Քննության տևողությունը՝ 150 րոպե:

Գրավոր յուրաքանչյուր աշխատանքը ստուգվում է առնվազն 2 մասնագետի կողմից: Եթե նրանց նշանակած գնահատականների տարբերությունը չի գերազանցում 2 միավորը, վերջնական է համարվում երկրորդ գնահատողի նշանակածը, իսկ եթե տարբերությունը լինում է 2 միավորից մեծ, հանձնաժողովի նախագահը նշանակում է կրկնակի ստուգում: Երկուսից ավելի մասնագետի առկայության դեպքում ստուգում է 3-րդ մասնագետը, և հաստատվում է 3-րդ մասնագետի նշանակած գնահատականը: Գնահատականները մուտքագրվում են ԿԵԼՏԱՍ համակարգում:

Մաթեմատիկայի քննության արդյունքները հրապարակվում են 10 աշխատանքային օրվա ընթացքում, լիտվերենինը՝ 13, ազգային փոքրամասնությունների լեզուներինը՝ 9:

Քննությունները հաջողությամբ հանձնած աշակերտները ստանում են հիմնական կրթության ավարտական վկայական:

### **Միջնակարգ դպրոցը**

Լրիվ միջնակարգ կրթություն ստանում են 11-12-րդ դասարաններում կամ գիմնազիայի 3-4-րդ դասարաններում: Դպրոցական կրթության այս փուլը պարտադիր չէ:

○ **Միջնակարգ դպրոցում** աշակերտները սովորում են հանրակրթական պարտադիր, ինչպես նաև ընտրովի առարկաներ: Գործում է հոսքային ուսուցումը (տեխնիկական և հումանիտար՝ բոլոր դպրոցներում, գեղարվեստական՝ Գեղարվեստի ազգային դպրոցում և Արվեստների գիմնազիայում, տեխնոլոգիական՝ մասնագիտական դպրոցներում և գիմնազիաներում):

○ **Գիմնագիաներում** սովորելով 3 կամ 4 տարի՝ ստանում են խորացված միջնակարգ կրթություն:

○ **Մասնագիտական** կրթություն (հիմնական դպրոցն ավարտելուց հետո սովորում են 3 տարի) ստանում են միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում: Եթե սովորում են 2 տարի, ստանում են միայն մասնագիտական որակավորում: Այս հաստատություններում կարելի է սովորել տարբեր մակարդակի ծրագրերով:

**★ Հասունության վկայականի քննությունները**

Միջնակարգ կրթություն ստացած շրջանավարտները գարնանը հանձնում են հասունության վկայականի քննություններ և ստանում ատեստատ: Դրանք կարող են հանձնել դպրոցի կամ համագրային մակարդակով: Հասունության ատեստատի համար հանձնում են լիստվերենի պարտադիր և մեկ ընտրովի առարկայի քննություն: Բուհ ընդունվելու համար հանձնում են 3 պարտադիր քննություն, կարող են քննություն հանձնել նաև ընտրովի 3 առարկայից: 2013 թվականից պետական ավարտական քննությունը գնահատվում է 100 միավորանոց սանդղակով: Դրական միավորի շեմ է սահմանվել 16-ը:

Քննությունների համար հայտագրվում են տվյալ ուսումնական տարվա սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին՝ դիմումը ներկայացնելով իրենց ուսումնական հաստատության տնօրենին: Բուհ ընդունվել ցանկացողները հանձնում են 3-ից մինչև 6 քննություն: Պետական քննություններն անցկացվում են կենտրոնացված:

**Քննական կենտրոնների ցանկը** յուրաքանչյուր քաղաքում որոշում է քաղաքային վարչակազմի ղեկավարը կամ նրա կողմից նշանակված անձը: Ցանկը մուտքագրվում է տվյալների փոխանցման ԿԵԼՏՍՍ համակարգում:

Ավարտական և պետական քննությունները նույն օրվա ընթացքում չեն անցկացվում: Բացառություն են կազմում օտար լեզուների բանավոր քննությունները: Միևնույն օրվա ընթացքում միևնույն քննական կենտրոնում կարելի է քննություն անցկացնել առավելագույնը երկու օտար լեզվից:

Ազգային քննական կենտրոնը մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 10-ը թարմացնում է տվյալների փոխանցման ԿԵԼՏԱՍ համակարգը և քաղաքապետարանների կրթության բաժիններին և դպրոցներին տեղեկացնում համակարգին միանալու կարգի մասին, հաստատում է տվյալների փոխանցման ձևերը, գրանցման արձանագրությունները և քննությունները: Հիմնական քննաշրջանից 3 աշխատանքային օր առաջ և վերաքննության ընթացքում Ազգային քննական կենտրոնը քննական առաջադրանքների փաթեթների հետ քաղաքապետարաններ է ուղարկում նաև քննությունների արձանագրությունների փաթեթները:

**Քննությունն անցկացնողների կազմն** առաջարկում է տվյալ քննական կենտրոնի ղեկավարը (բացի տեխնոլոգիաների և արվեստների քննություններից): Այդ կազմում ընդգրկված են լինում նաև մասնագետներ այլ դպրոցներից: Քննությունները համակարգում է տվյալ դպրոցի ղեկավարը կամ նրա կողմից երաշխավորված անձը: Ավագ պաշտոնատար անձը (գործադիր տնօրենը) կամ դպրոցի տնօրենը, ինչպես նաև այն անձինք, որոնց հարազատները պետք է քննություն հանձնեն տվյալ քննական կենտրոնում, չեն կարող նշանակվել որպես առարկայական մասնագետ կամ տվյալ քննական մասնագիտության վարպետ: Քննությունն անցկացնողների կազմը հաստատում է քաղաքային վարչակազմը:

Բուհ ընդունվելու համար համալսարանների և կոլեգիաների դիմորդները քննություններ են հանձնում լեհերենից, օտար լեզվից և մաթեմատիկայից, որոնցից հավաքված միջին միավորը համալսարանների համար պահանջվում է 40-ից ոչ պակաս, կոլեգիաների համար՝ 25-ից ոչ պակաս: Գեղարվեստի բուհեր ընդունվելու համար մաթեմատիկայի քննություն չեն հանձնում:

Լիտվերեն լեզվի և գրականության պետական (գրավոր) քննությունը տևում է 4 ժամ, ավարտականը՝ 3 ժամ: Քննության ժամանակ կարելի է օգտագործել և պարտադիր ծրագրում ընդգրկված հեղինակներից էլեկտրոնային նյութեր: Համակարգիչները ինտերնետին միացված չեն լինում: Քննության մասնակիցների յուրաքանչյուր 14 հոգիանոց խմբի համար նախատեսվում է 2 համակարգիչ: Աշակերտը համակարգից կարող է օգտվել քննությունը սկսելուց 1 ժամ հետո կամ քննությունն ավարտելուց 1.5 ժամ առաջ՝ 20 րոպեից ոչ ավելի տևողությամբ: Կարելի է օգտվել նաև 2 անգամով՝

10-ական թույլ տնտեսությամբ: Վերջին 1.5 ժամվա ընթացքում համակարգչից կարելի է օգտվել միայն 10 թույլ: Այն դեպքում, երբ քննության ավարտից 1.5 ժամ առաջ աշակերտն օգտված է եղել միայն 10 թույլ, մնացած 1.5 ժամվա ընթացքում մյուս 10 թույլից չի կարող օգտվել, եթե կան համակարգչից օգտվելու հերթին սպասողներ:

Գրավոր քննության վերջին 15 թույլում քննասենյակում մնացած մասնակիցները քննասենյակից դուրս չեն գալիս, եթե նույնիսկ ավարտած են լինում իրենց աշխատանքը: Քննության ավարտին քննությունն անցկացնողը մոտենում է աշակերտներին, ծրարի մեջ է դնում պատասխանների ձևաթղթերը, քննության արձանագրությունը, չօգտագործված թեստերը, ձևաթղթերը և այլն: Դրանից հետո աշակերտները կարող են դուրս գալ քննասենյակից:

Քննությունների ավարտից հետո քննական նյութերը Ազգային քննական կենտրոնի տնօրենի հանձնարարությամբ կրթության բաժիններ են հասցնում հատուկ հանձնակատարները:

Գնահատման համար Ազգային քննական կենտրոնի տնօրենի հրամանով նշանակվում են ընդունելության քննությունների արդյունքների գնահատման պետական հանձնաժողովներ, որոնք աշխատում են ԿԵԼՏԱՍ համակարգում: Հանձնաժողովների կազմում լինում են հանձնաժողովի նախագահը, տեղակալները և գնահատողները (առարկայական և այլ մասնագետներ), որոնց թիվը կախված է լինում քննություն հանձնաձևերի թվից և ստուգելու համար անհրաժեշտ ժամանակից:



Հասունության վկայականի քննությունների արդյունքների գնահատման հետ կապված խնդիրների լուծման համար ստեղծվում են ընդունելության քննությունների արդյունքների գնահատման պետական կոմիտեներ: Կոմիտեի կազմում լինում են նախագահը, Կրթության, գիտության և սպորտի նախարարության, Ազգային քննական կենտրոնի, Լիտվայի բուհերի և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները: Կոմիտեների անդամները նշանակվում են քաղաքային վարչակազմերի կողմից:

Գնահատումը կատարվում է 100 միավորանոց սանդղակով: Գնահատականները ԿԵԼՏԱՍ համակարգով փոխանցվում են դպրոցներին:



2018 թվականից սկսած՝ ինֆորմատիկայի և ֆիզիկայի քննությունները գնահատվում են էլեկտրոնային եղանակով: Դա թույլ է տալիս ավելի ճկուն դարձնել գնահատման գործընթացը. գնահատողներն այս կերպ կարող են աշխատել ոչ միայն գնահատման կենտրոններում, այլ նաև տանը:

Յուրաքանչյուր առարկայի գնահատման համար սահմանվում է առաջադիմության 3 մակարդակ՝ **բավարար** (16-35 միավոր), **բազային կամ լավ** (36-85 միավոր), **գերազանց** (86-100 միավոր): Ավարտական վկայականում նշվում են գնահատականները և պրոցենտիլները:


Հետևյալ աղյուսակներում ներկայացված է սանդղակավորված միավորների միջակայքերի համապատասխանությունը նախնական միավորների միջակայքերին:







**Քննությունների միավորների սանդղակավորման սխեման**



Քննական արդյունքների հետ անհամաձայնության դեպքում կարելի է բողոքարկել, պետական քննության համար՝ 2, ավարտականի համար՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:

Բողոքարկման դիմումները գնահատականների հրապարակումից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում ընդունում են դպրոցների տնօրենները: Դիմումները մուտքագրվում են ԿԵԼՏԱՍ համակարգում: Դիմումները քննարկում և վերագնահատումը կազմակերպում է Ազգային քննական կենտրոնի բողոքարկման խորհուրդը: Անկախ դիմումների թվից բողոքարկումները վերանայվում են արդյունքների հրապարակումից հետո, 2-3 շաբաթվա ընթացքում, սակայն հուլիսի 20-ից ոչ ուշ: Բողոքարկված արդյունքների վերանայումը 2018 թվականից սկսել են կատարել բողոքարկման գործընթացին զուգընթաց: 2018 թվականից գնահատականների փոփոխության վերաբերյալ արձանագրությունները Ազգային քննական կենտրոնը քաղաքապետարանների կրթության բաժիններին է ուղարկում հուլիսի 20-ին (նախկինում 23-ին էր), որտեղից էլ դրանք ուղարկվում են դպրոցների տնօրեններին:

Քննությունը չհանձնած շրջանավարտները լրացուցիչ փուլում կարող են մասնակցել միայն լիտվերենի քննությանը (հունիսի վերջին և հուլիսի առաջին տասնօրյակներում): Մյուս առարկաների վերահանձնումը թույլատրվում է հաջորդ տարի:

Բացի հասունության վկայականի քննություններից, սովորողները կարող են ներկայացնել նաև այսպես կոչված «հասունության աշխատանք», որը պարտադիր չէ: Ըստ էության, դա անհատական հետազոտական կամ ստեղծագործական աշխատանք է, որի պաշտպանության ժամանակ ստուգվում են սովորողի հաղորդակցվելու, ճանաչողական, նախաձեռնողական, ստեղծագործական և այլ կարողությունները: «Հասունության աշխատանքի» գնահատականը համարժեք է հասունության վկայականի քննությունների գնահատականներին և հաշվի է առնվում բուհ ընդունվելիս: Եթե սովորողը հավաքել է 9 կամ 10 միավոր, մրցույթի ժամանակ նրան տրվում է լրացուցիչ 0.25 միավոր:

2019 թվականից մրցույթի ժամանակ հաշվի է առնվում նաև միջին տարեկան գնահատականը, որը հաշվարկվում է ատեստատում ընդգրված 8 առարկաներից լավագույն գնահատական ունե-

ցող 5-ի տարեկան գնահատականներից: Հինգ պարտադիր առարկաների միջին միավորը համալսարանների համար պահանջվում է առնվազն 7, կոլեգիաների համար՝ առնվազն 6: Այլապես դիմորդը չի կարող բուհ ընդունվել:

Դպրոցական կրթության որևէ աստիճան կիսատ թողած անձինք ստանում են «Ուսումնական ձեռքբերումների վկայական»:

### ★ **Լիտվայի Ազգային քննական կենտրոնը**

Լիտվայի Ազգային քննական կենտրոնը պետական բյուջետային կառույց է, որի նպատակն է արտաքին գնահատման համակարգի (ընթացիկ գնահատումներ, ավարտական քննություններ, պետական և մասնագիտական քննություններ, միջազգային ստուգատեսներ) նախապատրաստումը և անցկացումը: Կենտրոնի գործունեությունը վերահսկում է Լիտվայի կրթության, գիտության և սպորտի նախարարը:

Ստորև ներկայացված են Ազգային քննական կենտրոնի գործառույթները.

1) ընթացիկ արտաքին գնահատումների, ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման ընթացակարգերի և քննությունների կազմակերպման ու անցկացման հետ կապված այլ փաստաթղթերի նախապատրաստում,

2) միջնակարգ և հիմնական կրթության գիտելիքների ստուգման ընթացիկ և ավարտական քննությունների կազմակերպում,

3) ավարտական քննությունների, արտաքին ընթացիկ գնահատումների և այլ հետազոտությունների առաջադրանքների կազմում և արդյունքները հետազոտության օբյեկտներին ներկայացնելու ապահովում,

4) Լիտվայի Հանրապետության պետական լեզվի և սահմանադրության քննությունների կազմակերպում,

5) հասունության քննությունների առաջադրանքներ կազմողների և գնահատողների վերապատրաստման և որակավորման բարձրացման կազմակերպում,

6) միջազգային կրթական 5 հետազոտությունների՝ TIMSS, PIRLS, ICCS, PISA, TALIS, իրականացում,

7) քննությունների, ուսումնական հետազոտությունների և սովորողների ուսումնական ձեռքբերումների թեստավորման արդյունքների վերլուծում, ամփոփում և ներկայացում մանկավարժներին և հանրությանը,

8) տարածքային վարչական մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցություն,

9) ավարտական քննությունների կազմակերպման, իրականացման, դասակարգման, հիմնական կրթության ձեռքբերումների քննությունների վերաբերյալ խորհրդատվության տրամադրում,

10) մասնակցություն հիմնական կրթության և հասունության ատեստատի քննությունների կատարելագործմանն ուղղված աշխատանքներին,

11) ԵՄ-ի կրթական ծրագրերի իրականացում:

### 3 ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Բարձրագույն կրթություն Լիտվայում կարելի է ստանալ համալսարաններում, ակադեմիաներում, կոլեգիաներում կամ հոգևոր սեմինարիաներում: Լիտվայի քաղաքացիների համար բարձրագույն կրթությունն անվճար է: Ուսուցումը պետական բուհերում իրականացվում է լիտվերենով: Մասնավոր բուհերում կա նաև ռուսերենով, գերմաներենով և անգլերենով ուսուցում:

Լիտվայում գործում է 22 բուհ և 19 գիտահետազոտական ինստիտուտ: Բուհերից 14-ը պետական են, 8-ը՝ մասնավոր: Գործում է նաև Լեհական համալսարանի մեկ մասնաճյուղ:

1999 թվականից Լիտվան մասնակցում է Բոլոնիայի գործընթացին: Բարձրագույն կրթությունը եռաստիճան է՝ բակալավրիատ (3.5-4.5 տարի), մագիստրատուրա (1.5-2 տարի) և դոկտորանտուրա (4-6 տարի): Դոկտորանտուրան համարժեք է ասպիրանտուրային:

Բակալավրիատը կարող է լինել սովորական և պրոֆեսիոնալ: Կիրառվում է կրեդիտային համակարգը: Բակալավրի դիպլոմ ստանալու համար ուսանողը պետք է հավաքի 180-240 կրեդիտ, մագիստրոսի համար՝ 90-120: Որոշ բուհերում բժշկական, անասնաբուժական, իրավունքի և կրոնի մասնագիտությունների գծով բակալավրիատը և մագիստրատուրան միասնական է (300-360 կրեդիտ): Այդ բուհերն ավարտողներին շնորհվում է մագիստրոսի աստիճան:

Կոլեգիաները տալիս են նեղ մասնագիտական, ավելի շատ կիրառական ուղղվածության կրթություն: Ուսումը տևում է 3-4 տարի, որից հետո ուսանողը կարող է ստանալ բակալավրի աստիճան: Լիտվայում գործող 23 կոլեգիաներից 10-ը մասնավոր են:

Լիտվայի բարձրագույն կրթության առանձնահատկություններից է, այսպես կոչված, «հովիտների»՝ հետազոտական կենտրոնների առկայությունը, որոնցում ուսանողները պատրաստում են իրենց գիտական աշխատանքները: «Հովիտներում» ուսանողներին հնարավորություն է տրվում արտադրական ոլորտի մասնագետների հետ համագործակցելու և նրանցից աշխատանքի առաջարկ ստանալու:

ԳԹԿ համակարգչային և վերլուծական  
աշխատանքների բաժնի գլխավոր մասնագետ

### Լեհաստանի կրթական համակարգը

Լեհաստանի կրթության ոլորտի պատասխանատուն Ազգային կրթության նախարարությունն է, որը ձևավորվել է 2006 թ., երբ Լեհաստանի նախարարների խորհրդի որոշմամբ Կրթության նախարարությունը տրոհվեց Ազգային կրթության նախարարության և Գիտության և բարձրագույն կրթության նախարարության: 1998 թվականին Ազգային կրթության նախարարության ենթակայությամբ ստեղծվել է Կենտրոնական քննական հանձնաժողովը (ԿՔՀ), որն ունի տարածաշրջանային 8 մասնաճյուղեր:

Լեհաստանում կրթությունը պարտադիր է մինչև 18 տարեկանը: Կրթական համակարգի հիմքը 12-ամյա դպրոցն է: 2002 թվականից Լեհաստանի դպրոցներում ներդրվել է **ներքին և արտաքին** գնահատումը: **Ներքին գնահատման** խնդիրն է աշակերտների գիտելիքների և հմտությունների մակարդակը որոշելը, նրանց համակարգված կրթական աշխատանքի մղելը, ծնողներին իրենց երեխաների հաջողությունների, դժվարությունների և հատուկ ունակությունների մասին տեղեկացնելը, դպրոցի տնօրինությանը յուրաքանչյուր աշակերտի առաջադիմության և զարգացման հեռանկարների մասին տեղեկացնելը, ուսման մեջ դժվարություններ ունեցող աշակերտներին օգնելը: **Ներքին գնահատումն** անցկացնում են ուսուցիչները: Առաջադիմության մակարդակը չափվում է ըստ դպրոցի հայեցողության, այն պայմանով, որ գնահատականները վերջում ներկայացվեն գնահատման 6 միավորանոց համակարգով:

**Արտաքին գնահատումն** ըստ էության ավարտական քննություններն են: Այն անցկացնում են Կենտրոնական քննական հանձնաժողովի ենթակայությամբ գործող տարածաշրջանային քննական հանձնաժողովները: Գնահատումն իրականացվում է պետական

ստանդարտներով ամրագրված քննական պահանջներին համապատասխան: Առաջադիմության մակարդակի չափման համար ԿՔՀ-ն մշակում է ստանդարտացված քննական պահանջներ և գործիքներ: Տարածաշրջանային քննական հանձնաժողովները մասնակցում են թեստերի կազմման և արտաքին գնահատման փորձարկման ու անցկացման, արդյունքների վերլուծության աշխատանքներին: Ազգային կրթության նախարարության համապատասխան մարմիններին տարածաշրջանային քննական հանձնաժողովները ներկայացնում են կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ:

Լեհաստանը մասնակցում է PISA, PIRLS և TIMSS միջազգային ստուգատեսներին:

2019 թ. կրթության սուբսիդավորման համար Լեհաստանի պետական բյուջեից տրամադրվել է մոտ 46 մլրդ զլոտի, որը կազմում է մոտ 5,9 տրլն ՀՀ դրամ: Մեկ աշակերտի կրթության համար տարեկան հատկացվում է 5600 զլոտի, որը համարժեք է ավելի քան 700 հազար ՀՀ դրամին:

## ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

### ❶ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Լեհաստանում կրթության առաջին աստիճանը նախադպրոցական կրթությունն է, որին հաջորդում են դպրոցական, ապա՝ բարձրագույն կրթությունը: Նախադպրոցական հաստատություններ հաճախում են 3-6 տարեկան երեխաները:

### ❷ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Դպրոցական կրթությունն անվճար է և՛ Լեհաստանի քաղաքացիների, և՛ արտասահմանցիների համար: Կրթության այս աստիճանն ընդգրկում է հիմնական և հետհիմնական կրթությունը: Հիմնական կրթությունն իր հերթին ներառում է 3 տարի տևող տարրական և 5 տարի տևող միջին կրթությունը: 1999 թվականից սկսած՝ հիմնական կրթություն են ապահովել նաև եռամյա գիմնազիաները, որոնց գործունեությունը վերջին տարիներին աստիճանաբար դադարեցվել է (այդ մասին ավելի մանրամասն ներկայացված է մի

ջին դպրոցին վերաբերող բաժնում): Հետիմնական կրթություն ստանում են ավագ դասարաններում՝ սովորելով 3-4 տարի: Բարձրագույն կրթություն կարելի է ստանալ միայն հետիմնական կրթություն ստանալուց հետո:

Անդրադասնանք դպրոցական կրթությանն ավելի մանրամասն:

### **Տարրական դպրոցը**

Տարրական դպրոց ընդունվում են 6-7 տարեկան երեխաները: Նախկինում 6 տարեկանում ընդունվում էին նախապատրաստական՝ «գրո» դասարան, որի կուրսը կարող էին անցնել նաև մանկապարտեզի վերջին տարում: 2016 թ. դեկտեմբերի կրթական ռեֆորմից հետո «գրո» դասարանը դպրոցներում չի գործում, սակայն մանկապարտեզի վերջին՝ նախապատրաստական տարին պարտադիր է բոլոր երեխաների համար: Ըստ այդմ, մինչև 2020 թվականը հիմնական դպրոցն աստիճանաբար դառնում է 8-ամյա:

Տարրական դպրոցում աշակերտներն ուսումնասիրում են գրել-կարդալ, թվաբանություն, երաժշտություն և ֆիզկուլտուրա, ծնողների ցանկությամբ կարող են ուսումնասիրել նաև «Էթիկա» և «Կրոնագիտություն» ֆակուլտատիվ առարկաները:

1-3-րդ դասարանների ուսուցիչները տարվա ընթացքում 2 անգամ պարտադիր ստուգում են աշակերտների ձեռք բերած գիտելիքները՝ դրանով ցույց տալով աշակերտների գիտական ու սոցիալական ձեռքբերումների մակարդակը, նրանց ուժեղ և թույլ կողմերը: Գիտելիքների ստուգման համար այս դեպքում գնահատականներ նախատեսված չեն: Ուսումնական տարվա ընթացքում ուսուցիչները տեղեկություններ են հավաքում աշակերտների պատրաստվածության վերաբերյալ: Ուսուցիչը կարող է գնահատականների փոխարեն օգտագործել պայմանանշաններ կամ խորհրդանիշներ, աշակերտական պորտֆոլիոներ (լաբորատոր աշխատանքների, նախագծային առաջադրանքների, թիմային աշխատանքի արդյունքներ) կամ գրել համառոտ մեկնաբանություններ:

1-3-րդ դասարանների աշակերտները ազգային գնահատումներին չեն մասնակցում: Նրանց գիտելիքների գնահատման նպատակով օգտագործվում են կրթական կազմակերպությունների կողմից տրամադրվող թեստեր, որոնք սովորաբար բաղկացած են լի-



նում համառոտ բովանդակային տեքստերի ընկալման կարողությունը ստուգող մի քանի առաջադրանքներից:

### Միջին դպրոցը

Տարրական դպրոցում ուսումնասիրվող առարկաներին միջին դպրոցում (4-8-րդ դասարաններ) գումարվում են պատմությունը, բնագիտությունը, ինֆորմատիկան, նկարչությունը, լեհերենը, օտար լեզուն (որպես կանոն՝ անգլերենը, իսկ 7-րդ դասարանից՝ 2-րդ օտար լեզուն (իսպաներեն, ֆրանսերեն կամ գերմաներեն, երբեմն՝ ռուսերեն)): 6-րդ դասարանի ավարտին անցկացվում է գիտելիքների գրավոր ստուգում (թեստ), որը չի ազդում դպրոցական կրթության ավարտական արդյունքների վրա: 8-րդ դասարանի ավարտին Կենտրոնական քննական հանձնաժողովը (ԿՔՀ) կազմակերպում է հիմնական կրթության ավարտական քննությունները:

Ի տարբերություն տարրական դպրոցի ավարտական թեստավորման՝ 8-րդ դասարանի ավարտական քննության արդյունքներն ազդում են հետագա ուսումնառության վրա. ստացված գնահատականներով որոշվում է, թե աշակերտը որտեղ կարող է շարունակել ուսումը (քոլեջում, լիցեյում կամ տեխնիկումում):

Գիմնազիաները, որոնք գործում էին 1999 թ. ռեֆորմից հետո, վերջին տարիներին գրեթե դադարեցրել են ընդունելությունը, որովհետև, ըստ էության, իրենց չեն արդարացրել և 2019 թվականին լուծարվել են: Դրանց կրթական ծրագրերը համապատասխանում էին միջին դպրոցի 7-9-րդ դասարանների ծրագրերին: Գիմնազիաներում սովորում էին 13-16 տարեկանները: Լուծարումից հետո գիմնազիաների սովորողները ուսումը կշարունակեն հիմնական դպրոցներում:

8-րդ դասարանի ավարտին սովորողները հանձնում են **ավարտական քննություններ**, որոնք ընդգրկում են 1-8-րդ դասարանների համար սահմանված գիտելիքները և հմտությունները: Արդյունքները

րի գնահատման համար **դրական միավորի շեմ չի սահմանվում**, որի շնորհիվ աշակերտները քննությունից չեն ձախողվում:

Ավարտական քննություններ հանձնում են 3 պարտադիր առարկաներից (լեհերեն, մաթեմատիկա, օտար լեզու)՝ գրավոր: Մտցվել է նաև 4-րդ պարտադիր քննությունը (աշակերտի ընտրությամբ՝ բնագիտական առարկաներից մեկը կամ պատմություն): Հիմնական փուլի քննություններն անցկացվում են ապրիլին, իսկ լրացուցիչ փուլինը՝ հունիսին: Ութերորդ դասարանի ավարտական քննություններն անցկացվում են 4 հաջորդական օրերի ընթացքում.

- 1) լեհերենի քննություն (տևողությունը՝ 120 րոպե),
- 2) մաթեմատիկայի քննություն (տևողությունը՝ 100 րոպե),
- 3) օտար լեզվի քննություն (տևողությունը՝ 90 րոպե),
- 4) ընտրովի առարկայի քննություն (տևողությունը՝ 90 րոպե):

Աշակերտն իր հետ կարող է քննասենյակ տանել միայն սև թանաքով գրիչ, իսկ մաթեմատիկայի քննության դեպքում՝ նաև քանոն: Քննության ժամանակ չի թույլատրվում օգտագործել հաշվիչ և բառարաններ: Չի թույլատրվում նաև որևէ հեռահաղորդակցային սարքավորում տանել և օգտագործել:

Ութերորդ դասարանի ավարտական քննության թեստերում լինում են ընտրովի և կարճ պատասխանով առաջադրանքներ:

**Մաթեմատիկայի** թեստի օրինակով դիտարկենք ավարտական քննության թեստի կառուցվածքը: Այդ թեստը կազմվում է ընտրովի պատասխանով 1 միավորանոց 15, կարճ պատասխանով 2 միավորանոց 3 և 3 միավորանոց 3 առաջադրանքներից (ընդամենը՝ 21 առաջադրանք): Ստորև ներկայացված է դրանցից մեկական օրինակ:

### 1 միավորանոց առաջադրանքի օրինակ

Տրանսպորտային ընկերությունը շահագործում է ծանրոցների առաքման և ստացման ինքնասպասարկման ավտոմատներ: Առաքվող ուղղանկյուն տուփերի առավելագույն չափերը կարող են լինել 38 սմ × 41 սմ × 64 սմ, իսկ քաշը չի կարող լինել 25 կգ-ից ավելի:


Հետևյալ աղյուսակում նշված չորս ծանրոցներից որո՞նք կարելի է առաքել ավտոմատ սարքի միջոցով՝ ելնելով դրանց չափերից և քաշից:

| Ծանրոցի համարը | Չափերը                | Քաշը  |
|----------------|-----------------------|-------|
| 1              | 37 սմ × 41 սմ × 66 սմ | 23 կգ |
| 2              | 38 սմ × 38 սմ × 59 սմ | 25 կգ |
| 3              | 35 սմ × 40 սմ × 64 սմ | 26 կգ |
| 4              | 26 սմ × 39 սմ × 63 սմ | 22 կգ |

- ա) 2-ը և 4-ը
- բ) 1-ը, 2-ը և 3-ը
- գ) 3-ը և 4-ը
- դ) 4-ը

**2 միավորանոց առաջադրանքի օրինակ**

Տրված է 7 սմ և 8 սմ չափերով ABCD ուղղանկյուն, որը *a* ուղիղով բաժանված է 2 սեղանների: CL հատվածի երկարությունը 3.2 սմ է: KBCL սեղանի մակերեսը 4 անգամ փոքր է ABCD ուղղանկյան մակերեսից:



Հաշվել KB հատվածի երկարությունը:

**3 միավորանոց առաջադրանքի օրինակ**

Դասարանի ավագի թեկնածուներ էին Յացեկը, Հելենան և Գրեգորը: Յուրաքանչյուր աշակերտ տվել է 1 ձայն: Յացեկը ստացել է 9 ձայն՝ ձայների 36%-ը, իսկ Հելենան՝ 6 ձայնով ավելի, քան Գրեգորը:

Հաշվեք, թե քանի ձայն են ստացել Հելենան և Գրեգորը:

**★ Ութերորդ դասարանի ավարտական քննությունների արդյունքները և վկայականները:** Ուսումնական տարվա ավարտին յուրաքանչյուր աշակերտ ստանում է 8-րդ դասարանի քննության արդյունքների վկայական, որում գրվում է յուրաքանչյուր

առարկայի քննության տոկոսային արդյունքը և արդյունքը պրոցենտիլային սանդղակում: Տոկոսային արդյունքը տվյալ առարկայի առաջադրանքների հնարավոր առավելագույն միավորից աշակերտի հավաքած միավորի տոկոսն է (կլորացվում է որպես ամբողջ թիվ): Պրոցենտիլային միավորը տվյալ առարկայի քննությունից նույնքան և ավելի ցածր միավոր հավաքած աշակերտների տոկոսն է (կլորացվում է որպես ամբողջ թիվ): Օրինակ, լեհերենի քննության հնարավոր առավելագույն միավորից 78% հավաքած աշակերտը վկայականից կարող է պարզել, որ նույնքան և ավելի ցածր արդյունք է ունեցել տվյալ քննության բոլոր մասնակիցների 73%-ը: Դա նշանակում է, որ ավելի բարձր միավորներ հավաքել է մասնակիցների 27%-ը: Պրոցենտիլային միավորը հնարավորություն է տալիս համեմատելու տվյալ աշակերտի միավորը երկրի բոլոր աշակերտների արդյունքների հետ:

Ավարտական քննության արդյունքները վերջնական են և չեն բողոքարկվում:

Ազգային փոքրամասնությունների աշակերտները մաթեմատիկայի թեստերը կարող են գրել իրենց մայրենի լեզվով: Դրա համար աշակերտի ծնողները (խնամակալները) դպրոցի տնօրենին դիմում են ներկայացնում տվյալ ուսումնական տարվա սեպտեմբերի 30-ից ոչ ուշ:

Առարկայական **օլիմպիադաների** դափնեկիրները կամ հաղթողներն ազատվում են տվյալ առարկայի քննությունից: Դա համարժեք է ամենաբարձր գնահատական ստանալուն:

**Հատուկ կրթական կարիքներ ունեցող աշակերտների** քննությունները կազմակերպվում են նրանց կարիքներին հարմարեցված պայմաններով և ձևերով:

## Ավագ դպրոցը

Ավագ դպրոցը դպրոցական կրթության եզրափակիչ փուլն է: Գիմնազիայի և հիմնական դպրոցի շրջանավարտները կարող են քննությունների արդյունքների հիման վրա ընդունվել եռամյա լիցեյ, քոլեջ կամ քառամյա մասնագիտական ուսումնական հաստատություն (տեխնիկում, որն, ըստ էության, տեխնիկական

լիցեյ է՝ ստանալով ավագ դպրոցական կրթություն, որը տևում է առնվազն 3 տարի:

**Լիցեյում** 3 տարի սովորելով՝ շրջանավարտը հանձնում է «Մատուրա» կոչվող քննություններ և ստանում հասունության ատեստատ: **Քոլեջում** սովորում են 3 տարի և ավարտելով՝ ստանում մասնագիտական որակավորումը հաստատող դիպլոմ: **Տեխնիկումում** սովորում են 4 տարի, և ուսման ավարտին հանձնելով քննություններ՝ ստանում են ատեստատ ու մասնագիտական որակավորման դիպլոմ: Աշակերտների մեծ մասը նախընտրում է քառամյա տեխնիկումները: Կարելի է նաև 2 տարի սովորել մասնագիտական դպրոցում, ապա ուսումը շարունակել հանրակրթական լիցեյում՝ սովորելով ևս 2 տարի:

Ուսման արդյունքներն ամփոփելով՝ ավագ դպրոցի շրջանավարտները հասունության ատեստատ ստանալու համար հանձնում են մատուրայի քննությունները և կարող են ընդունվել բուհեր: Պարտադիր են լեհերենի, մաթեմատիկայի և օտար լեզվի քննությունները: Բոլոր քննությունները, բացի լեհերենից և օտար լեզուներից, հանձնում են գրավոր:

Դպրոցական կրթության 3-րդ փուլը կարելի է անցնել նաև Լեհաստանի միջազգային վճարովի դպրոցներում (Վարշավայի Ամերիկյան դպրոց, Բրիտանական դպրոց, Ֆրանսիական լիցեյ)՝ ստանալով IB վկայական, որն ուղի է հարթում դեպի միջազգային բակալավրիատ:

#### ★ **Գնահատման համակարգը**

Լեհաստանի դպրոցներում գնահատել սկսում են 4-րդ դասարանից: Գնահատում են 6 միավորանոց համակարգով՝

- 6-գերազանց
- 5-շատ լավ
- 4-լավ
- 3-բավարար
- 2-ընդունելի
- 1-անբավարար:

Գնահատման նպատակով կիրառվում է «գնահատականի կշիռը», որով 1-ից մինչև 3 կշիռ է տրվում դասի ընթացքում

աշակերտի գործունեության յուրաքանչյուր տեսակին: Դրանով հնարավորություն է ընձեռվում օբյեկտիվորեն հաշվարկելու միջին միավորը: Օրինակ, ստուգողական աշխատանքի կշիռը 3 է, բանավոր պատասխանինը՝ 2, տնային աշխատանքինը՝ 1: Միջին միավորը հաշվարկելու համար յուրաքանչյուր գնահատականը գումարում են այնքան անգամ, որքան կշիռն է և բաժանում քանակի վրա:

Օրինակ, ստուգողական աշխատանքից աշակերտը ստացել է 4, կշիռը 3 է, ուրեմն՝

$$4 + 4 + 4 = 12$$

Բանավորից ստացել է 5, կշիռը 2 է՝

$$5 + 5 = 10$$

Տնային աշխատանքից ստացել է 6, կշիռը 1 է՝

$$6$$

Բոլոր կշռված միավորները գումարվում են և բաժանվում գնահատականների թվի վրա՝

$$(12 + 10 + 6) : 6 = 4.6$$

Այսպիսով, միջին միավորը տվյալ առարկայից ստացվեց 4.6:

Աշակերտի կիսամյակային գնահատականը հաշվարկելու համար հաշվի է առնվում շաբաթական ժամաքանակը, որով հաշվում են տվյալ դասընթացից աշակերտի ստացած գնահատականների նվազագույն քանակը: Դրա համար տվյալ առարկայի շաբաթական ժամաքանակը բազմապատկում են 2-ով և գումարում 1:

$$(2 \cdot 2) + 1 = 5$$

Հաշվարկից երևում է, որ տվյալ առարկայի դասընթացից աշակերտը պետք է ունենա առնվազն 5 գնահատական: Եթե աշակերտը բացականեր է ունեցել, և գնահատականների թիվը պակաս է նախատեսվածից, միայն մանկավարժական խորհրդի թույլտվությամբ կարող է հանձնել նյութը (սովորաբար դա լինում է ստուգողական աշխատանքը):

### ★ Մատուրայի քննությունները

Նոր քննական համակարգի («Նովա մատուրայի») ներդրումը 1990-ական թվականների վերջին և 2000-ականների սկզբին Լեհաստանի կրթական համակարգի մասշտաբային բարեփոխումների մի մասն է, որը նախատեսվում էր սկսել 2002 թվականից, սակայն 2001թ. իշխանության եկած Դեմոկրատական ձախ ուժերի միությունը հետաձգեց այդ ժամկետը մինչև 2005 թ.: «Նովա մատուրայի» համակարգի համաձայն ատեստատ ստանալու համար բոլոր սովորողները գարնանը հանձնում են լեհերենի, մաթեմատիկայի և օտար լեզվի ընդհանուր իմացության քննություն:

Ըստ բարդության աստիճանի տարբերում են քննությունների 2 մակարդակ՝ ընդհանուր իմացության և ընդլայնված: Ընդհանուր իմացության ստուգումն առավելապես անհրաժեշտ է ատեստատի համար (նաև որոշ բուհերում), ընդլայնվածը՝ բուհերի համար:

Քննությունները լինում են բանավոր և գրավոր, պարտադիր և ընտրովի:

Մատուրայի պարտադիր քննությունները լեհերենից, մաթեմատիկայից և օտար լեզվից են: Շրջանավարտն իր ընտրությամբ կարող է հանձնել լրացուցիչ ևս մեկ գրավոր խորացված քննություն: Այլ առարկաներից կամավոր կարելի է հանձնել առավելագույնը 5 քննություն, որպես կանոն՝ ընդլայնված մակարդակի: Կամավոր քննությունների համար շեմ նախատեսված չէ:

Մատուրայի քննությունները որպես կանոն շրջանավարտները հանձնում են իրենց ուսումնական հաստատություններում:

Հասունության ատեստատի քննությունը՝ մատուրան, կազմված է բանավոր մասից, որի արդյունքների գնահատումն իրականացնում են տվյալ դպրոցի ուսուցիչները՝ այլ դպրոցի առնվազն մեկ ուսուցչի հետ միասին, և գրավոր մասից, որի գնահատումն իրականացնում են տարածաշրջանային քննական հանձնաժողովները:

Ընդհանուր իմացության մակարդակով պարտադիր հանձնում են **լեհերենի** կամ ազգային փոքրամասնությունների և **օտար լեզվի** բանավոր և գրավոր, ինչպես նաև **մաթեմատիկայի** գրավոր քննությունները:

**Ընտրովի** առարկաներից գրավոր հանձնում են լեհերենի, մաթեմատիկայի և օտար լեզվի ընդլայնված, բնագիտական առարկաների, աստղագիտության, պատմության և այլ առարկաների քննությունները (որպես կանոն՝ ընդլայնված): Այդ ցանկից շրջանավարտը կարող է ընտրել 1-ից մինչև 5 առարկա:

Առարկայական օլիմպիադաների դափնեկիրներն ու հաղթողներն ազատվում են տվյալ առարկայի ավարտական քննությունից՝ վկայականում ստանալով ամենաբարձր միավորը:

Մատուրայի քննության համար նախնական **հայտագրվում են** մինչև տվյալ ուսումնական տարվա հոկտեմբերի 1-ը՝ դիմումը ներկայացնելով իրենց ուսումնական հաստատության տնօրենին: Ճշգրտման փուլի վերջին ժամկետը փետրվարի առաջին շաբաթվա ավարտն է:

Նախորդ տարիների շրջանավարտները կարող են նախնական հայտագրում անցնել մինչև տվյալ ուսումնական տարվա սեպտեմբերի 30-ը, իսկ մինչև դեկտեմբերի 31-ը փաստաթղթերը ներկայացնում են այն հաստատության տնօրենին, որտեղ պետք է հանձնեն քննությունները:

Քննության համար վճարվում է 50 զլոտի (համարժեք է մոտ 6500 ՀՀ դրամին), որը չի վերադարձվում քննությունից հրաժարվելու կամ դրական միավորի շեմը չհաղթահարելու դեպքում:

Դիմորդները քննությունները հանձնում են իրենց դպրոցներում: Քննական հանձնաժողովների կազմում լինում են տվյալ դպրոցի ուսուցիչները և այդ դպրոցում չդասավանդող առնվազն մեկ ուսուցիչ:

Մատուրայի քննությունների թեստերի ստուգումը կատարում են արտաքին ստուգողները: Վկայական ստանալու համար բավական է և՛ բանավոր, և՛ գրավոր քննություններից հավաքել հնարավոր առավելագույն միավորի 30%-ը: Ընտրովի առարկայի ընդլայնված իմացության գրավոր քննության արդյունքների գնահատման համար անցողիկ շեմ նախատեսված չէ:

2015 թվականից լեհերենի և Լեհաստանի ազգային փոքրամասնությունների մայրենի լեզվի բանավոր քննությունը հանձնում են ԿՔՀ-ի կազմած քննական տոմսերով: Շեշտը դրվում է դատողությունների ինքնուրույնության, մտքերը մայրենի լեզվով ճիշտ ձևակերպելու, ստեղծագործական մտածողության, կրեատիվությ-



յան (մտքի սահունության, ճկունության, յուրօրինակության և մշակվածության) ստուգման վրա:

Լեհերենի բանավոր քննության ժամանակ քննաթերթիկը վերցնելուց հետո պատրաստվելու համար շրջանավարտին տրվում է 15 րոպե: Պատասխանելու համար տրվում է 25 րոպե, որի առաջին 15 րոպեի ընթացքում դիմորդը ներկայացնում է պատրաստած թեման: Ներկայացման ընթացքում կարող է օգտագործել օժանդակ նյութեր: Ֆիլմի ցուցադրումը կամ ձայնագրված ելույթը, երաժշտություն նվագելը կարող է տևել առավելագույնը 5 րոպե: Երկրորդ մասը տևում է 10 րոպե և բաղկացած է լինում ներկայացված թեմայի շուրջ քննության մասնակիցների միջև երկխոսությունից:

Օտար լեզվի բանավոր քննության ժամանակ պատրաստվելու և պատասխանելու համար շրջանավարտին տրվում է 15-ական րոպե:

Մաթեմատիկայի ընդհանուր իմացության գրավոր քննության համար նախատեսվում է 170 րոպե, իսկ ընդլայնվածի համար՝ 180: Օտար լեզվի ընդհանուր իմացության համար նախատեսվում է 120 րոպե, ընդլայնվածի համար՝ 150, լեհերենի ընդհանուր իմացության համար՝ 170 րոպե, ընդլայնվածի համար՝ 180:

Մաթեմատիկայի քննության ժամանակ թույլատրվում է ունենալ քանոն, փոխադրիչ, դպրոցի կողմից տրամադրված մաթեմատիկական բանաձևեր, պարզագույն հաշվիչ, լեհերենի քննության ժամանակ՝ դպրոցի կողմից տրամադրված ուղղագրական բառարաններ: Օտար լեզուների քննության ժամանակ բառարան չի թույլատրվում:

Մաթեմատիկայի պարտադիր քննության ընդհանուր իմացության թեստի առաջադրանքները 34-ն են (ընտրովի պատասխանով 1 միավորանոց 25 առաջադրանք, կարճ պատասխանով 2 միավորանոց 6, 4 միավորանոց 2 և 5 միավորանոց 1 առաջադրանք):


Ստորև ներկայացված են մաթեմատիկայի ընդհանուր իմացության թեստի առաջադրանքների օրինակներ:

### 5 միավորանոց առաջադրանքի օրինակ

Կոորդինատային համակարգում  $A = (4,3)$  և  $B = (10,5)$  կետերը  $ABC$  եռանկյան գագաթներն են:  $C$  կետը գտնվում է  $y = 2x + 3$  հավասարման կորի վրա: Հաշվել  $C$  կետի կոորդինատները, եթե  $ABC$  եռանկյունն ուղիղ է:

### 4 միավորանոց առաջադրանքի օրինակ

Տրված է կանոնավոր եռանկյուն պրիզմա (տես՝ նկարը), որի ընդհանուր մակերեսը հավասար է  $45\sqrt{3}$ : Պրիզմայի հիմքի մակերեսը հավասար է կողմնայինի նիստի մակերեսին:



Հաշվել պրիզմայի ծավալը:

Մաթեմատիկայի ընդլայնված իմացության թեստում լինում է 15 առաջադրանք (ընտրովի պատասխանով 1 միավորանոց 4 փակ, կարճ պատասխանով 11 բաց (2 միավորանոց 1, 3 միավորանոց 3, 4 միավորանոց 4, 6 միավորանոց 2 և 7 միավորանոց 1 առաջադրանքներ)):

Ստորև ներկայացվում են մաթեմատիկայի ընդլայնված իմացության թեստի առաջադրանքների օրինակներ:

### 1 միավորանոց առաջադրանքի օրինակ

Հետևյալ հավասարումը՝  

$$||x| - 2| = |x| + 2$$

- ա) լուծում չունի
- բ) ունի 1 լուծում
- գ) ունի 2 լուծում
- դ) ունի 4 լուծում

### 6 միավորանոց առաջադրանքի օրինակ

$A = (-7, 1)$  կետը  $ABC$  հավասարասրուն եռանկյան գագաթն է, որի  $|AC| = |BC|$ :

C կետի երկու կողողինատները բացասական թվեր են: ABC եռանկյանը ներգծած շրջանագծի հավասարումն է՝

$$X^2 + Y^2 = 10$$

Հաշվել եռանկյան B և C գագաթների կողողինատները:

Պատասխան.....

.....

|                     |                      |    |
|---------------------|----------------------|----|
| Լրացնում է ստուգողը | Առաջադրանքի համարը   | 14 |
|                     | Առավելագույն միավորը | 6  |
|                     | Ստացված միավորը      |    |

### 7 միավորանոց առաջադրանքի օրինակ

Դիտարկեք այն բոլոր հավասարասրուն սեղանները, որոնց կարելի է ներգծել այնպիսի շրջանագիծ, որը բավարարում է հետևյալ պայմանին՝ սեղանի  $a$  մեծ հիմքի երկարության և բարձրության գումարը հավասար է 2-ի:

ա) Սահմանել բոլոր այն արժեքները, որոնց դեպքում գոյություն ունի տվյալ հատկություններով սեղանը:

բ) Ապացուցել, որ այդպիսի սեղանի  $L$  պարագիծը որպես երկարության ֆունկցիա արտահայտվում է հետևյալ բանաձևով.

$$L(a) = \frac{4a^2 - 8a + 8}{a}$$

գ) Հաշվել դիտարկվող սեղանի սուր անկյան տանգենսը:

Պատասխան.....

.....

|                     |                      |    |
|---------------------|----------------------|----|
| Լրացնում է ստուգողը | Առաջադրանքի համարը   | 15 |
|                     | Առավելագույն միավորը | 7  |
|                     | Ստացված միավորը      |    |

«Նովա մատուրայի» անցկացման վրա պետությունը ծախսում է 120 անգամ ավելի շատ ֆինանսական միջոցներ, քան ծախսում էր հին՝ «Ստարա մատուրայի» ժամանակ: Դրանք ծախսվում են թես-

տերի տպագրության, հանձնաժողովների վարձատրության վրա և այլն:

### **Մատուրայի առարկայական ուղեցույցները**

Լեհաստանի ԿՔՀ-ի կայքում կան մատուրայի քննությունների առարկայական ուղեցույցներ, որոնցում ներկայացվում է քննության նկարագրությունը, կան խնդիրների լուծման օրինակներ, օտար լեզուների դեպքում՝ նաև ձայնագրություններ: Հաշմանդամների համար լինում են ստանդարտ և կիրառական օրինակներ:

Մաթեմատիկայի ընդլայնված մակարդակի քննության համար նախատեսված ուղեցույցում ներկայացվում են 20-ից ավելի խնդիրներ՝ իրենց լուծումներով:

Լեհերենի ընդհանուր իմացության մակարդակի համար ներկայացվում է քննաթերթիկի օրինակ:

Լեհերենի բանավոր քննության համար ներկայացվում են 50 առաջադրանքների և մեկնաբանությունների օրինակներ, բանավոր քննության համար նախատեսված ձայնագրության օրինակ, քննության անցկացման ձևը ներկայացնող տեսանյութ:

Ներկայացվում է նաև լեհերենի լեզվական կոպիտ սխալներով նյութ:

Տեղեկատվական տեսանյութ կա նաև հասունության վկայականի վերաբերյալ:

Դիմորդների համար ԿՔՀ-ի կայքում հասանելի են նախորդ տարիների թեստերը:

### **o Մատուրայի փուլերը**

Մատուրայի հիմնական փուլում լեզուների բանավոր քննությունները և բոլոր առարկաների գրավոր քննություններն անցկացվում են մայիսին, լրացուցիչ փուլինը՝ հունիսին: Լրացուցիչ փուլում քննություն են հանձնում հիմնական փուլի քննություններին հիվանդության կամ այլ պատճառով չմասնակցած դիմորդները: Օգոստոսին բոլոր այն դիմորդները, որոնք առնվազն մեկ պարտադիր առարկայից (գրավոր կամ բանավոր) չեն հաղթահարել դրական միավորի շեմը, իրավունք են ունենում մասնակցելու մատուրայի վերահանձնման փուլին: Քննությունների արդյունքների բողոքարկումը նշանակվում է օգոստոսի 20-21-ին:

Բուհեր ընդունվելու համար փաստաթղթերի հանձնումից հետո մատուրայի արդյունքներով դիմորդները մասնակցում են բու-

հերի ընդունելության մրցույթին: Որպես կանոն, լրացուցիչ քննությունների անհրաժեշտություն չի առաջանում՝ բացառությամբ ստեղծագործական մասնագիտությունների (օրինակ՝ դերասանի վարպետության):

Վճարովի ուսուցումը պետական բուհերում ավելի թանկ է, քան մասնավորներում:

Արտասահմանցիների համար բուհական կրթությունը վճարովի է՝ բացառությամբ լեհական ծագումը հաստատող «Լեհի քարտ» կոչվող փաստաթուղթ ունեցողների:

#### o **Մատուրայի վկայականը**

Մատուրայի քննություններ հանձնած շրջանավարտը ստանում է միջնակարգ դպրոցի ավարտական վկայական և դրա պատճենը: Վկայականը պարունակում է քննական արդյունքների վերաբերյալ մանրամասն տեղեկություններ: Գրավոր քննությունների արդյունքները, հիմնական կրթության ավարտական վկայականի նմանությամբ, ներկայացվում են տոկոսներով և պրոցենտիլներով: Բանավոր քննությունների արդյունքները ներկայացվում են միայն տոկոսներով:

Մայիս-հունիս ամիսներին քննություն հանձնածներն ավարտական վկայականը ստանում են հուլիսի սկզբին, օգոստոսին հանձնածները՝ սեպտեմբերին:

#### \* **Էքստեռն քննություններ**

Միջնակարգ դպրոցի արտահերթ քննությունները կազմակերպվում են քննություններին ինքնուրույն պատրաստվելու որոշում ընդունած մեծահասակների համար, որոնց հնարավորություն է ընձեռվում ստանալու ավագ դպրոցի ավարտական վկայական: Դրանք կազմակերպվում են տարվա ընթացքում 2 անգամ՝ աշնանային (հոկտեմբերի 1-ից 31-ը) և ձմեռային (փետրվարի 1-ից մինչև վերջին օրը) քննաշրջաններում: Հայտերը շրջանային քննական հանձնաժողովներում աշնանային քննաշրջանի համար ընդունվում են մինչև հուլիսի 31-ը, ձմեռայինի համար՝ մինչև նոյեմբերի 30-ը: Դիմումի և այլ անհրաժեշտ փաստաթղթերի հետ ներկայացվում է միջնակարգ կամ հիմնական դպրոցի ավարտական վկայականը: Քննությունների ժամանակացույցը հրապարակվում է ԿՔՀ-ի կայ-

քում: Ավարտական վկայական ստանալու համար յուրաքանչյուր առարկայի քննության միավորներից պետք է հավաքել առնվազն 30%-ը:

Էքստենսիվ քննության արդյունքում հավաքած միավորները դասակարգվում են հետևյալ կերպ.

- 93% - 100% - գերազանց,
- 78% - 92% - շատ լավ,
- 62% - 77% - լավ,
- 46% - 61% - բավարար,
- 30% - 45% - թույլատրելի,
- 30% -ից պակաս - անբավարար:

**★ Կենտրոնական քննական հանձնաժողովը**

Կենտրոնական քննական հանձնաժողովը, որն ունի տարածաշրջանային 8 մասնաճյուղեր, մի կառույց է, որի գործառույթներն են արտաքին գնահատման համակարգի (ութերոդո դասարանի, մատուրայի և մասնագիտական քննություններ) նախապատրաստումը և կազմակերպումը: Հանձնաժողովի գործունեությունը վերահսկում է Լեհաստանի ազգային կրթության նախարարը:

Հանձնաժողովի առջև դրված խնդիրներն են՝

1. քննական նյութերի նախապատրաստումը, մասնավորապես, արտաքին գնահատում անցկացնելու համար առաջադրանքների և քննական թերթիկների կազմումը,
2. քննությունների գնահատման կարգի սահմանումը,
3. ԿՔՀ-ի կայքի «Հանրային տեղեկագրում» քննությունների վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը,
4. քննական նյութերի տպագրության կազմակերպումը և բաշխումը,
5. քննությունների արդյունքների վերլուծությունը,
6. կրթության նախարարին արտաքին քննությունների վերաբերյալ տարեկան հաշվետվությունների ներկայացումը,
7. դիմորդներին տրամադրվող ուսումնական նյութերի պատրաստումը,
8. հայրենական և օտարերկրյա հաստատությունների փորձագետների հետ համագործակցությունը,

9. փորձաքննության ոլորտում նոր լուծումների նախաձեռնումը և կազմակերպումը,
10. քննությունների անցկացման շրջանակներում միջազգային և միջգերատեսչական համաձայնագրերի իրականացումը, ԿՔՀ-ի կայքի «Հանրային տեղեկագրում» դրանց ամենամյա հրապարակումը,
11. քննությունների ժամանակացույցի, քննությունների ընթացքում թույլատրվող և օժանդակ նյութերի, քննությունների պայմանների և ձևերի, կազմակերպման և անցկացման վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը:

ԿՔՀ-ն կազմված է ութ բաժիններից և երկու անկախ աշխատանքային պաշտոններից (նրանք անմիջականորեն ենթարկվում են ԿՔՀ-ի տնօրենին)․

1. Ութերորդ դասարանի և գիմնազիայի քննությունների բաժին
  2. Հասունության ատեստատի քննությունների բաժին
  3. Օտար լեզուների բաժին
  4. Արտադպրոցական (էքստեռն) քննությունների բաժին
  5. Մասնագիտական քննությունների բաժին
  6. Քննական արդյունքների վերլուծության բաժին
  7. Ֆինանսահաշվապահական բաժին
  8. Վարչատնտեսական բաժին
- Փորձաքննության, տպագրության և բաշխման ընթացակարգերի անկախ մասնագետ
  - Ներքին աուդիտոր

### ③ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ներկայումս Լեհաստանում գործում է մոտ 460 բուհ, որոնցից 320-ը մասնավոր են: Լեհաստանը մասնակցում է Բոլոնիայի գործընթացին: Ըստ այդմ, բարձրագույն կրթությունը երկաստիճան է՝ բակալավրիատ (3 տարի) և մագիստրատուրա (2 տարի), բացառությամբ տեխնիկական մասնագիտությունների, որոնց դեպքում ինժեների մասնագիտություն կարող են ստանալ 4 տարվա ընթացքում: Իրավունքի, հոգեբանության և մի քանի այլ մասնագիտությո-

յունների գծով կրթությունն իրականացվում է միասնական մագիստրատուրայի ձևաչափով (5 տարի տևողությամբ):

Լեհաստանի յուրաքանչյուր բուհ ընդունելության իր պայմաններն ու կանոններն է սահմանում: Ընդունելությունը կարող է կազմակերպվել մատուրայի քնությունների գումարային միավորի հիման վրա անցկացվող մրցույթով: Որոշ բուհեր այն կազմակերպում են ընդունելության ներբուհական քնությունների հիման վրա:

Բուհերում փաստաթղթերի ընդունման հանձնաժողովները հիմնականում աշխատում են հուլիս-սեպտեմբեր ամիսներին, սակայն դիմումների ոչ մեծ քանակի դեպքում ժամկետը կարող է երկարաձգվել մինչև հոկտեմբերի վերջ:

Բուհերի ընդունելության մրցույթի ժամանակ հաշվի են առնում միայն ատեստատի տոկոսային միավորը: Պրոցենտիլային միավորը հասունության վկայականում սկսել են նշել 2015 թվականից: Պրոցենտիլային սանդղակը թույլ է տալիս ընդհանուր պատկերացում կազմել բուհերի ընդունելության մրցույթի ժամանակ դիմորդի ունեցած հնարավորության մասին, սակայն բուհերում հաշվի չեն առնվում պրոցենտիլային միավորները, որովհետև տարբեր տարիների թեստերի բարդությունից կախված՝ շրջանավարտների նկատմամբ կստացվի խտրական վերաբերմունք: Բուհերում պրոցենտիլային սանդղակը համարում են գնահատման ոչ օբյեկտիվ մեթոդ: Պրոցենտիլային սանդղակը մրցույթի ժամանակ հաշվի առնելու դեպքում խտրական մոտեցում կստացվի նաև հին քննակարգով ատեստատ ստացած դիմորդների և արտասահմանցիների նկատմամբ:

Լեհաստանի բուհերը պետական և մասնավոր են: Պետական բուհերում անվճար կարող են սովորել Լեհաստանի քաղաքացիները և մշտական բնակության թույլտվություն ունեցող արտասահմանցիները: Անվճար կրթությունը մատչելի է «Լեհի քարտ» ունեցող արտասահմանցիների, պետության կողմից հատուկ կարգավիճակ (փախստական և այլն) ստացածների, Եվրամիության երկարաժամկետ ռեզիդենտների, միգրացիա կատարող աշխատողների և նրանց ընտանիքի անդամների, որոշ միջպետական միավորումների և Շվեյցարիայի քաղաքացիների համար: Վճարովի ուսուցման դեպքում սահմանափակումներ չկան:



Պետությունը կրթաթոշակներ է սահմանում 1-ին կուրսն ավարտած այն ուսանողների համար, որոնք ըստ մասնագիտությունների մտնում են ամենաբարձր առաջադիմություն ունեցողների 5 տոկոսի մեջ: Բակալավրիատում և դոկտորանտուրայում սովորողներին տրվում է մեկանգամյա ֆինանսական աջակցություն (համապատասխանաբար՝ 3500 և 6000 եվրո):

Ստորև ներկայացվում են Լեհաստանում գործող բուհերի տիպերը:

- **Համալսարաններն** առնվազն 10 մասնագիտություններից գիտության դոկտորի աստիճան շնորհելու իրավունք ունեցող հաստատություններ են: Լեհաստանում կան դասական, տեխնիկական, և պրոֆիլային համալսարաններ: Գործում են 19 դասական համալսարաններ: Տեխնիկական և դասական համալսարանները դոկտորի աստիճան են շնորհում 10 մասնագիտություններից, որոնցից 6-ը տեխնիկական համալսարանների դեպքում պարտադիր լինում են տեխնիկական: Պրոֆիլային համալսարանները 6 մասնագիտություններից գիտության դոկտորի աստիճան շնորհելու իրավունք ունեցող հաստատություններ են: Այդ մասնագիտություններից 4-ը պարտադիր պետք է համապատասխան լինեն բուհի պրոֆիլին: Պրոֆիլային համալսարաններից են բժշկական, տնտեսագիտական, բնագիտական, երաժշտական, մանկավարժական և արվեստների բուհերը:

- **Պոլիտեխնիկաներն** առնվազն 6 մասնագիտություններից գիտության դոկտորի աստիճան շնորհելու իրավունք ունեցող հաստատություններ են: 6 մասնագիտություններից 4-ը պարտադիր լինում են տեխնիկական:

- **Ակադեմիաները** գիտության դոկտորի աստիճան շնորհելու իրավունք ունեն առնվազն 2 մասնագիտությունից:

- **Կոլեգիաները** բարձրագույն կիրառական կրթության, նաև լիցենզիատի (բակալավրիատի) դիպլոմ տալու իրավունք ունեցող հաստատություններ են: Կոլեգիաներ կարող են ընդունվել Լեհաստանի՝ միջնակարգ կրթություն ստացած և 19 տարին լրացած քաղաքացիները և ոչ քաղաքացիները: Կոլեգիաներում ստանում են գործնական հմտություններ: Ուսման տևողությունը 3-4 տարի է:

**Բարձրագույն դպրոցները և կոլեգիաները** դոկտորի աստիճան չեն շնորհում:

Մի քանի մասնագիտությունների (օրինակ, իրավունքի, հոգեբանության, բժշկության) գծով մագիստրատուրան անջատած չէ բակալավրիատից («միասնական մագիստրատուրա»), և ուսման տևողությունը 5-6 տարի է:

Ուսուցումը բուհերում իրականացվում է կրեդիտային համակարգով: Բակալավրիատում (լիցենզիատ) ուսման տևողությունը 3-3,5 տարի է: Ուսանողները ստանում են բակալավրի գիտական աստիճան և կարող են ընդունվել մագիստրատուրա: Մագիստրատուրայում սովորում են 1,5-2 տարի (տեխնիկական բուհերում ուսման տևողությունը 1 տարի ավելի է): Մագիստրատուրայից հետո կարող են ընդունվել դոկտորանտուրա՝ լեհական ասպիրանտուրա, և գիտական թեզ պաշտպանել:

ԳԹԿ համակարգչային և վերլուծական բաժնի առաջատար մասնագետ

### ԱՄՆ կրթական համակարգը

ԱՄՆ-ում դպրոցական կրթությունը 12-ամյա է, դպրոցական համակարգի մասին խոսելիս այն անվանում են K-12՝ կառուցվածքային առումով կարևորելով մանկապարտեզի վերջին տարին (k-kindergarten): Աշակերտները ընդունվում են դպրոցներ 5-6 տարեկան հասակում և ավարտում են 17-18 տարեկանում: ԱՄՆ-ում երեխաների 98%-ը մանկապարտեզից է անցնում հանրակրթական դպրոց:

Հանրակրթության համակարգը եռամակարդակ է, բաղկացած է տարրական, միջին և ավագ դպրոցներից: Ստորև ներկայացված են չորս տիպի կառուցվածք ունեցող հանրակրթական ուսումնական հաստատություններ.

- 8 տարի հիմնական դպրոց, որը ներառում է նաև տարրական դպրոցը, այնուհետև 4 տարի ավագ դպրոց,
- 4 տարի տարրական դպրոց, 4 տարի միջին դպրոց և 4 տարի ավագ դպրոց,
- 5 տարի տարրական դպրոց, 4 տարի կրտսեր ավագ դպրոց և 3 տարի ավագ դպրոց,
- 6 տարի տարրական դպրոց և 6 տարի միացյալ կրտսեր և ավագ դպրոցներ:

Մի շարք կրթական բարեփոխումներից հետո այժմ ԱՄՆ-ում, սկսած 3-րդ դասարանից մինչև 8-րդ կամ 9-րդ դասարանները, ամեն տարի աշակերտները հանձնում են քննություններ «Անգլերեն» և «Մաթեմատիկա» առարկաներից:

### **Քննական կենտրոններ**

ԱՄՆ-ում նահանգային մակարդակով գործում են կրթության գնահատման կազմակերպություններ, ինչպես նաև գործում են 4 կազմակերպություններ, որոնք մի քանի նահանգների աշակերտ-

ների և դիմորդների շրջանում իրականացնում են թեստավորում և գնահատումներ: Կազմակերպություններից երկուսը՝ «Կրթական թեստավորման ծառայություն» (ETS) և «Ամերիկյան քոլեջների թեստ կորպորացիան» (ACT inc.) թեստավորումներ իրականացնում են նաև այլ երկրներում գործող քննական կենտրոններում Ամերիկայի և այլ օտար երկրների բուհերում ընդունելության համար՝ դիմորդներին թեստավորելով SAT, GRE, GMAT, TOEFLE, ACT և այլ թեստերով:

1947 թվականից գործում է «Կրթական թեստավորման ծառայությունը» (ETS) շահույթ չհետապնդող կազմակերպությունը, որը Համալսարանների և քոլեջների խորհրդի (College Board) պատվերով պայմանագրային հիմունքներով 25 նահանգներում իրականացնում է թեստավորում դպրոցների 8-րդ կամ 9-րդ դասարաններում (SAT8/9, այնուհետև ավագ դպրոցների SAT10-րդ և 11-րդ դասարաններում):

SAT թեստավորումը բաղկացած է 5 ենթաբաժիններից՝ ընթերցանության թեստ՝ 47 առաջադրանք, որոնք կատարելու համար տրամադրվում է 60 րոպե, գրավոր և լեզվի իմացության թեստ՝ 44 առաջադրանք 35 րոպե, մաթեմատիկա 17 առաջադրանք 25 րոպե (արգելվում է հաշվիչ կիրառել) և մաթեմատիկա՝ 31 առաջադրանք 45 րոպե (թույլատրվում է հաշվիչ կիրառել), և շարադրություն՝ 50 րոպե տևողությամբ: Թեստի շարադրության հատվածը ըստ ցանկության է, քանի որ կան մասնագիտություններ, որոնց ընդունելության համար թեստի այդ հատվածը պարտադիր չէ: Այս թեստի արդյունքների հիման վրա դիմորդները կարող են դիմել քոլեջներ և համալսարաններ: «Կրթության թեստավորման ծառայության» կողմից են մշակվում և թեստավորվում GRE, GRE առարկայական, TOEFL, AP, SAT առարկայական և ընդհանուր առմամբ ավելի քան 31 թեստեր, որոնց արդյունքները դիմորդները օգտագործում են բուհերի ընդունելության ժամանակ: ԱՄՆ 265 և օտարերկրյա 281 համալսարաններ ընդունելության ժամանակ պահանջում են դիմորդների SAT թեստավորում: «Ամերիկյան քոլեջների թեստ կորպորացիան» (ACT inc.) շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որը առաջարկում է ACT թեստը և իրականացնում է ACT թեստավորում սկսած 1959 թվականից: ACT թեստավորման արդյունքները ևս կիրառվում են բուհերի ընդունելության ժամանակ:

ACT թեստը բաղկացած է 5 ենթաբաժիններից՝ անգլերենի իմացություն՝ 75 առաջադրանք, թեստային առաջադրանքները կատարելու համար տրվում է 45 րոպե, մաթեմատիկա՝ 60 առաջադրանք՝ 60 րոպե (թույլատրվում է հաշվիչ կիրառել), ընթերցանություն՝ 40 առաջադրանք՝ 35 րոպե, բնագիտություն՝ 40 առաջադրանք՝ 30 րոպե, և շարադրություն՝ 1 թեմա՝ 30 րոպե: Բուհեր ընդունվելիս կան մասնագիտություններ, որոնց դիմելու դեպքում չի պահանջվում շարադրության մասը, ուստի դիմորդը կարող է չկատարել թեստի այդ հատվածը:

2010 թվականից ԱՄՆ-ում նաև գործում է «Քոլեջների և կարիերայի պատրաստվածության գնահատման համագործակցությունը» (PARCC): «Համագործակցությանն» անդամակցող նահանգները պարտավորվում են իրականացնել գնահատումներ K-12 ամերիկյան դպրոցական համակարգում «Անգլերեն» և «Մաթեմատիկա» առարկաներից 3-8 դասարաններում և ավագ դպրոցում:

2010 թվականից գործում է նաև «Հավասարակշռված և խելացի գնահատում» (Smart Balanced) 4-րդ կառույցը, որն իրականացնում է աշակերտների առցանց գնահատումներ 3-8 դասարաններում և ավագ դպրոցում: Կան ԱՄՆ 6 համալսարաններ, որոնք ընդունում են աշակերտների ավարտական թեստավորման արդյունքները որպես դիմորդների բուհի ընդունելության դիմում-հայտի կարևոր մի մաս:

### **Ավարտական քննություններ**

Հարկավոր է նշել, որ ԱՄՆ 25 նահանգներում SAT և ACT թեստավորումները պարտադիր են ավագ դպրոցներում: 12 նահանգներում ավագ դպրոցներն ավարտելիս ավարտական քննությունները պարտադիր են, իսկ 38 նահանգներում՝ ոչ: Այդ 25 նահանգների ավարտական քննությունների տեսակներն ու պահանջները ներկայացված են ստորև:

1. Ալաբամայում՝ ACT Aspire թեստավորում, ACT թեստավորում, WorkKeys թեստավորում: Այս նահանգում ավագ դպրոցն ավարտելիս ավարտական քննություններ չեն հանձ-

նում, ավագ դպրոցում սովորելու ընթացքում անցնում են դասընթացներ, վերջում հանձնում են այդ դասընթացն ավարտելու քննություն:

2. Կոլորադոյում՝ PARCC, PSAT, SAT: Այստեղ նույնպես ավագ դպրոցում ավարտական քննություններ չեն հանձնում:
3. Կոնեկտիկուտում՝ SAT, ավարտական քննություններ չկան:
4. Դելավարում՝ PSAT, SAT, ավարտական քննություններ չկան:
5. Կոլումբիա դիստրիկտում՝ PARCC, SAT, ավարտական քննություններ չկան:
6. Հավայիում՝ SBAC, ACT, ավարտական քննություններ չկան:
7. Այդահոյում՝ SBAC, SAT կամ ACT, 10-րդ դասարանում հանձնում են սրանցից որևէ մեկը:
8. Իլինոյսում՝ SAT, ավարտական քննություններ չկան:
9. Կենտուկիում՝ K-PREP, ACT Quality Core, ACT, ավարտական քննություններ չկան:
10. Լուիզիանայում՝ ACT, LEAP-ը PARCC և Լուիզիանայի գնահատման կազմակերպության առաջադրանքներն են:
11. Մենում՝ SAT, ավարտական քննություններ չկան:
12. Միչիգանում՝ PSAT, SAT, WorkKeys, ավարտական քննություններ չկան:
13. Միսսիսիպիում՝ MAP, ACT, ավարտական քննություններ չկան:
14. Միսուրիում՝ ACT ավարտական քննություններ չկան:
15. Մոնտանայում՝ ACT, ավարտական քննություններ չկան:
16. Նեբրասկայում՝ ACT, ավարտական քննություններ չկան:
17. Նևադայում՝ ACT, ավարտական քննություններ չկան:
18. Նյու Հեմպշիրում՝ ACT:
19. Հյուսիսային Կարոլինայում՝ SAT, ավարտական քննություններ չկան:
20. Օհայոյում՝ SAT կամ ACT:
21. Հարավային Կարոլինայում՝ ACT, WorkKeys, ավարտական քննություններ չկան:
22. Թենեսիում՝ ACT կամ SAT, ավարտական քննություններ չկան:
23. Յուտայում՝ SAGA, ACT, ավարտական քննություններ չկան:

24. Վիսկոնսինում՝ ACT acpire, ACT, ավարտական քննություններ չկան:
25. Վայոմինգում՝ ACT Acpire, ACT, ավարտական քննություններ չկան:

Ստորև ներկայացվում են այն 12 նահանգները, որտեղ ավագ դպրոցն ավարտելիս ավարտական քննություն հանձնելը պարտադիր է: Ինչպես արդեն նշվեց, յուրաքանչյուր նահանգ ունի իր գնահատում և թեստավորում իրականացնող կառույցը, և ավարտական քննությունների կազմակերպման գործառույթներն իրականացնում է տվյալ նահանգի օրենսդրությամբ նախատեսված համապատասխան մարմինը:

1. Ֆլորիդայում՝ «Ֆլորիդայի ստանդարտների գնահատում» (Florida Standards Assessment (FSA)):
2. Ինդիանայում «Ինդիանայի կրթական առաջընթացի նահանգային թեստավորում» (Indiana Statewide Testing for Educational Progress Plus ISTEP+):
3. Լուիզիանայում՝ կիրառվում է երկու ավարտական քննություն՝ PARCC և «Լուիզիանայի կրթական գնահատման ծրագիր» (Louisiana Educational Assessment Program (LEAP)):
4. Մասաչուսեթսում կիրառվում է երկու ավարտական քննություն՝ «Հաջորդ սերնդի» Մասաչուսեթսի բազմակողմանի գնահատման համակարգ ("Next Generation" Massachusetts Comprehensive Assessment System (MCAS) և PARCC):
5. Միսիսիպիում կիրառվում է երկու ավարտական քննություն՝ MAC և ACT:
6. Վաշինգտոն նահանգում՝ Smarter Balanced Assessment Consortium (SBAC):
7. Վիրջինիայում՝ «Կրթական ստանդարտներ» (Standards of Learning (SOL)):
8. Տեխասում՝ «Տեխասի ակադեմիական պատրաստվածության գնահատում» (State of Texas Assessments of Academic Readiness (STAAR)):

9. Օհայոյում՝ «Դասընթացների ավարտական թեստավորում», SAT կամ ACT:
10. Նյու Յորքում՝ Regents Exams:
11. Նյու Մեքսիկոյում՝ PARCC թեստավորում:
12. Նյու Ջերսիում՝ PARCC թեստավորում:

Աշակերտը թեստավորումից կտրվելու դեպքում կրկնում է տվյալ քննական առարկան մինչև վերահանձնի քննությունը, քանի որ չի կարող այլ կերպ ավարտել դպրոցը: 21 նահանգներում PARCC-ը և Smart Balanced-ը պարտադիր են 3-8 դասարաններում, իսկ 7 նահանգներում՝ 3-9 դասարաններում:

### **Բուհերի ընդունելության պահանջները**

Բացի SAT կամ ACT, կամ Smart Balanced թեստերի արդյունքներից, բուհերը կարող են պահանջել նաև առարկայական այլ թեստերի արդյունքներ որպես ընդունելության անհրաժեշտ բաղադրիչ: ԱՄՆ-ում դիմորդները բուհեր կարող են դիմել և՛ միասնական դիմում-հայտ լրացնելու եղանակով (առցանց UCA պորտալի միջոցով), որտեղ նշվում են մինչև 20 համալսարանների մասնագիտություններ, և՛ առանձին համալսարանների դիմում-հայտեր լրացնելու եղանակով: Եթե համալսարանը ընդունում է դիմում-հայտերի երկու եղանակն էլ, ապա դրանք քննարկելիս ուշադրություն չի դարձվում այն հանգամանքին, թե որ եղանակով է համալսարանը ստացել դիմորդի դիմում-հայտը:

Տարբեր համալսարանների տարբեր մասնագիտությունների դեպքում ընդունելության պահանջները տարբեր են: Օրինակ, մաթեմատիկայի թեստերը երկմակարդակ են. կան մասնագիտություններ, որոնց համար հարկավոր է հանձնել SAT Math 1՝ 1-ին մակարդակի թեստ, իսկ կան մասնագիտություններ, որոնց դիմելու համար հարկավոր է հանձնել SAT Math 2՝ մաթեմատիկայի 2-րդ մակարդակ:

Հարկավոր է նշել, որ ԱՄՆ բուհերի ընդունելության պահանջները զգալիորեն տարբերվում են աշխարհի շատ երկրների կիրառվող բուհերի ընդունելության պահանջներից: Այստեղ կարևոր է դիմում-հայտի ամբողջական փաթեթը, որը ներառում է՝



- հանրակրթական ձեռքբերումները (ավարտական դիպլոմի կամ վկայականի ընդհանուր միջին գնահատականը (GPA)),
- ստանդարտացված թեստերի արդյունքները,
- շարադրություններ և անձնական պնդումներ,
- առաջադրման նամակներ,
- անգլերենի իմացություն,
- հավաստի տեղեկություն դիմորդի արտադասարանային գործունեության և հատուկ տաղանդների վերաբերյալ (խմբակների հաճախում, համայնքային կամ կամավորական աշխատանքներում ընդգրկվածություն):

### Ազգային ստուգատեսներ

Սկսած 1969 թվականից ԱՄՆ-ում իրականացվում է կրթական առաջընթացի գնահատման ազգային ստուգատես (NAEP – National Assessment of Educational Progress):

NAEP-ը ԱՄՆ օրենքով ամրագրված պարտադիր ծրագիր է, որը իրականացնում է Կրթության դեպարտամենտի կրթության և գիտության ինստիտուտի (IES) կրթական վիճակագրական ազգային կենտրոնը (NCES):

1975 թվականից ԱՄՆ կոնգրեսի պահանջով յուրաքանչյուր տարվա հունիսի 1-ին հրապարակվում է «Կրթությունը երկրում» հաշվետվությունը:

NCES-ը 1983 թվականից համագործակցում է ETS-ի հետ կրթական առաջընթացի ազգային ստուգատեսների քննական թեստերի զարգացման, թեստավորման իրականացման և վերլուծության համար:

NAEP ազգային գնահատումը Միացյալ Նահանգներում տարբեր առարկաներից սովորողների գիտելիքների գնահատման ամենամեծ ազգային ներկայացուցչական և շարունակական ուսումնասիրությունն է:

Արդյունքները ներկայացվում են որպես «Ազգային հաշվետվության քարտ»: Այն տրամադրում է վիճակագրական

տվյալներ ազգային, նահանգային և քաղաքային շրջանների մակարդակով:

Կրթության վիճակագրական ազգային կենտրոնը իրականացնում է միննույն NAEP գնահատումը յուրաքանչյուր նահանգում: Ի տարբերություն նահանգային գնահատումների՝ ազգային գնահատումների ժամանակ աշակերտները, ուսուցիչները և դպրոցների տնօրենները լրացնում են հարցաթերթ: Այդ տեղեկությունները օգնում են ուսումնասիրել որոշ գործոններ, որոնք կարող են ազդել աշակերտների առաջադիմության վրա:

NAEP ուսումնասիրությունը իրականացվում է ներկայացուցչական ընտրանքի հիման վրա: Ազգային ստուգատեսներին աշակերտները մասնակցում են իրենց դպրոցներում դասերի ժամանակ, անցկացվում է 90 կամ 120 րոպե տևողությամբ թեստավորում: Նշենք, որ ստուգատեսի արդյունքները բախտորոշիչ չեն կամ չեն ազդում տվյալ աշակերտի առաջադիմության ցուցանիշների վրա, սակայն այն աշակերտները, որոնք մասնակցում են այդ ստուգատեսներին խրախուսվում են, քանի որ իրենց մասնակցությամբ ապահովում են տվյալ տարիքային խմբի ազգային ներկայացուցչական պատկերը, որի վրա հենվելով կարելի է եզրակացություններ անել ազգային մակարդակով կրթության իրավիճակի մասին:

### **Կրթական բարեփոխումների օրենսդրական դաշտը**

#### **Տարրական և միջնակարգ կրթության (հանրակրթության) մասին օրենք 1965թ. (ESEA - Elementary and Secondary Education Act)**

Օրենքը մշակվել է նախագահ Լինդոն Ջոնսոնի նախաձեռնությամբ: «Լիարժեք կրթական հնարավորությունը պետք է լինի ազգի թիվ մեկ նպատակը»: «Պատերազմ աղքատության դեմ, կրթությունը պետք է լինի այն գենքը, որի օգնությամբ պետք է հաղթահարել աղքատությունը»:

Այս օրենքը դաշնային մակարդակով հիմնական միակ օրենքն է, որը հետագայում նախագահ Ջորջ Բուշ II-ի օրոք դարձավ ավելի ծավալուն և կոչվեց «Ոչ մի երեխա հետ չի մնա» ծրագիր (NCLB -No child left behind act):

NCLB օրենքի պահանջով բոլոր աշակերտները պետք է 2014 թվականին գերազանց լինեն գրագիտությունից և մաթեմատիկա-

յից՝ NAEP ազգային ստուգատեսի ստանդարտներին համապատասխան:

Օրենքի պահանջը անկատար էր մնում, քանի որ այն հավասար պայմաններ չէր ստեղծում ցածր, բարձր և գերազանց կատարողականություն ունեցող դպրոցների միջև: 2011 և 2014 թվականներին 8-րդ դասարանի աշակերտների միայն 1/3-ն է հասնում գերազանց արդյունքների:

Այնուհետև «Ոչ մի երեխա հետ չի մնա» օրենքին 2012 թվականին փոխարինում է «Յուրաքանչյուր աշակերտի հաջողելու մասին» օրենքը (ESSA- The Every Student Succeeds Act), որը ուժի մեջ է 2015 թվականից, երբ երկրի նախագահն էր Բարաք Օբաման:

2018թ.-ի սեպտեմբերի 26-ին ԱՄՆ Կրթության դեպարտամենտը հաստատեց Ֆլորիդա նահանգի «Յուրաքանչյուր աշակերտի հաջողելու մասին» օրենքի նահանգային մակարդակով իրականացնելու պլանը, եզրափակելով 2017 թվականից սկսած գործընթացը և տալով բոլոր 50 նահանգներին, Պուերտո Ռիկոյին և Կոլումբիա տարածքին օրենքի պահանջները նահանգային հսկողությամբ իրականացնելու հնարավորություն:

**Նորարարական գնահատման ցուցադրման լիազորություն** (Innovative Assessment Demonstration Authority (IADA)) ծրագիրը: Այն թույլ է տալիս իրականացնել փորձարարական նորարարական գնահատում նահանգային փոքրամասշտաբ ընտրանքի դեպքում:

Կրթության դեպարտամենտը յուրաքանչյուր տարի կարող է հաստատել մինչև յոթ նահանգների կամ մի քանի նահանգների խմբի՝ փորձարարական ծրագրին մասնակցելու դիմումները:

Այսպիսով այժմ ավելի շատ իշխանություն է տրվում նահանգային պատասխանատուներին, և դպրոցների, ուսուցիչների հաշվետվությունները ներկայացնելու են նահանգային պահանջներին համապատասխան՝ չանտեսելով ցածր արդյունքներ ցուցաբերող դպրոցները և աշակերտներին խմբերը:

Ինչպես ասել է Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Պոլ Պիտերսոնը «Դպրոցի պահպանումը մեկանգամյա իրադարձություն կամ մասնավոր բարեփոխումներ չէ, այլ շարունակական պարտավորվածություն»:

**Օգտագործված աղբյուրներ**

1. Կրթական թեստավորման ծառայություն , [www.ets.org](http://www.ets.org)
2. Կրթության վիճակագրական ազգային կենտրոն, [www.nces.ed.gov](http://www.nces.ed.gov)
3. Քանի ակադեմիա, [www.khanacademy.org/sat](http://www.khanacademy.org/sat)
4. Saving Schools, <https://courses.edx.org/courses/course-v1:HarvardX+1368x+2T2017/course/>

---

## Անի ՊՈՂՈՍՅԱՆ

ԳԹԿ քննությունների կազմակերպման բաժնի  
առաջատար մասնագետ

### Մինգապուրի հանրապետության կրթական համակարգը

#### ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Մինգապուրի դպրոցների ուստարին սկսվում է հունվարից: Այն բաղկացած է երկու կիսամյակից: Առաջին կիսամյակը սկսվում է հունվարին և ավարտվում մայիսին, իսկ երկրորդը տևում է հուլիսից նոյեմբեր:

- Նախադպրոցական կրթություն
  - մտուր
  - մանկապարտեզ
- Տարրական դպրոց
  - 1-ին աստիճան (6-7 տ.)
  - 2-րդ աստիճան (7-8 տ.)
  - 3-րդ աստիճան (8-9 տ.)
  - 4-րդ աստիճան (9-10 տ.)
  - 5-րդ աստիճան (10-11 տ.)
  - 6-րդ աստիճան (11-12 տ.)

ԱՎԱՐՏԱԿԱՆ  
ՔՆՆՈՒԹՅՈՒՆ **PSLE**  
(Տարրական դպրոցի  
ավարտական քննություն)

- Միջնակարգ դպրոց
  - 1-ին աստիճան (12-13 տ.)
  - 2-րդ աստիճան (13-14 տ.)
  - 3-րդ աստիճան (14-15 տ.)
  - 4-րդ աստիճան (15-16 տ.)
  - 5-րդ աստիճան (16-17 տ.)

**N, O, A**  
մակարդակների  
ավարտական

- Կրտսեր քոլեջ կամ բուհ

### Տարրական դպրոց

Տարրական կրթությունը բաղկացած է 2 փուլից՝ քառամյա՝ I-ին աստիճանից մինչև IV-րդ աստիճան: Այն անվանվում է ֆունդամենտալ և երկամյա հատուկ :

*Ֆունդամենտալ* ուսուցման ծրագրի մեջ են մտնում հետևյալ առարկաները՝ մայրենի լեզու, անգլերեն, մաթեմատիկա, էթիկա, գեղարվեստական աշխատանք, երաժշտություն և ֆիզկուլտուրա:

*Հատուկ* ուսուցման փուլում, բացի «Մայրենի լեզու», «Անգլերեն» և «Մաթեմատիկա» առարկաներից, աշակերտները ըստ ունակությունների բաժանվում են համապատասխան հոսքերի:

Հատուկ ուսուցման հոսքի մայրենիի և անգլերենի քննությունները բաժանվում են երեք մակարդակների՝ սկսնակ, ստանդարտ և բարձրագույն: Բնագիտական և «Մաթեմատիկա» առարկաներից աշակերտները հանձնում են ստանդարտ և սկսնակ մակարդակների քննություններ, իսկ

մնացած առարկաների քննությունների համար դպրոցին տրվում է քննությունը կազմակերպելու ազատություն, ինչը հնարավորություն է տալիս լավագույնս ցույց տալ ու յուրաքանչյուր աշակերտի ունակությունները:

Տարրական դպրոցն ավարտելուց աշակերտները հանձնում են տարրական դպրոցի ավարտական քննություն (PLSE).  
*Այդ քննության առաջնային խնդիրն է որոշել աշակերտի հետագա տեղը միջնակարգ դպրոցում:*

Միջնակարգ դպրոցի հոսքերը

| Հոսքը  | Ուսման տևողությունը | Ավարտական քննության տեսակը |
|--|---------------------|----------------------------|
| Հատուկ (մայրենի լեզվի խորացված ուսուցում, ցանկության դեպքում աշակերտը կարող է փոխարինել օտար լեզվով) | 4                   | O level                    |
| Էքսպրես (մայրենիի և անգլերենի մակերեսային ուսուցում)   | 4                   | O level                    |
| Ստանդարտ (տեխնիկական առարկաների ուղղվածություն, ճշգրիտ առարկաների խորացված ուսուցում)                | 4                   | N(T) level                 |
| Ստանդարտ (ակադեմիական առարկաների ուսուցում )   | 4 (+1)              | N(A) level<br>O level      |

---

## Միջնակարգ դպրոց

Տարրական դպրոցի ավարտական քննության արդյունքների հիման վրա մասնակիցները բաշխվում են միջնակարգ դպրոցի տարբեր հոսքերում՝ հատուկ, էքսպրես, ստանդարտ (ակադեմիական) կամ ստանդարտ (տեխնիկական):

Հատուկ և էքսպրես հոսքերը 4 տարուց բաղկացած ուսումնական ծրագիր են, որոնք ավարտվում են Օ մակարդակի համար քննություն հանձնելու իրավունք (General Certificate of Education Ordinary-level exam) ստանալով: Այս երկու հոսքերի միջև տարբերությունն այն է, որ հատուկ հոսքի աշակերտները մայրենի լեզուն ուսումնասիրում են ավելի խորացված: Արտասահմանից եկած աշակերտները կարող են ընտրել օտար լեզու (ֆրանսերեն, գերմաներեն կամ ճապոներեն) որպես հավելյալ լեզու կամ մայրենի լեզվի փոխարեն:

Ստանդարտ հոսքը 4 տարի է և ավարտվում է N մակարդակի (Normal-level) համար քննություն հանձնելով: Հնարավոր է նաև ևս 1 տարի շարունակել ուսումը և ստանալ ավելի բարձր՝ Օ մակարդակի համար քննություն հանձնելու իրավունք: Ստանդարտ *տեխնիկական* հոսքի աշակերտները ավելի խորացված են ուսումնասիրում տեխնիկական ուղղվածության առարկաները, իսկ *ակադեմիական* հոսքի աշակերտները խորացված ուսումնասիրում են ակադեմիական առարկաները (օրինակ՝ հաշվապահական հաշվառման հիմունքները): 2004 թվականին Մինգապուրի Կրթության նախարարությունը հայտարարեց, որ ընտրյալ աշակերտները, որոնք սովորում են ստանդարտ հոսքում, կարող են միանգամից Օ մակարդակի համար քննություն հանձնել:



---

Օ մակարդակի քննության առարկաները

*Լեզուներ՝*

- ❖ *մայրենի լեզու (չինարեն, թամիլերեն, մալայերեն)*
- ❖ *մայրենի լեզու խորացված ուսուցում (չինարեն, թամիլերեն, մալայերեն)*
- ❖ *անգլերեն*
- ❖ *ոչ թամիլերեն հնդկական լեզուներ (հինդի, ուրդու և այլն)*
- ❖ *օտար լեզու (ֆրանսերեն, գերմաներեն, ճապոներեն)*

*Հումանիտար գիտություններ՝*

- ❖ *պատմություն*
- ❖ *աշխարհագրություն*
- ❖ *անգլիական գրականություն*
- ❖ *չինական գրականություն*
- ❖ *մալայական գրականություն*
- ❖ *թամիլյան գրականություն*
- ❖ *արվեստ և երաժշտություն*
- ❖ *Մաթեմատիկական և բնագիտական առարկաներ՝*
- ❖ *մաթեմատիկա*
- ❖ *ֆիզիկա և քիմիա*
- ❖ *քիմիա և կենսաբանություն*
- ❖ *կենսաբանություն և ֆիզիկա*
- ❖ *ֆիզիկա*

❖ *քիմիա*

❖ *կենսաբանություն*

|  |     |         |
|--|-----|---------|
| Ինտեգրված (պրոֆեսիոնալ ծրագրի ուսուցում միայն մասնավոր դպրոցների համար | 5-6 | A level |
|--|-----|---------|

Ինտեգրված կրթության ծրագիրը (Integrated Programme, IP) Մինգապուրի մասնավոր դպրոցների աշակերտներին 6 տարի սովորելուց հետո՝ 18 տարեկանում, հնարավորություն է տալիս A մակարդակի քննություն հանձնել առանց O մակարդակի քննություն հանձնելու:

Ինտեգրված կրթության ծրագիրը թույլ է տալիս աշակերտներին չհանձնել O մակարդակի քննություն, քանի որ նրանք ունենում են ավելի շատ ժամանակ գիտելիքի մեծ պաշար կուտակելու: Որպես կանոն, միայն լավագույն աշակերտները (սովորաբար միջնակարգ դպրոցի էքսպրես և հատուկ հոսքերից) հնարավորություն ունեն միանալու ինտեգրված ծրագրին:

N (Normal level) - Նորմալ

O (Ordinary level) - Միջին

A (Advanced level) - Բարձրագույն

O մակարդակի քննության արդյունքից է կախված, թե որտեղ կարող է դիմել աշակերտը: Միջնակարգ կրթությունից հետո աշակերտները ուսումը կարող են շարունակել պոլիտեխնիկական 5 ինստիտուտներում, հասարակական վեց համալսարաններում, որոնցից Մինգապուրի ազգային համալսարանը և Նանյանիի տեխնոլոգիական համալսարանը մտնում են աշխարհի լավագույն 20 համալսարանների ցանկի մեջ: Միջնակարգ դպրոցի էքսպրես և հատուկ հոսքերը ավարտելուց հետո աշակերտները կարող են ընդունվել կրտսեր քոլեջներ, որտեղ ուսուցումը տևում է 2 տարի: Ավարտելուց հետո հանձնում են A մակարդակի քննություն:

---

Ստանդարտ հոսքն ավարտելուց հետո աշակերտը կարող է ընդունվել պոլիտեխնիկական (3 տարի) և համալսարանների տեխնիկական ուղղվածության բաժիններ (1-2 տարի):

Կրտսեր քոլեջ ընդունվելիս գիտելիքների մակարդակը գնահատվում է տարբեր համակարգերով (L1R5, L1B5, L1R2B2 կամ L1R4, L - լեզու, R - նախընտրելի առարկա, B - բարձր միավոր ստացած առարկա): Օրինակ L1R5 համակարգը ունի հետևյալ բաղադրիչները. L1-ը՝ մայրենի կամ անգլերեն, R5-ը՝ պարտադիր 2 բնագիտական /մաթեմատիկա, հումանիտար/բնագիտական/մաթեմատիկա, 1 հումանիտար առարկաներ և 2 ցանկացած այլ նախընտրելի առարկաներ :

Գնահատումն իրականացվում է 9 բալային համակարգով, որտեղ 1-ը գերազանցն է, 9-ը՝ անբավարարը.

A1/A2 - գերազանց

B3/B4 - լավ

C5/C6 – բավարար

D7 – առարկայի փոխադրման նվազագույն միավորը

E8/F9- անբավարար

### A ՄԱԿԱՐԴԱԿԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Համաձայն ուսումնական նոր ծրագրի՝ 2006 թվականի հունվարից ուսումնական առարկաները բաժանվել են 3 կատեգորիաների՝ H1 , H2 և H3: Առաջին կատեգորիայի H1 առարկաները ունեն 1 ակադեմիական միավորի (unit) արժեք, 2-րդ կատեգորիան (H2) 2 ակադեմիական միավորի, իսկ 3-րդը (H3) 1 ակադեմիական միավորի: Դիմորդները պետք է հավաքեն ոչ պակաս, քան 10 ակադեմիական միավոր (3H2+1 H1) և ոչ ավելի, քան 12 ակադեմիական միավոր:

H1 և H2 կատեգորիաները միմյանց լրացնում են: Սովորաբար, նույն առարկան H1 կատեգորիայում երկու անգամ ավելի քիչ նյութ է պարունակում, քան H2 կատեգորիայում: H3 կատեգորիայի

առարկաները համարվում են ավելի պրագմատիկ և զարգացնում են տրամաբանությունը: Այս կատեգորիայի առարկաները բաղկացած են գիտահետազոտական աշխատանքներից, գիտական հոդվածից կամ բուհ-ի կողմից կազմած ծրագրով կատարած աշխատանքից:

Ուսումնական նոր ծրագիրը ուսանողին թույլ է տալիս առարկաները համակցել, այժմ ուսանողը պետք է ընտրի գոնե 1 առարկա, որն իր էությանը կտարբերվի ընտրված մյուս առարկաներից: Օրինակ՝ այն ուսանողները, որոնք ուսումնասիրում են ճշգրիտ գիտություններ, պետք է ընտրեն առնվազն մեկ հումանիտար առարկա, իսկ հումանիտարի ուսանողները՝ առնվազն մեկ ճշգրիտ գիտություն:

### *Ճշգրիտ գիտություններ՝*

- *H1 և H2՝ մաթեմատիկա, կենսաբանություն, քիմիա, ֆիզիկա*
- *H2՝ համակարգչային գիտություններ*

### *Լեզուներ՝*

- *H1՝ չինարեն, մալայերեն, թամիլերեն*
- *H1 և H2՝ ֆրանսերեն, գերմաներեն, ճապոներեն*

### *Հումանիտար գիտություններ՝*

- *H1՝ չինարեն ընդհանուր գիտելիքներ*
- *H1 և H2՝ էկոնոմիկա, աշխարհագրություն, պատմություն, անզլերենով գրականություն, պատմություն, չինական մշակույթը անզլերենով և չինարենով*

*H2՝ չինարեն՝ լեզու և գրականություն, մալայերեն՝ լեզու և գրականություն, թամիլերեն՝ լեզու և գրականություն, թատերական արվեստ, երաժշտություն*

### *Տինանսներ (միայն «Կենտրոնական ինստիտուտների» համար)՝*

- *H2՝ հաշվապահության հիմունքներ, բիզնեսի կառավարում*
- *H1 և H2՝ էկոնոմիկա*

### *H3 կատեգորիայի առարկաները՝*

- գիտահետազոտական աշխատանքներ. պրոտեոմիկա, դեղագործական քիմիա, ժամանակակից ֆիզիկայի հիմունքներ
- գիտահետազոտական ծրագրեր. հումանիտար և սոցիալական գիտությունների և ճշգրիտ գիտությունների ծրագրեր, որոնք առաջարկվում են Մինգապուրի ազգային համալսարանի կողմից
- աշխարհաքաղաքականություն. պատերազմի և խաղաղության աշխարհագրություն՝ այն ուսանողների համար, որոնք ուսումնասիրում են պատմություն և աշխարհագրություն, էկոնոմիկայի կառավարում՝ այն ուսանողների համար, ովքեր ուսումնասիրում են էկոնոմիկա Մինգապուրի ազգային համալսարանի կողմից առաջարկված ծրագրով

Ուսանողը պետք է հանձնի ընդհանուր քննություն կամ «գիտելիքների և հետազոտությունների» թեստ, կամ մայրենի լեզվից H1 կատեգորիայի քննություն: Օ մակարդակի քննության գնահատականը կարող է օգտագործվել H1-ի փոխարեն:



**Singapore Examinations and Assessment Board**

Ավարտական թեստերի կառուցվածքը  
Մինգապուր-Քեմբրիջի կրթության վկայական

| Առարկան    | Քննության տեսակը   | Նկարագրությունը  |
|------------|--|--|
| Մաթեմատիկա | N(A) level<br><br>(Թվաբանություն և հանրահաշիվ, Երկրաչափություն և գծագրություն, վիճակագրություն և հավանականության տեսություն) | <p>Հարցաթերթ 1.</p> <p>Տևողությունը 2 ժամ, 80 առաջադրանք, 50%</p> <p>80-ից 25-ը կարճ պատասխանով առաջադրանքներ: Դիմորդը պետք է բոլոր հարցերին պարտադիր պատասխանի:</p>   |
|            |  | <p>Հարցաթերթ 2.</p> <p>Տևողությունը 2 ժամ, 60 առաջադրանք, 50%</p> <p>Բաղկացած է 2 մասից՝ A և B</p> <ul style="list-style-type: none"> <li>• A մասը պարունակում է տարբեր ծավալի 9-10 հարցեր: Դիմորդը պետք է բոլոր հարցերին պարտադիր պատասխանի:</li> <li>• B մասը պարունակում է 2 հարց, որից դիմորդը պետք է պատասխանի գոնե 1 - ին:</li> </ul> <p>✓ Հարցեր «Երկրաչափություն» և «Գծագրություն», «Վիճակագրություն» և «Հավանականության տեսություն» բաժիններից</p> <p>✓ Յուրաքանչյուր հարց պարունակում է 7-8 առաջադրանք</p> |

| Առարկան    | Քննության տեսակը  | Նկարագրությունը  |
|------------|---|--|
| Մաթեմատիկա | <p>N(T) level</p> <p>(թվաբանություն և հանրահաշիվ, երկրաչափություն և գծագրություն, վիճակագրություն և հավանականության տեսություն)</p> | <p>Հարցաթերթ 1.</p> <p>Տևողությունը 1 ժամ 30 րոպե, 50 առաջադրանք, 50%</p> <p>11- րդից 13 -րդը կարճ հարցեր, որոնք պարունակում են 2-4 առաջադրանք՝ մեծամասամբ թեմայից դուրս: Նաև 2 ընդարձակ հարցեր, 6-8 առաջադրանքով, թեմայի վերաբերյալ: Դիմորդը պետք է պատասխանի հետևյալ թեմաների բոլոր հարցերին՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• թվաբանություն և հանրահաշիվ</li> <li>• երկրաչափություն և գծագրություն</li> <li>• թվաբանություն և հանրահաշիվ, երկրաչափության և գծագրության գործնական կիրառությունը</li> </ul> |

|  |  |  |
|--|--|--|
|  |  | <p><b>Հարցաթերթ 2.</b></p> <p><b>Տևողությունը 1 ժամ 30 րոպե, 50 առաջադրանք, 50%</b></p> <p>11-ից 13-րդը կարճ հարցեր, որոնք պարունակում են 2-4 առաջադրանք՝ մեծամասամբ թեմայից դուրս: Նաև 2 ընդարձակ հարցեր, 6-8 առաջադրանքով, թեմայի վերաբերյալ: Դիմորդը պետք է պատասխանի հետևյալ թեմաների բոլոր հարցերին՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• թվաբանություն և հանրահաշիվ</li> <li>• երկրաչափություն և գծագրություն</li> <li>• թվաբանություն և հանրահաշիվ, երկրաչափության և գծագրության գործնական կիրառությունը</li> </ul> |
|--|--|--|



| Քննական առարկան | Քննության տեսակը   | Նկարագրությունը   |
|-----------------|--|---|
| Անգլերեն        | N(A) level<br>(գրավոր, ըմբռնում, լսումներ, բանավոր հաղորդակցություն) | <p>Հարցաթերթ 1.<br/>Բաղկացած է 3 մասից՝ A, B, C<br/>Տևողությունը 1 ժամ 50 րոպե, 70 առաջադրանք, 35%<br/>A. Համառոտ տեքստում քերականական սխալների ուղղում -10 B. Տրված իրավիճակի նկարագրություն 180-250 բառով- 30 C . 250-400 բառով արձակ շարադրանք՝ տրված 4 թեմաներից մեկով – 30</p> |
|                 |  | <p>Հարցաթերթ 2.<br/>Տևողությունը 1 ժամ 50 րոպե, 50 առաջադրանք, 35%<br/>Բաղկացած է 3 մասից՝ A, B, C<br/>A. պատասխանել Տեքստ 1-ի վերաբերյալ հարցերին- 5<br/>B. բանավոր կամ գրավոր պատասխանել Տեքստ 2-ի հարցերին – 20<br/>C. 80 բառով նկարագրություն 3-րդ տեքստի վերաբերյալ - 25</p>   |
|                 |  | <p>Հարցաթերթ 3.<br/>Տևողությունը 45 րոպե, 30 առաջադրանք, 10%<br/>Բաղկացած է 2 մասից՝ A, B<br/>A. Պատասխանել հարցերին ձայնագրությունը 2 անգամ լսելուց հետո – 24 B. կատարել վարժությունը ձայնագրությունը միայն 1 անգամ լսելուց հետո – 6</p>   |

|  |  |  |
|--|--|--|
|  |  | <p>Հարցաթերթ 4.<br/>Տևողությունը 20 րոպե<br/>(ներառյալ 10 րոպե<br/>նախապատրաստվելու<br/>համար), 30 առաջադրանք,<br/>20%</p> <p>Բաղկացած է 2 մասից A, B<br/>A. Համակարգչի էկրանին<br/>ներկայացված կարճ տեքստի<br/>բարձրաձայն ընթերցում – 10,<br/>B. տեսահոլովակի դիտումից<br/>հետո քննարկում հանձ-<br/>նաժողովի անդամների հետ –<br/>20</p> |
|--|--|--|

| Քննական<br>առարկան | Քն-<br>նության<br>տեսակը                              | Նկարագրությունը  |
|--------------------|---|--|
| Անգլերեն           | N(T) level<br>(գրավոր,<br>լեզվի<br>կիրա-<br>ռում, ըմ- | <p>Հարցաթերթ 1. Բաղկացած է 2<br/>մասից՝ A, B</p> <p>Տևողությունը 1 ժամ 15 րոպե,<br/>60 առաջադրանք, 30%</p> |

|  |  |  |
|--|--|--|
|  | բռնում,<br>լսումներ,<br>բանավոր<br>հաղո-<br>րդակցո-<br>ւթյուն) | A. Լրացնել բաց թողնված<br>հատվածները -10, գրել 80 բառ<br>տրված տեքստից -20 B. Տրված<br>իրավիճակի նկարագրություն<br>180 բառով - 30  |
|  |  | <p>Հարցաթերթ 2.</p> <p>Տևողությունը 1 ժամ 20 րոպե,<br/>80 առաջադրանք, 40%</p> <p>Բաղկացած է 2 մասից՝ A և B</p> <p>A. ուղղել քերականական ս-<br/>խալները - 10, լրացնել<br/>(ավարտել) բանավոր տեքստը -<br/>10, լրացնել բաց թողնված<br/>բառերը, քերականություն – 20<br/>B. պատասխանել տեղեկա-<br/>տվական տեքստի հարցերին –<br/>10 պատասխանել տեսողական<br/>տեղեկատվական տեքստի<br/>հարցերին - 30</p> |
|  |  | <p>Հարցաթերթ 3.</p> <p>Տևողությունը 45 րոպե, 20<br/>առաջադրանք, 10%</p> <p>Ավարտել լսած առաջադրանքը</p>  |

|  |  |  |
|--|--|--|
|  |  | <p>Հարցաթերթ 4.</p> <p>Տևողությունը 20 րոպե (ներառյալ 10 րոպե նախապատրաստվելու համար), 40 առաջադրանք , 20%</p> <p>Բաղկացած է 2 մասից՝ A, B</p> <p>A. Համակարգչի էկրանին ներկայացված կարճ տեքստի բարձրաձայն ընթերցում – 15, B. տեսահոլովակի դիտումից հետո քննարկում հանձնաժողովի անդամների հետ – 25</p> |
|--|--|--|

| Քննական առարկան | Քննության տեսակը   | Նկարագրությունը   |
|-----------------|--|---|
| Անգլերեն        | <p>O level</p> <p>(գրավոր, ըմբռնում, լսումներ, բանավոր հաղորդակցություն)</p> | <p>Հարցաթերթ 1. Բաղկացած է 3 մասից՝ A, B, C</p> <p>Տևողությունը 1 ժամ 50 րոպե, 70 առաջադրանք, 35%</p> <p>A. Համառոտ տեքստում քերականական սխալների ուղղում - 10 B. Տրված իրավիճակի նկարագրություն 250-350 բառով- 30 C. 350- 500 բառով արձակ շարադրանք՝ տրված 4 թեմաներից մեկով –</p> |

|  |  |   |
|--|--|---|
|  |  | 30  |
|  |  | <p><b>Հարցաթերթ 2.</b></p> <p>Տևողությունը 1 ժամ<br/>50 րոպե, 50 առաջադրանք, 35%</p> <p>Բաղկացած է 3 մասից՝ A, B, C</p> <p>A. պատասխանել Տեքստ 1-ի վերաբերյալ հարցերին- 5 B. բանավոր կամ գրավոր պատասխանել Տեքստ 2-ի հարցերին – 20 C. 80 բառով նկարագրություն 3-րդ տեքստի վերաբերյալ - 25</p> |
|  |  | <p><b>Հարցաթերթ 3.</b></p> <p>Տևողությունը 45 րոպե, 30 առաջադրանք, 10%</p> <p>Բաղկացած է 2 մասից՝ A, B</p> <p>A. Պատասխանել հարցերին ձայնագրությունը 2 անգամ</p>  |

|  |  |   |
|--|--|---|
|  |  | <p>լսելուց հետո – 24 B. կատարել վարժությունը ձայնագրությունը միայն 1 անգամ լսելուց հետո- 6</p>  |
|  |  | <p>Հարցաթերթ 4.</p> <p>Տևողությունը 20 րոպե (ներառյալ 10 րոպե նախապատրաստվելու համար), 30 առաջադրանք, 20%</p> <p>Բաղկացած է 2 մասից՝ A, B</p> <p>A. կարճ տեքստի բարձրաձայն ընթերցում – 10,</p> <p>B. քննարկում հանձնաժողովի անդամների հետ վիզուալ պատկերի վերաբերյալ – 20</p> |

---

## Քննական թեստի արդյունքների հաշվարկման սանդղակ

|           |           |
|-----------|-----------|
| <b>A1</b> | ≥ 75%     |
| <b>A2</b> | 74% – 70% |
| <b>B3</b> | 69% – 65% |
| <b>B4</b> | 64% – 60% |
| <b>C5</b> | 59% – 55% |
| <b>C6</b> | 54% – 50% |
| <b>D7</b> | 49% – 45% |
| <b>E8</b> | 44% – 40% |
| <b>F9</b> | ≤ 40%     |

Այսպիսով, այս վերլուծությունը ցույց է տալիս Մինգապուրի Հանրապետության հանրակրթական դպրոցների և դպրոցից բուհ անցման կառուցվածքը: Նրանց ունեցած արդյունքից կարելի է հետևություն անել, որ երեխային դեռ չորրորդ դասարանից իր ունակություններին համապատասխան ուղղորդումը տալիս է պրոֆեսիոնալ մասնագետ դառնալու հնարավորություն:

## Օգտագործված աղբյուրներ

1. Индексы и их использование в статистике , <http://www.hi-edu.ru/e-books/xbook096/01/part-010.htm>
2. Фомина Н.Б., Экспресс-анализ качества образования в классе, 2018 г., <https://www.cposo.ru/modul-msoko>
3. Индексы и характеристики для анализа результатов контрольной работы в МСОКО, [http://cpkimr.ru/Downloads/Informatizatsiia/Inf.%20sistemy/SGO/Instrukcii\\_SGO/MSOK%80%D0%BE%D0%BB%D1%8C%D0%BD%D0%BE%D0%B9%20%D1%80%D0%B0%D0%B1%D0%BE%D1%82%D1%8B%20%D0%B2%20%D0%9C%D0%A1%D0%9E%D0%9A%D0%9E.pdf](http://cpkimr.ru/Downloads/Informatizatsiia/Inf.%20sistemy/SGO/Instrukcii_SGO/MSOK%80%D0%BE%D0%BB%D1%8C%D0%BD%D0%BE%D0%B9%20%D1%80%D0%B0%D0%B1%D0%BE%D1%82%D1%8B%20%D0%B2%20%D0%9C%D0%A1%D0%9E%D0%9A%D0%9E.pdf)
4. Н. А. Антанович, «Индексы как измерительный инструмент в политологии», 2014 г., <https://int.search.myway.com/search/GGmain.jhtml>

---

## <<Հանրակրթություն. գնահատում և թեստավորում>>

### տեղեկատվական - վերլուծական հանդեսում հոդվածներ տպագրելու կարգը

<<Հանրակրթություն. գնահատում և թեստավորում>> հանդեսը հրապարակում է գնահատման և թեստավորման հիմնախնդիրներին վերաբերող տեսական և կիրառական բնույթի հոդվածներ:

Հոդվածները պետք է ներկայացնել հայերեն (ընդունվում են նաև ռուսերեն և անգլերեն), մեկ օրինակով, համակարգչային շարվածքով (Microsoft Word ծրագրով, Sylfaen տառատեսակով և 12 տառաչափով):

Հոդվածի ծավալը չպետք է գերազանցի 15 էջը:

Օգտագործված գրականության հղումները հոդվածի տեքստում տրվում են քառակուսի փակագծերում, եթե մեջբերում է կատարվում, ապա նշվում է համապատասխան էջը, օրինակ՝ [12, էջ 23]:  
Գրականության ցանկը բերվում է հոդվածի վերջում:

Խմբագրությունն ներկայացված նյութերը գրախոսվում են:

Խմբագրությունը հրապարակվող հոդվածների բնագրերը հեղինակներին չի վերադարձնում:

Յուրաքանչյուր հեղինակ խմբագրությունից անվճար կարող է ստանալ ամսագրի 2 օրինակ:

<<Հանրակրթություն. գնահատում և թեստավորում>> հանդեսի նյութերն օգտագործելիս հոդվածագիրը պարտավոր է տալ համապատասխան հղումներ:

Դպրոցներին անվճար առաքվում է մեկ օրինակ, որը պետք է պարտադիր գրանցվի դպրոցական գրադարանում:

## Բովանդակություն



---

## **ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

2019 թ. միասնական քննությունների և բուհերի ընդունելության մրցույթի արդյունքների վերլուծություն ..... 4

2018-2019 ուսումնական տարվա 12-րդ դասարանում սովորողների պետական ավարտական քննությունների արդյունքների վիճակագրական վերլուծություն ..... 56

2018-2019 ուսումնական տարվա 9-րդ դասարանում սովորողների ավարտական քննությունների արդյունքների վիճակագրական վերլուծություն ..... 77

## **ԹԵՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

**Մ. ՀԱԼԱԶՅԱՆ**

9-րդ դասարան. ավարտական քննություն  
(ստուգման վերլուծություն) ..... 114

<<Կենտրոնացված քննությունը զգաստացնում է բոլորին>>  
Հարցազրույց Գնահատման և թեստավորման կենտրոնի  
տնօրենի տեղակալ Կարո Նասիբյանի հետ ..... 122

Ն. ՍՏԵՓԱՆՅԱՆ՝ ..... 131  
Շ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ..... 143  
Շ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ..... 158  
Գ. ԶԱԼՈՒՄՅԱՆ ..... 179  
Ա. ՊՈՂՈՍՅԱՆ ..... 189

Տպագրված է Գնահատման և թեստավորման կենտրոնում:  
Տպաքանակը՝ 1300 օրինակ, 178 էջ:  
Ք. Երևան, Այգեստան 9/4, հեռ. 57.63.37  
[www.atc.am](http://www.atc.am)